


164


8
9-83



Մ. ԳՈՐԿԻ

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Գեղարքունիքի հանրապետության
Գրականության նախարարություն





ԳՐԱԿԱՆ ԶԲԵՐԱԴԱՆՈՒԹՅԱՆ
ԾԵՐԵՂԱՆ 1934

54



164

ԴՆ՝ 8691, Գատ. 1313, Հրատ. 4024, Տիրած 3000
Գեորգիայի տպարան, Բեռլին, 1900



Աշխատանքային այն պրոցեսները
դերը, վորոնք ուղղահայաց կենդա-
նուն վերածեցին մարդու և ստեղծե-
ցին կուլտուրայի հիմունքները, յեր-
բեք չի հետադուրեւ այնքան բազմա-
կողմանի ու խորը կերպով, ինչպես
արժանի յե նա դրան։ Դա բնական է,
վորովհետեւ այդպիսի հետադուրումը
չի համապատասխանում աշխատան-
քը շահագործողների շահերին, վո-
րոնք մասսաների եներգիան, վոր-
պես ինչ վոր հումք, վերածելով
փողի, չեյին կարող, իհարկե, տվյալ
դեպքում բարձրացնել հումքի ար-
ժեքը։ Սկսած ամենահին ժամանակ-
ներից, յերբ մարդիկ բաժանվում և-
յին ստրկատերերի և ստրուկների,
աշխատավոր մասսաների կենդանի
ուժն ոգտագործում եյին և ոգտա-

գործում են այնպես, ինչպես այժմ
 ոգտագործում ենք մենք գետերի
 հոսանքի մեխանիկական ուժը: Կուլ-
 տուրայի պատմաբանները նախնական
 մարդկանց պատկերում եյին, վորպես
 փիլիսոփայող իդեալիստներ և միս-
 տիկներ, վորպես աստվածների ստեղ-
 ծողներ, «կյանքի իմաստը» վորո-
 նողներ: Նախնական մարդուն վերա-
 դրվում եր Յակով Բեմի տրամա-
 դուրսյունը, մի կոշկակարի, վորն
 ապրում եր 16-րդ դարի վերջերին,
 17-րդ դարի սկզբներին և, ի միջի
 այլոց, զբաղվում եր բուրժուական
 միստիկներին շատ սիրելի փիլիսո-
 փայաթյամբ: Բեմը սովորեցնում եր,
 վոր «մարդը պետք ե խորհրդածի
 յերկնքի մասին, աստղերի ու տա-
 րերքի մասին և այն արարածների
 մասին, վորոնք առաջ են յեկել նը-
 րանցից, ինչպես և սուրբ հրեշտակ-
 ների ու դեվի մասին, յերկնքի ու
 դժոխքի մասին»:

Դուք գիտեք, վոր նախնական կուլ-

տուրայի պատմության համար նյութ
 են ծառայել հնագիտության տվյալ-
 ները և կրոնական հին պաշտամունք-
 ների արտացոլումը, իսկ այդ մնա-
 ցորդները լուսաբանվում և դիտվում
 եյին քրիստոնեական-փիլիսոփայա-
 կան դավանանքի ազդեցությամբ, վո-
 րը խորթ չեր նաև աթեիստ պատմա-
 բաններին: Այդ ազդեցությունը կա-
 տարելապես պարզորոշ ե Սպենսերի
 գերորդանական զարգացման տեսու-
 թյան մեջ, և վոչ միայն նրա մոտ,
 նա խորթ չե նաև Ֆրեդերին և մյուս
 բոլորին: Սակայն նախնական ու հին
 կուլտուրայի պատմաբաններից վոչ-
 վոք չի ոգտագործել Փոլկլոբի տըվ-
 յալները, ժողովրդի բանավոր ստեղ-
 ծագործությունը, դիցաբանության
 ցուցումները, վոր ընդհանուր առ-
 մամբ հանդիսանում են բնության
 յերևույթների, բնության դեմ մըղ-
 վող պայքարի արտացոլումը և սո-
 ցիալական կյանքի արտացոլումը գե-

դարվեստական լայն ընդհանրացումներով:

Շատ դժվար է պատկերացնել իբրև թուր ուժերը կյանքի պայքարի վրա մխոզ յերկտանի կենդանուն, վորպես աշխատանքի պրոցեսներից, ցեղի ու տոհմի հարցերից վերացակա-նորեն մտածող: Դժվար է պատկերացնել նմանուիլ կանախն դադանի մորթով ու վոտաբորելի, վորպես «իբերն իրենց մեջ»-ի մասին խորհրդածող: Վերացականորեն մտածում եր ավելի ուշ ժամանակվա մարդը, այն միայնակ մարդը, վորի մասին Արիստոտելը «քաղաքականության» մեջ ասել է՝ «Մարդը հասարակությունից դուրս կամ աստված է, կամ դադան»: Նա դադան լինելով, յերբեմն հարկադրել է ճանաչել իրեն վորպես աստված, բայց վորպես դադան նյութ է ծառայել բազմաթիվ առասպելներ ստեղծելու դադանանըման մարդկանց մասին, այնպես, ինչպես հեծնելու ձին յուրացրած ա-

ռաջին մարդիկ հիմք են տվել կենտավրոսների դիցաբանությանը:

Նախնական կուլտուրայի պատմաբանները բոլորովին լուության եյին մատնում այն մատերիալիստական մտածողության միանգամայն պարզ նշանները, վորն անխուսափելիորեն ծնունդ եր առնում աշխատանքի պրոցեսներից և հին մարդկանց սոցիալական կյանքի յերեւոյթների ամբողջ դումարից: Այդ նշանները մեզ հասել են հեքիաթների ու առասպելների ձևով, վորոնց մեջ մենք լսում ենք կենդանիներին ընտելացնելու աշխատանքի արձագանքները, բուժիչ խոտերի հայտնագործման, աշխատանքի գործիքների դյուտարարության արձագանքները: Արդեն ամենահին ժամանակներում մարդիկ յերազում եյին ոգում թռչելու հնարավորության մասին. այդ են վկայում մեզ Փաեստոնի, Դեդալի և նրա վորդի Իկարի առասպելները, ինչպես և «Ինքնաթիռ գորգի» հեքիաթը: Յերազում

էյին յերկը վրա յերթեկուծ յունն
արազացներու մասին՝ «արազացիաց
կոչիկներին» հեքիաթը, — յուրացրին
ձին, գետով նրա հոսանքից ասկելի
սրազ լողալու ցանկությունը լերեց
թիերի և առազաստների դյուտին,
թշնամուն ու գազանին հեռվից սպա-
նելու ձգտումը դրդապատճառ հան-
դիսացալ պարսատիկի, նետի ու ա-
ղեղի հայտնագործմանը: Մտածում
էյին մի գիշերվա մեջ մանել ու գոր-
ծել հսկայական քանակությամբ կը-
տորեղեն, յերազում էյին մի գիշեր-
վա մեջ լալ բնակարան, նույնիսկ
«պալատ», այսինքն՝ թշնամու դեմ
ամրացված մի բնակարան կառուցելու
հնարավորության մասին, ստեղծե-
ցին ճախարակը, աշխատանքի այգ
ամենահին գործիքներից մեկը,
պրիմիտիվ ձեռքի դաղեյահ՝ գործե-
լու համար, և ստեղծեցին վասիլի-
սա փերիմաստի հեքիաթը: Կարելի
յե բերել մի քանի տասնյակ՝ ապա-
ցույցներ ևս՝ հաստատելու համար

հին հեքիաթների ու գիցարանու
թյունների նպատակահարմարությու-
նը, տասնյակ ապացույցներ՝ հառ-
տատելու համար նախնական մարդ-
կանց պատկերավոր հիպոտե-
զիկ, սակայն արդեն՝ տեխնոլոգիկ
մտածելակերպի հեռատեսությունը,
մի մտածելակերպ, վորն արդեն
բարձրացրել էր մեղ ժամանակակից
այնպիսի հիպոտեզների աստիճանին,
ինչպիսին է իր առանցքի շուրջը
յերկրի պտտվելու ուժի ոգտագոր-
ծումը կամ բեվեռային սառույցների
վոջնչացումը: Հին ժամանակների
բոլոր առասպելներն ու հեքիաթները,
կարծես, պսակվում են Տանտալին վե-
րաբերյալ առասպելով: Տան-
տալը մինչև կոկորդը կանդ-
նած է ջրում, նրան տան-
ջում է ծարավը, սակայն նա չի կա-
րող հագեցնել իր ծարավը, — դա հին
մարդն է արտաքին աշխարհի այն
յերևույթների մեջ, վորոնք չի ճանա-
չել նա:

Յես չեմ տարակուսում, վոր Հին
հեքիաթները, առասպելներն ու ա-
վանդությունները ձեզ հայտնի յեն,
սակայն շատ կուզեյի, վոր նրանց
հիմնական իմաստն ամօելի խորը
ըմբռնվեր: Այդ իմաստն հանգում է
Հին աշխատող մարդկանց մի ձգտմա-
նը՝ թեթևացնել իրենց աշխատանքը,
բարձրացնել նրա աջդյունաբերու-
թյունը, զինվել քառոտանի և յերկո-
տանի թշնամիների դեմ, ինչպես և
խոսքի ուժով, «հմայության» ու
«թուլչության» պրիոմներով, ազդել
բնության տարերային, մարդկանց
թշնամի յերևույթների վրա: Վեր-
ջինս առանձնապես կարևոր է վորսով-
հետև ցույց է տալիս, թե վորքան
խորապես եյին համատարած մարդիկ
իրենց խոսքի ուժին, իսկ այդ հա-
վատը բացատրվում է խոսքի բացա-
հայտ և կատարելապես իրական ո-
գուտով, այն խոսքի, վորը կապմա-
կերպում է մարդկանց սոցիալա-
կան փոխհարաբերությունները և

աշխատանքային պրոցեսները: Մար-
դիկ թուլչությամբ փորձում եյին
ներդործել նույնիսկ աստվածների
վրա: Դա միանգամայն բնական է,
վորովհետև Հին ժամանակվա բոլոր
աստվածներն ապրում եյին յերկրի
յերեսին, մարդակերպ եյին և վար-
վում եյին այնպես, ինչպես մարդիկ՝
բարյացակամ՝ հնապանդների հանդեպ,
թշնամի անհնազանդների հանդեպ,
մարդկանց նման նախանձոտ եյին,
վրեժխնդիր ու փառասեր: Աստվածնե-
րի մարդակերպ լինելու փաստն ա-
պացույցներից մեկն է հոգուտ այն
կարծիքի, վոր կրոնական մտածողու-
թյունն առաջ է յեկել վաղ թե բնու-
թյան յերևույթները զննելուց, այլ
սոցիալական պայքարի հողի վրա:
Միանգամայն թուլատրելի յե մտա-
ծել, վոր աստվածներ կերտելու հա-
մար հումք են ծառայել Հին ժամա-
նակների «անվանի» մարդիկ՝ Հեթ-
կուլեսը, «աշխատանքի հերոսը»,
«ամեն բանի վարպետը», վերջիվեր-

ըո բարձրացվել է Ուխտագիրս, աստ-
 վածներին մեջ: Նախնական մարդկանց
 պատկերացումով, աստված մի վերա-
 ցական գաղափար, մի Փանտաստիկ
 էյակ չի յեղել, այլ միանգամայն լի-
 րական մի դեմք՝ զինված աշխատան-
 քի այս կամ այն գործիքով: Աստված
 յեղել է այս կամ այն արհեստի վար-
 պետը, մարդկանց ուսուցիչը և աշ-
 խատակիցը: Աստված հանդիսանում
 էր աշխատանքի հաջողության գեղար-
 վեստական ընդհանրացումը, և աշխա-
 տավոր մասսաների «կրոնական» մը-
 տածողությունը պետք է չակերտների
 մեջ վերցնել, վորովհետև դա գուտ
 գեղարվեստական ստեղծագործու-
 թյուն էր: Իդեալականացնելով մարդ-
 կանց ընդունակությունները և, կար-
 ծես, նախազգայով նրանց հղորդար-
 դացումը, դիցաբանական ստեղծա-
 գործությունը հիմնականում ռես-
 լիստական էր: Հին Փանտաղիայի ա-
 մեն մի թռիչքի մեջ կարելի չէ հեշ-
 տությամբ յերևան բերել նրա դրդա-

պատճառը, և միշտ այդ դրդապատ-
 ճառն է մարդկանց ձգտումը՝ թեթե-
 վացնել իրենց աշխատանքը: Կատա-
 րելապես պարզ է, վոր այդ ձգտու-
 մը էյանքի մեջ են մտցրել Փիղիկա-
 կան աշխատանքի մարդիկ: Յեվ կա-
 տարելապես պարզ է, վոր աստված
 յերևան չեր դա ու գոյություն չեր
 ունենա այնքան յերկար ժամանակ
 աշխատանքի մարդկանց կենցաղում,
 յեթե նա վերին աստիճանի ոգտակար
 չլիներ յերկրային տիրակալներին,
 աշխատանքի շահագործիչներին:

Մեր յերկրում աստված այնքան
 արագորեն ու հեշտությամբ գործա-
 ծությունից ընկնում է հատկապես
 այն պատճառով, վոր անհետացել է
 նրա գոյության պատճառը՝ մարդու
 լիխանությունը մարդու վրա արդա-
 րացնելու անհրաժեշտությունը, վո-
 րովհետև մարդը մարդուն պետք է լի-
 նի միայն գործակից, բարեկամ, զի-
 նակից, ուսուցիչ և վոչ թե նրա բա-
 նականության ու կամքի տիրակալը:



Բայց վորքան ավելի հզոր ու տիրական եր դառնում ստրկատերը, այնքան ավելի վեր եյին բարձրանում դեպի յերկինք աստվածները, իսկ մասսայում հանդես յեկավ աստվածամարտությունը, վորը մարմնավորվել եր Պրոմեթեոսի կերպարանքում, հստոնական Կալեվիլի և մյուս հերոսների կերպարանքում, վորոնք աստրո-ծու մեջ տեսնում եյին իրենց թշնամի տիրակալների տիրակալին:

Մինչքրիստոնեական, հեթանոսական Փոլիկորը պարզ արտահայտված նշաններ չի պահպանել, թե դոյություն ե ունեցել մտածողություն «եյությունների» մասին, «բոլոր յերևույթների նախապատճառի» մասին, «իբերն իր մեջ»-ի մասին և ընդհանրապես այն մտածողության նշանները, վորը վորպես սիստեմ կազմակերպել եր մեր թվականությունից չորս դար առաջ «Ատտիկայի մարգարեն»՝ Պլատոնը, աշխատակի պրոցեսներից, կենցաղի պայման-

ներից ու յերևույթներից վերցված աշխարհարմրոման հիմնադիրը: Հայտնի յե, վոր յեկեղեցին Պատոնին ճանաչեց վորպես քրիստոնեյության նախակարապետը: Հայտնի յե, վոր յեկեղեցին հենց սկզբից համառորեն պայքար եր մղում «հեթանոսության մնացորդներին» դեմ, իսկ այդ մնացորդները հանդիսանում են աշխատանքային, մատերիալիստական աշխարհաւարմրոման արտացոլումները: Հայտնի յե, թե հենց վոր Ֆեոդալները սկսեցին զգալ բուրժուազիայի ուժը, հրապարակ յեկավ յեպիսկոպոս Բերկլեյի իդեալիստական փիլիսոփայությունը, վորի ռեակցիոն նշանակությունը լուսաբանել ե Վ. Ի. Լենինը՝ իդեալիզմի դեմ ուղղած իր մարտական գրքում: Հայտնի յե, վոր Փրանսիական հեղափոխության նախորդակին, տասնութերորդ դարի վերջերին, բուրժուազիան ոգտագործեց մատերիալիստական միտքը Ֆեոդալիզմի և նրան ներշնչող կրոնի

դեմ պայքարելու համար, սակայն հաղթելով իր դասակարգային թշնամուն և յերկյուղով համակված նոր թշնամու՝ պրոլետարիատի հանդեպ, իսկույն վերադարձավ իդեալիզմի աշխարհահայեցողությանը և յեկեղեցու պաշտպանության տակ:

Ավելի կամ պակաս յերկյուղով զգալով աշխատավոր ժողովրդի մասսաների վրա իր ունեցած իշխանության ապօրինությունն ու անկայունությունը, բուրժուազիան 19-րդ դարի ընթացքում փորձում եր արդարացնել իր դոյությունը կրիտիցիզմի, պոզիտիվիզմի, ռացիոնալիզմի, պրագմատիզմի փիլիսոփայությամբ և այլն, փորձեր անելով խեղաթյուրելու գոտ մատերիալիստական այն միաբեր, վորը բղիում եր աշխատանքի պրոցեսներից: Այդ փորձերը մեկը մյուսի հետեից յերևան եյին բերում աշխրահը «բացատրելու» նրանց անգորությունը, և 20-րդ դարում նորից ընդունվեց, վոր փիլիսոփայական

մտքի առաջնորդն է իդեալիստ Ռեյդսոնը, վորի ուսմունքը, ի դեպ, «նըպաստավոր է կաթոլիկ կրոնի համար»: Յեթե հետ դնալու անհրաժեշտության այդ վորոշակի ճանաչմանն ալեւացնենք բուրժուազիայի ներկայիս վողբերը տեխնիկայի անգոտս պ աճման կորստաբեր նշանակության մասին, այն տեխնիկայի, վորը ստեղծել է կապիտալիստների ֆանտաստիկ հարստությունները, — մենք միանգամայն պարզորոշ պատկերացում կստանանք բուրժուազիայի ինտելեկտուալ աղքատացման ատիճանի մասին և կըմբռնենք, վոր անհրաժեշտ է վոչնչացնել նրան, վոր պես պատմական մի մնացորդ, վորը քայքայվելով, իր նեխման դիաթույնով, թունավորում է աշխարհը: Ինտելեկտուալ աղքատացման պատճառը միշտ յեղել է իրականության յերևույթների հիմնական իմաստը ճանաչելուց խուսափելը՝ կյանքից փախչելը, նրանից վախենա-

լուց, կամ վորպէս հետեանք սոցիա-
լական այն անտարբերութեան, վորն
առաջ ե բերել կապիտալիստական
պետութեան ամենագոհելի ու դադ-
րելի անարխիզմը:



Լիկատար հիմք կա հույս ունենա-
լու, վոր յերբ կուտուրայի պատ-
մութիւնը գրեն մարքսիստները,
մենք կհամոզվենք, վոր բուրժուա-
զիայի դերը կուտուրայի ստեղծա-
գործութեան պրոցեսում շատ ե չա-
փազանցված. իսկ գրականութեան
ասպարիզում առանձնապէս, և ավելի
չափ՝ նկարչութեան բնագաւառում,
վորտեղ բուրժուազիան միշտ յեղել
ե աշխատանք տվող և դրանով իսկ
որենադիր ե հանդիսացել: Բուրժու-
ազիան ինքն իր մեջ ձգողութիւնն չի
ունեցել և չունի դեպի կուլտուրայի
ստեղծագործումը, յետե այդ ստեղ-
ծագործումը ավելի լայն հասկա-

նանք, քան սոսկ արտաքին նյութա-
կան էկոնոմիային հարմարութիւննե-
րի անընդհատ զարգացումը և շուրջու-
թեան զարգացումը: Կապիտալիզմի
կուլտուրան վոչ այլ ինչ ե, յետե
վոչ պրիմիտիւնների մի սխառմ՝ Փիզի-
կոպէս ու բարոյապէս ընդարձակե-
լու և ամրացնելու բուրժուազիայի
իշխանութիւնն աշխարհի վրա, մարդ-
կանց, յերկրի գանձերի. բնութեան
ենեւրդիաների վրա: Բուրժուազիան
կուլտուրայի զարգացման պրոցեսի
իմաստը յերբեք չի բմբռնել, վորպէս
ամբողջ մարդկութեան մասնայի ահ-
ման անհրաժեշտութիւն: Հայտնի
յե, վոր բուրժուական տնտեսական-
բաղադրականութեան պատճառով,
վորպէս պետութիւնն կաղմակերպ-
ված ամեն մի հարեան ազդ թշնամի
եր, իսկ թույլ կաղմակերպված ցե-
ղերը և մանավանդ գունամորթները
բուրժուազիային ծառայել են վոր-
պէս ստրուկներ, լինելով ավելի ի-

րավազուրկ, քան նրա սեփական
սպիտակամորթ սարուկները:

Գյուղացիներից ու բանվորներից
խլվեց կրթություն ստանալու իրա-
վունքը, կյանքը ճանաչելու, նրա
պայմանները փոխելու, աշխատանքա-
յին պայմանները թեթեւացնելու,
կամքն ու բանականությունը դար-
գացնելու իրավունքը: Դպրոցներում
դաստիարակվել և դաստիարակվում
են միմիայն կապիտալիզմի հլու-հը-
նադանդ սպասավորները, վորոնք հա-
վատում են նրա անսասանությանը և
որինականությանը: «Ժողովրդի կրթ-
թության» մասին խոսում եյին, գը-
րում եյին, նույնիսկ պարծենում ե-
յին գրագիտության հաջողություննե-
րով, բայց իրոք պառակտում եյին
աշխատավոր ժողովրդին, ներչնչելով
նրան ցեղերի, ազգերի ու կրոնի ան-
հաշտ տարբերության գաղափարնե-
րը: Այդ քարոզով ե արդարացվում
գաղութային տմարդի քաղաքակա-
նությունը, վորը զնալով ավելի ու

ավելի մեծ ասպարեղ և տալիս հարս-
տանալու անիմաստ կրքին, խանութ-
պանների ապուշ ազահությանը: Այդ
քարոզին և ծառայել բուրժուական
գիտությունը, վորը չի խորչել նվաս-
տանալ մինչև այն աստիճան, վոր
պնդել և, թե արիական ցեղի մարդ-
կանց բացասական վերաբերմունքը
մյուս բոլոր մարդկանց, «որդանա-
պես աճել և ամբողջ ժողովրդի մե-
տաֆիզիկ գործունեյությունից», թե-
պետ կատարելապես ակներև և, վոր,
յեթե «ամբողջ ժողովուրդը» վարակ-
վել և ամոթալի կենդանական թշնա-
մությամբ դեպի գունամորթ ցեղերը
կամ սեմիտները, այդ վարակը պատ-
վաստվել և բուրժուազիայի «հրով
ու սրով» առաջ տարած միանգա-
մայն ունալ ֆիզիկական ու ամենա-
ստոր գործունեյությամբ: Յեթե վեր-
հիշենք, վոր քրիստոնեական յեկեղե-
ցին այդ գործունեյությունը դարձ-
րել և սիրառատ աստծու վորդու տան-
ջանքի խորհրդանշանը, ապա ավելի

դղվելի անկհայտությամբ յերևան
կգա դրան չարագուշակ հումորը: Ի-
դեպ՝ «աստծու վորդի» Գրիտառոսն
այն միակ «դրական տիպն» է, վոր
ստեղծել է յեկեղեցական դրակա-
նությունը, և կյանքի բոլոր հակա-
սություններն անհաջող հաշտեցնողի
այդ տիպով առանձնապես ցայտուն
կերպով ցույց է տրված յեկե-
ղեցական դրականության ստեղծա-
վործական անդորությունը:

Տեխնիկական ու գիտական դյու-
տերի պատմությունը հարուստ է
այն փաստերով, վորոնք ցույց են տա-
լիս բուրժուազիայի դիմադրությու-
նը նույնիսկ տեխնիկական կուրտու-
րայի աճմանը: Այդպիսի դիմադրու-
թյան փաստերը հանրաժանութ են,
ինչպես և հայտնի յե դրա պատճառը՝
կենդանի բանվորական ուժի եժա-
նությունը: Մեզ կասեն՝ այնու-
հանդերձ, տեխնիկան աճում էր և
հասել է զգալի բարձրության: Դա
անվիճելի յե: Բայց դա բացատրվում

է նրանով, վոր տեխնիկան, կար-
ծես, ինքն է նախադուշակում ու ներ-
շնչում մարդուն, թե հնարավոր ու
անհրաժեշտ է նրա հետագա աճումը:

Հարկավ, յես չեմ ժխտի, վոր ժա-
մանակին, որինակ՝ Փեոդալիովի նը-
կատմամբ, բուրժուազիան հանդիսա-
ցել է հեղափոխական ուժ, և նուա-
սել է նյութական կուրտուրայի աճ-
մանը, անխուսափելիորեն գոհելով
այդ աճմանը բանվորական մասսանե-
րի կյանքի շահերը և ուժերը: Սա-
կայն Ֆուլտոնի դեպքը մեզ ցույց է
տալիս, վոր Ֆրանսիայի բուրժուա-
զիան նույնիսկ հաղթանակ տանելուց
հետո, իսկույն չի գնահատել շոգե-
լարժ նավերի նշանակությունը՝ առե-
տրի զարգացման ու ինքնապաշտպա-
նության համար: Իսկ դա այն դեպ-
քերից մեկն է, վորը վկայում է քաղ-
քենիության պահպանողականությու-
նը: Մենք պետք է յուրացնենք, վոր
այդ պահպանողականությունը, թաղ-
ցնելով իր մեջ այն հողատարությու-

նը, վորը ցույց ե տալիս բուրժուա-
 վիան իր իշխանությունն աշխարհիս
 վրա ամբացնելու ու ուղաշտպանելու
 համար, ամեն կերպ սահմանափա-
 կում եր աշխատավոր ժողովրդի մտա
 վոր աճման հնարավորությունները,
 բայց վերջին հաշվով, այնուամենայ-
 նիվ, հանդեց նրան, վոր աշխարհում
 հրապարակ յեկավ նոր ուժ՝
 պրոլետարիատը և այդ պրոլետա-
 րիատն արդեն ստեղծել ե մի պե-
 տություն, վորտեղ մասսաների մը-
 տավոր աճումը չի սահմանափակ-
 վում: Կա միայն մի բնագավառ, վոր-
 տեղ բուրժուազիան տեխնիկական
 բոլոր նորմուծումները ընդունել ե
 առանց առարկության ու անհա-
 պաղ՝ դա մարդկանց վոչնչացնելու
 զենքերի արտադրությունն ե: Կար-
 դեմ, դեռ վոչվոք չի նշել այն ազդե-
 ցությունը, վորն ունի բուրժուազիա-
 յի ինքնապաշտպանության զենքերի
 արտադրությունը մետաղ մշակող ար-

դյունաբերության տեխնիկայի զար-
 գացման ընդհանուր ընթացքի վրա:



Մարդկանց սոցիալական-կուլտու-
 րական աճման պրոցեսը նորմալ կեր-
 պով ե զարգանում միմիայն: այն ժա-
 մանակ, յերբ ձեռները սովորեցնում
 են դիտին, ապա խելոքացած գլուխը
 սովորեցնում ե ձեռքերին, խի խելոք
 ձեռքերը դարձյալ և արդեն ավելի ու-
 ժեղ թափով նպաստում են ուղեղի
 զարգացմանը: Աշխատանքի մարդ-
 կանց կուլտուրական զարգացման այդ
 նորմալ պրոցեսը հին ժամանակնե-
 րում ընդհատվել եր ձեզ հայտնի
 պատճառներով: Գլուխն անջատվեց
 ձեռքերից, միտքը յերկրից: Գործիչ-
 ների մասսայում առաջ յեկան խոր-
 հըրդածողներ, վորոնք աշխարհն ու
 մտքի աճումը բացատրում են վերա-
 ցականորեն, անկախ աշխատանքի
 պրոցեսներից, վորոնք փոխում են
 աշխարհը, համաձայն մարդկանց շա-

հերին ու նպատակներին: Հալանա-
բար, սկզբում նրանք ծառայել են
«անվանի մարդիւ» , աշխատանքի հե-
րոսներ, վորպիսիք տեսնում ենք մեր
որերում, մեր յերկրում: Ապա նը-
րանց միջավայրում ծնունդ ե առ-
նում սոցիալական բոլոր դժբախտու-
թյունների աղբյուրը՝ շատերի վրա
իշխելու գայթակղությունը, ուրիշի
բանվորական ուժի հաշվին թեթև
կյանք վարելու ձգտումը և այլանդա-
կորեն բարձր պատկերացումն իր ան-
հատական ուժի մասին, մի պատկե-
րացում, վորն սկզբում սնունդ եր
ստանում տվյալ միավորի բացառիկ
ունակությունների ճանաչումից, թե-
պետ այդ ունակությունները հանդի-
սանում եյին միայն բանվորական կո-
լեկտիվի՝ ցեղի, տոհմի աշխատանքա-
յին նվաճումների խառցումը, արտա-
ցումը: Կուլտուրայի պատմաբան-
ները աշխատանքի ու մտածողության
խզումը վերադրում են նախնական

մարդկանց ամբողջ մասսային և նը-
րանց կողմից ինդիվիդուալիտներ
դաստիարակվելը համարում են նը-
րանց մատուցած ծառայությունը,
վորպես դրական բնույթ կրող յե-
րևույթ: Գրականության պատմու-
թյունն ինդիվիդուալիզմի զարգաց-
ման պատմությունը տվել ե հիանալի
լիակատարությամբ և պարզորոշու-
թյամբ: Ընկերներ, յես կրկին ձեր
ուշադրությունն եմ հրավիրում այն
փաստի վրա, վոր հերոսների ամենից
փաստի վրա, վոր հերոսների ամենից
ավելի խորը ու պայծառ, գեղար-
վեստականորեն կատարյալ ափսոս-
սանք ե Փոլկորը, աշխատավոր
ժողովրդի բանավոր ստեղծագործու-
թյունը: Այնպիսի պատկերների կա-
տարելությունը, ինչպիսին ե Հերկու-
լեսը, Պրոմեթեոսը, Միկուլա Սելյա-
նինովիչը, Սվյատոգորը, ապա դու-
սոր Ֆաուստը, Վասիլևս Գերիմա-
սը, իրոնիկ հաջողակ Իվան Հիմարը
և վերջապես Պետրուշկան, վորը

հաղթել ե բռնկին, տերտերին, վոս-
տիկանին, սատանային և նույնիսկ
մահը, — դրանք բոլորն ել պատկեր-
ներ են, վորոնց ստեղծման մեջ ներ-
դաշնակորեն զուգակցվել են ռացիոն
և ինկվիրիցիան, միտքն ու զգաց-
մունքը: Այդպիսի զուգակցումը հնա-
րավոր ե միմիայն այն դեպքում,
յերբ ստեղծողն անմիջականորեն մաս-
նակցում ե իրականության ստեծա-
գործման աշխատանքին, կյանքի նո-
րացման պայքարին:

Շատ կարևոր ե մատնանշել, վոր
Փոլկլորին կատարելապես խորթ ե
հոռետեսությունը, չնայած այն փաս-
տին, վոր Փոլկլորը ստեղծողները
ծանր կյանք են ունեցել և նրանց
տանջալից ստրկական աշխատանքը
իմաստազուրկ են դարձրել շահագոր-
ծիչները, իսկ անձնական կյանքը յե-
ղել ե իրավազուրկ ու անպաշտպան:
Սակայն, չնայած այդ բոլորին, կոլեկ-
տիվին հատուկ ե յեղել անմահության

գիտակցությունը և այն համոզմուն-
քը, թե նա կհաղթանակի իրեն թշնա-
մի բոլոր ուժերը: Ֆոլկլորի հերոս—
«հիմարը», վորին արհամարհում են
նույնիսկ հայրն ու յեղբայրները,
միշտ ավելի խելոք ե դուրս յեկել,
միշտ հաղթել ե կյանքի բոլոր արհա-
վիրքներն այնպես, ինչպես հաղթում
ե դրանք նաև Վասիլիսա Գերիմաս-
տը:

Իսկ յեթե յերբեմն Փոլկլորում հըն-
չել են անհուսալիության ու տարա-
կուսանքի նոտաներ, յերկրային դո-
լության իմաստի նկատմամբ, — այդ
նոտաներն ակնհայտորեն ներշնչվել
են քրիստոնեական յեկեղեցու յերկու
հաղար տարվա հոռետեսության քա-
րոզով և մակաբույժ մանր-բուրժուա-
զիայի տգիտության սկեպտիցիզմով,
ծանր բուրժուազիա, վորը գոյու-
թյուն ե պահպանում կապիտալի կլ-
ռանի և աշխատավոր ժողովրդի սալի
միջև: Ֆոլկլորի նշանակությունն ա-

ռանձնապես ցայտուն կերպով լուսաբանվում է, յերբ մենք, աշխատանքի հաջողությունների վրա հիմնված նրա ֆանտաստիկան համեմատում ենք յեկեղեցական «սրբերի կենսադրության», զրականության ծանր, անշնորհ ֆանտաստիկայի և ասպետական նորմաների խղճուկ ֆանտաստիկայի հետ:

Եպոսը և ասպետական ուժանքը ֆեոդալական աղնականության ստեղծագործությունն է, նրա հերոսն և նվաճողը: Լավ հայտնի յե, վոր ֆեոդալական զրականության ազդեցությունը յերբեք առանձնապես զգալի չի յեղել:

Բուրժուական զրականությունը սկսվում է զեռ հին ժամանակներից, յեղիպտական «Գողի հեքիաթ»-ով, այդ հեքիաթը շարունակում են հույները, հռոմեացիք, նա ասպետության քայքայման եպոխտում հրապարակ է գալիս փոխարինելու

ասպետական ուժանք: Դա իսկական բուրժուական զրականությունն է, և նրա գլխավոր հերոսը մի խաբերայե, գող, ապա՝ լրտես և զարձյալ գող, ասկայն արդեն «ջենտլմեն գող»:

Սկսած 15-րդ դարի վերջերին ստեղծված «Տիլ Ուլենշպիգելի» պատկերից, 17-րդ դարի «Միմալիցիս-սիմուսի» պատկերից, Սմոլետի և Ֆիլդինգի հերոսներ «Լազարիլյո Տորմես-ռացու» և «Ժիլ-բլալի» պատկերներից, մինչև Մոպսանի «Միրելի բարեկամը», մինչև Լյուպենի «Արսենը», մինչև մեր որերի Յեվրոպայի «Ղետեկտիվ» զրականության հերոսները— մենք կարող ենք հաշվել հազարավոր գրքեր, վորոնց հերոսներն են խորդախները, գողերը, մարդասպաններն ու քրեական վոստիկանության գործակալները: Հենց դա յե իսկական բուրժուական զրականությունը, վորն առանձնապես ցայտուն

կերպով արտացոլում է նրա սպառնալիցաների բուն ճաշակը, չափերն ու դործնական «մորալը»: «Ձկա չարիք առանց բարիքի» ամեն տեսակ գոհակությամբ, ներառյալ նաև քաղքենիական «առողջ մտքի» գոհակությամբ, առատորեն պարարտացված այդ դրականության հողի վրա աճեցին դեղարվեստական նույնիսկ այնպիսի հիանալի ընդհանրացումներ, ինչպես որինակ «Սանչո Պանսա»-ի կերպարանքը, ինչպես «Տիլ Ուլենշպիլդեր»-ը և այդ յերկուսին համարժեք բավականաչափ այլ ընդհանրացումներ: Ամենից ավելի կշիռ ունեցող ապացույցներից մեկը, վոր հաստատում է բուրժուազիայի դասակարգային հետաքրքրությունը հանցադործությունների նկարագրման հանդեպ, Պոնսենդե Տերայլի հայտնի դեպքն է: Յերբ այդ հեղինակը Ռոկամբոլի վերաբերյալ իր բազմահատոր վեպն ավարտեց հերոսի մահվամբ, ընթերցողները

ցույց կազմակերպեցին Տերայլի բռնակարանի առջև, պահանջելով չարունակել վեպը, մի հաջողություն, վորը ձեռք չի բերել Յեյրոպայի խոշոր գրականագետներից և վոր մեկը: Ընթերցողներն ստացան վոր միայն Ֆիդիկայետ, այլ բարոյապես հարություն առած «Ռոկամբոլի» մի քանի հատոր ևս: Դա կուպիտ, բայց լայն տարածված ու բուրժուական գրականության համար սովորական մի որինակ է, վորը ցույց է տալիս մարդասպանի, կողոպտիչի բարի բուրժուա դառնալը: Բուրժուազիան գողերի ճարպկությամբ, մարդասպանների խորամանկությամբ հիանում եր նույնիսկ հաճույքով, ինչպես և լրտեսների խորաթափանցությունը: Դետեկտիվ ոտմանը—մինչև մեր որերն ել հանդիսանում և Յեյրոպայի կուշտ մարդկանց սիրելի հոգևոր սնունդը, իսկ թափանցելով կիսաքաղց քանվորների միջավայրը,

այդպիսի վեպը ծառայել և ծառայում է, փորպես դասակարգային զիտակցության ամփոփումը՝ դանդաղության պատճառներին մեկը, համակրանք է դարձեցնում դեպի ճարպիկ դողերը, կամք է ծնում դեպի գողությունը՝ դեպի անհատների պարտիզանական պատերազմը քուրճուկական սեփականության դեմ, և հաստատելով, թե վորքան չնչին է դնահատում բուրժուազիան բանավոր դասակարգի կյանքը, նպաստում է սպանությունների և անձնավորությունների դեմ ուղղված այլ հանցագործությունների ավելացմանը: Յեվրոպական քաղքենիություն ընդ սերը դեպի հանցագործությունների ուժանները հաստատվում է այդ ուժանների հեղինակների բաղժությունը և դրքերի տիրաժիթիվություն:

Շատ հետաքրքիր է այն փաստը, վոր 19-րդ դարում, յերբ մանր խարդախությունը հերոսական ու ալ-

դու ծախալ եր ընդունում բորսաներում, պարլամենտներում, մամուլում, խարդախը, վորպես ուժանի հերոս, աեղի թվեց լրտեսին, վորը բանվոր ժողովրդի դեմ գործվող բացահայտ հանցագործությունների աշխարհում հիանալի ճարպիկությամբ յերևան յեր բերում խորհրդավոր, սակայն հնարավոր հանցագործությունները: Հարկավ, պատահականություն չէ, վոր հռչակավոր Շերլոկ Հոլմսը հրապարակ յեկավ Սնդիկայում և ավելի քիչ պատահականություն է, վոր հանձարեղ լրտեսի կողքին առաջ յեկավ «Ջենտլմեն գրողը», վորը հիմարացնում է գերիմաստուն լրտեսներին: Նրանք, ովքեր հերոսներն այդ փոխարինումը կրթություն, փորպես «յերևակայություն խաղ», կոխարկեն: Յերևակայությունն ստեղծում է այն, ինչ վոր թեկադրում է նրան իրականությունը, իսկ նրա մեջ խաղում է վոչ թե կյանքից կտրված,

հողից զուրկ Փանտաղիան, այլ միան-
գամայն ռեալ այն պատճառները, վո-
րոնք հարկադրում են որինակ՝ «աջ»
և «ձախ» ֆրանսիական քաղաքա-
գետներին ֆուտբոլ խաղալ «ջենտլմեն
գոդի»՝ Ստավիսկու դիակով, ճըզ-
տելով վերջացնել այդ խաղը հոգուտ
վոշ վոքի:

Գեղարվեստական բանավոր ստեղ-
ծագործության բոլոր ձևերից, մարդ-
կանց վրա իր գործած ազդեցու-
թյամբ ամենաուժեղն են համար-
վում դրաման և կոմեդիան, վորոնք
հերոսների եմոցիաներն ու մտքերը
յերևան են բերում թատրոնի բե-
մում, կենդանի գործողության մեջ:
Յեթե սկսենք յեվրոպական դրամայի
զարգացման ընթացքը Շեքսպիրից,
ապա նա կիջնի մինչև Կոցեբու,
Նեստոր Կուկոլնիկը, Սարգուն և ա-
վելի ցածր, Մուլիերի կոմեդիան, կիջ-
նի մինչև Սկրբը, Պոլյերանը, իսկ
մեղ մոտ Գրիբոյեզովից և Գոգոլից

հետո համարյա կանհետանա: Վորով-
հետև արվեստը պատկերում է մարդ-
կանց, ապա, կարծես, կարելի չէ յեզ-
րակացնել, թե դրամատիկ արվեստի
անկումը վկայում է ուժեղ, սուր կեր-
պով դժված բնավորությունների այ-
լասերումը, վկայում է, վոր «մեծ
մարդիկ» անհետանում են:

Սակայն մինչև այսօր կենդանի,
վողջ ու առողջ են և գործում են այն
պիսի տիպեր, ինչպես որինակ՝ ար-
դահատելի Տերսիտը բուրժուական
Ժուրնալիստկայում, մարդատյաց Տի-
մոն Աթենացին դրականության մեջ,
վաչխաու Շեյլոկը քաղաքականու-
թյան մեջ, ինչպես և բանվոր դասա-
կարգի մեջ Հուդան և անցյալում
հիանալի կերպով նկարագրված ու-
րիշ շատ պատկերներ: Նրանք, սկսած
17-րդ դարից մինչև մեր օրերը,
աճեցին քանակապես և ավելի զաղ-
րելի դարձան վորակապես: Արկածա-
խնդիր Ջոն Լոուեն՝ մի յերեխա և լա-

կոտ՝ համեմատած Ուստրիկի Ստա-
վիսկու, Իվար Կրիզերի տիպի և
20-րդ դարի՝ նրանց նման մեծադուլն
ժուլիկների հետ, Սեսիլ Ռոզսը և
գաղութային կողոպուտի այլ գործիչ-
ներ Կորտեսսից ու Պիզառոյից վոչ
վատ, նախքան ու պողպատի արջանե-
րը և այլն, չատ ավելի ահռելի ու
հանցագործ են, քան՝ Լյուդովիկոս
11-րդը կամ Իվան Գրոզնին։ Հարա-
վային Ամերիկայի փոքրիկ հանրա-
պետություններում գործում են վոչ
պակաս դունեղ մարդիկ, քան Իտա-
լիայի 14-րդ և 15-րդ դարերի կոն-
գոսյերները։

Ճորդը Ռոբերդ Ոուենի միակ
ծաղրանկարը չէր։ Պիրպոնտ Մորդա-
նի կոշմարային կերպարանքն իր հա-
վասարը չունի անցյալում, յեթե
մոռանանք մի հին թաղավոր, վորի
կոկորդը հալեցրած վոսկի յին լըց-
րել։

Վերեվ բերված տիպերը չեն սպա-

ռում, իհարկե, 19-20-րդ դարում բուր
ժուպիայի պրակտիկայի ստեղծած
«մեծ» մարդկանց բազմապատկու-
նը։ Չի կարելի ժխտել, վոր նրանք
բոլորն էլ ուժեղ բնավորության տեր
մարդիկ էին, հանճարեղ կերպով կա-
րողանում էին փող հաշվել, աշխար-
հը կողոպտել, միջադեպին սպանդ-
ներ առաջացնել իրենց անձնական
հարստացման համար, չի կարելի
ժխտել նրանց զիվական նողկալի աշ-
խատանքի ապշեցուցիչ անամոթու-
թյունն ու տմարդությունը։ Ռեալիս-
տական քննադատությամբ, Յեվրո-
պայի բարձր զեղարվեստական գրա-
կանությունը անցել է և անցնում
է այդ մարդկանց կողքով, առանց
նկատած լինելու, կարծես, չընկատե-
լով նրանց։

Մենք վոչ գրամայում, վոչ էլ վե-
պում չենք դանի փողատերի, արդյու-
նարերողի ու քաղաքագետի տիպեր՝
պատկերված արվեստի այնպիսի ու-

Ժող, ինչպես տվել ե գրականութ-
յունը «ալիւրդ մարդկանց» տիպը :
Նա չի նշել նաև բուրժուական կուլ-
տուրական ստեղծագործների ու նրա
վարպետների, գիտության ու ար-
վեստի գործիչների և տեխնիկայի
գյուտարարների վողբերգական ու
չատ սովորական ճակատագիրը, չի
նշել այն հերոսներին, վորոնք պայ-
քար են մղել՝ ազգերին ոտարների
լծից ազատելու համար, չի նշել նաև
բոլոր մարդկանց յեղբայրությունը
յերագործներին, այնպիսիներին, ինչ-
պիսիք են՝ Թոմաս Մորը, Կամպանել-
լան, Ֆուլբյեն, Սեն-Սիմոնը և ուրիշ-
ները : Այդ բոլորն ասվում ե վոչ
վորպես կշտամբանք : Անցյալն ան-
բիծ չե, սակայն միտք չունի կշտամ-
բել, իսկ ուսումնասիրել անհրաժեշտ
ե :

Ի՞նչը բերեց Յեվրոպայի գրակա-
նությունը դեպի ստեղծագործական
այն անգորությունը, վսրը դրսևորվեց

20-րդ դարում : Կատաղի կերպով ու
ճոռոմաբանությամբ պաշտպանվել ե
արվեստի ազատությունը, ստեղծա-
րար մտքի քմահաճ բռնությունը, ա-
մեն կերպ փորձել են հաստատել ան-
դասակարգ գոյացության ու գրակա-
նության զարգացման հնարավորու-
թյունը, նրա անկախությունը սոցիա-
լական քաղաքականությունից : Այդ
պնդումը վատ քաղաքականություն
եր, հենց նա յեր, վոր աննկատելի
կերպով շատ գրականագետներին բե-
րեց այն մտքին, թե անհրաժեշտ ե
նեղացնել իրականության դիտողու-
թյունների չրջանակը, հրաժարվել
այդ իրականությունը լայնորեն, բազ-
մակողմանի կերպով ուսումնասիրե-
լուց, ամփոփվել «իր հոգու մենակու-
թյան մեջ», «կանգ առնել» ինքնա-
խորացմամբ և կյանքից կտրված մըտ-
քի կամակորությամբ «ինքն իրեն ճա-
նաչելու» անպտուղ աշխատանքի
վրա : Դուրս յեկավ, վոր մարդուն չի

կարելի ճանաչել իրականությունից
դուրս, վորն ամբողջովին և ընդթափ
համակլած է քաղաքականությամբ։
Դուրս յեկավ, վոր մարդը՝ վորքան
եւ ճարտարամտությամբ հնարի ի-
րեն, այնուամենայնիւ մնում է վոր-
պէս սոցիալական և վոչ կոսմիկ միա-
վոր՝ մոլորակների նման։ Յեւ ապա
պարզվեց, վոր ինդիվիդուալիզմը,
վերածվելով եզոցենտրիզմի, ստեղ-
ծում է «ավելորդ մարդիկ»։ Բազ-
միցս ասված է, վոր 19-րդ դարի
յեվրոպական գրականության ամենից
ավելի վարպետորեն ու համոզիչ
կերպով մշակված հերոսն է
«ավելորդ մարդու» տիպը։ Հատկա-
պէս այդ տիպի վրա կանգ առավ
գրականությունն իր զարգացման
մեջ, վոր սկսել էր աշխատանքի հե-
րոսից՝ տեխնիկապէս անդեն, բայց
ներառաւ հաղթական ուժը նախադուշակած
այդ ֆարդուց, ապա Ֆեոդալական
նվաճողից՝ մի մարդուց, վորը հաս-

կացել էր, թե իսկը ավելի հեշտ է,
քան անելը. բուրժուազիայի սիրած
խարերայից, նրա կյանքի ուսուցիչ՝
մի մարդուց, վորը զլխի ընկավ, վոր
խարել ու զողանալ ավելի հեշտ է,
քան աշխատել,—կանգ առավ, անց-
նելով կապիտալիզմի և մարդկու-
թյունը ճնշողների հիմնադիրների
ցայտուն դեմքերի կողքով, վորոնք
ավելի տմարդի էին, քան Ֆեոդալա-
կան աղտակաւորները, յեպիսկոպոս-
ները, արքաները, թագավորները։

Արեւմուտքի և բուրժուական գրա-
կանության մեջ նույնպէս անհրաժեշտ
է տարբերել հեղինակների յերկու
խմբեր՝ մեկը զովարանում ու զվար-
ճացնում էր իր զատակարարը—Տրու-
լուպը, Վիլհի Կոլլիդը, Բրեդանը,
Մարրիէտը, Ջերոմը, Պոլ դը Կոկը,
Պոլ-Ֆելավը, Ոկտավ Ֆելլեն, Ոնեն,
Գեորգ Սամարովը, Յուլիուս Ծախն-
դելը և հարյուրավոր նրանց նմանե-
րը։ Դրանք բոլորն էլ տիպիկ «բարի

բուրժուաներ» են, սակավատաղանդ, սակայն ճարպիկ և մի քիչ գռեհիկ, վորպես նրանց ընթերցողները: Մյուս խմբակը կազմում է մեկ յերկու տասնյակ հոգի և դրանք քննադատական ունակ զմի ու հեղափոխական ուժանալի խոշորագույն ստեղծագործներն են: Նրանք բոլորն էլ իրենց չըրջանից մերժվածներն են, իրենց դասակարգի «մոլորյալ զավակները», բուրժուազիայի կողմից տնտեսապես քայքայված ազնվականներ կամ մանր բուրժուազիայի զավակներ, վորոնք դուրս են պրծել իրենց դասակարգի հեղձուցիչ մթնոլորտից: Յեվրոպական գրականագետների այդ խմբի գրքերը մեզ համար կրկնակի և անվիճելի արժեք ունեն: Նախ՝ վորպես գրականության տեխնիկայես որինակելի ստեղծագործություններ, յերկրորդ՝ վորպես բուրժուազիայի զարգացման ու քայքայման պրոցեսը բացատրող փաստաթղթեր, վորոնք

ստեղծվել են այդ դասակարգի մերժվածների կողմից, վորոնք սակայն լուսաբանում են քննադատաբար նրա կենցաղը, տրադիցիաներն իւ գործերը:

19-րդ դարի յեվրոպական գրականության մեջ քննադատական ունակի մի կատարած դերի մանրամասն վերլուծումը չի մտնում իմ զեկուցման մեջ: Նրա հիմնական եյուլթյունը կարելի յե համարել պայքարը ֆեոդալների պահպանողականության դեմ, վորը վերածնել եր խոշոր բուրժուազիան, պայքար՝ դեմոկրատիան, այսինքն մանր-բուրժուազիան շիբերալ և հումանիտար հոգի վրա կազմակերպելով, ընդ վորում դեմոկրատիայի կազմակերպումը շատ հեղինակներ և ընթերցողների մեծ մասը ըմբռնել են վորպես մի անհրաժեշտություն՝ չաշտպանվելու և՛ խոշոր բուրժուազիայից, և՛ պրոլետարիատի գնալով ուժեղացող գրոհից:



Ձեզ հայտնի յե այն փաստը, վոր
ռուսական զրականության բացառիկ,
աննախընթաց հզոր զարգացումը
19-րդ դարում կրկնեց, թեպետև վո-
րոջ ուշացումով, Արեւմուտքի գրա-
կանության բոլոր տրամադրություն-
ներն ու հոսանքները և իր հերթին
աղղեց նրա վրա: Ռուսական բուր-
ժուական զրականության առանձնա-
հատկությունը կարելի յե համա-
րել «ավելորդ մարդկանց» տիպերի
բազմությունը, վորոնց մեջ չափա-
զանց յուրահատուկ են Յեվրոպային
անհայտ «անզգամները» տիպերը,
Փոլկորում դա Վասիլիյ Բուսլայեֆն
և, պատմության մեջ՝ Ֆեոդոր Տոլս-
տոյը, Միխայիլ Բակունինը և նը-
մանները և ապա «զղջացող
աղնիափականի» տիպը զրականության
մեջ, տարրերինակ մարդու և «կամա-
կորի» տիպը կենցաղում:

Ինչպես Արեւմուտքում, մեր գրա-
կանությունը ևս զարգացել և յերկու
զծով. քննադատական ուսելիզմի գի-
ծը՝ Ծոն-Վիդին, Գրիբոյեզով, Գուգոլ
և այլն, մինչև Ձեխովը, Բունինը,
և զուտ մեղչանական զրականության
ղիծը՝ Բուլղարինը, Մասալսկին,
Չոտովը, Գոլիցինսկին, Վոնյար-
լյարսկին, Վսեվոլոդ Կրեստովսկին,
Վսեվոլոդ Սոլովյովը, մինչև Լեյկի-
նը, Ավերչենկոն և նմանները:

Յերբ նվաճող Փետրալի կողքին
կանգնեց հաջողակ, հարստացած խա-
բեբան, մեր Փոլկորը, վորպես
հարստի ուղեկից, տվեց «Իվան հի-
մարին», հեղնական տիպն այն մար-
դու, վորը հարստության և հասնում
և նույնիսկ թագավոր և դառնում մի
այլանդակ ձիու ողնությամբ, վորը
փոխարինել և ասպետական հեքիաթ-
ների բարի կախարդուհուն: Հարուս-
տը հերոսի փառք եր դնում, վորդո-
ւմություն տալով աղքատներին, ըս-

տրուկներին, վորի կույր ուժն ոգնում եր և՛ նվաճողին, և՛ հարստին՝ կողոպտելու նրան:

Յեկեղեցին, ձգտելով հաշտեցնել ստրուկին՝ նրան վիճակված բախտի հետ և ամրապնդել իր իշխանությունը նրա բանականության վրա, մխիթարում եր նրան, ստեղծելով հեզության ու համբերատարության հերոսներ, նահատակներ «հանուն Բրիստոսի», ստեղծում եր «անապատականներ», զուրս վռնդելով իր համար անոգուտ մարդկանց գեպի անապատները, անտառները, վանքերը:

Քանի ավելի յե կոտորակվում հրամանատարական զսասակարգը, այնքան ավելի եյին մանրանում հերոսները: Վրա հասավ այն մոմենտը, յերբ Փոլկորի «հիմարները», դառնալով Սանչո Պանսու, Սիմպլիցիսիսի մուս, Ուլենշպիգել, Փետդալներից ավելի խելոք դարձան, համարձա-

կություն ձեռք բերին ծաղրելու սերերին և, անտարակույս, նպաստեցին այն տրամադրությունների աճմանը, վորոնք 16-րդ դարի առաջին կիսում արտահայտվեցին «տարօրիտների» գաղափարներում և առաջնորդի դեմ մղվող դյուղացիական պատերազմների պրակտիկայում:

Զի կարելի գիտենալ աշխատավոր ժողովրդի բուն պատմությունը, առանց գիտենալու ժողովրդական բանավոր ստեղծագործությունը, չորն անընդհատ ու վորոշակի ազդել ե գրավոր գրականության այնպիսի խոշորագույն, յերկերի ստեղծման վրա, ինչպիսիք են որինակ՝ «Փառատը», «Բարոն Մյունհաուզենի արկածները», «Պանտագրյուսելը» և «Գարգանտյուան», Դե Կոստերի «Տիլ Ուլենշպիգելը», Շեյլի «Ազատագրված Պրոմեթեոսը» և ուրիշ շատերը: Փոլկորն ամենահին ժամանակներից անբաժան և յուրահատուկ

կերպով ուղեկցում է պատմութեանը :
Նա իր կարծիքն ունի Լյուդովիկոս
11-րդի, ի վան Գրոզնու գործունե-
յութեան մասին, և այդ կարծիքը
խիստ տարբեր է մասնագետների գր-
քած պատմութեան գնահատականից,
մասնագետներ, վորոնք այնքան էլ
չեն հետաքրքրվել այն հարցով, թե
հատկապես ի՞նչ է մտցրել աշխատա-
վոր ժողովրդի կյանքի մեջ միապետ-
ների պայքարը ֆեոդալներին դեմ :
Գետնախնձորի մշակման կոպիտ,
բունի «պրոպագանդը» մի շարք ա-
վանդություններ ու հավատալիքներ
է ստեղծում, թե գետնախնձորն ա-
ռաջ է յեկել գեվի և անառակ աղջկա
զուգավորումից, դա մի թեքում է
դեպի հին բարբարոսությունը, վո-
րը սրբագործել են յեկեղեցական գա-
ղափարների տիմարութեամբ, թե՛
«Քրիստոսը և սրբերը գետնախնձոր
չեյին ուտում» : Սակայն նույն այդ
Փոլկլորը մեր օրերին Վլադիմիր Լե-

նինին բարձրացրեց հնութեան առաս-
պելական հերոսի՝ Պրոմեթեոսին հա-
վասար հերոսի, բարձրութեան :

Ստատյելը հնարովի յե : Հնարել՝
նշանակում է իրականորեն տվյալնե-
րի գումարից քաղել նրա հիմնական
իմաստը և մարմնավորել—այդպիսով
մենք ստացանք ռեալիզմը : Սակայն
յեթե իրականորեն տվյալից քաղված
իմաստին ավելացնենք — Հիպոթեզի
տրամաբանութեամբ՝ միաքը լրաց-
նենք—ավելացնենք ցանկալին, հնա-
րավորը, և դրանով ավելի լրացնենք
պատկերը, կատանանք այն ռոման-
տիզմը, վորը կաղմում է առասպելի
հիմքը և վերին աստիճանի ոգտակար
է նրանով, վոր նպաստում է հեղա-
փոխական վերաբերմունքի առաջաց-
մանը իրականութեան նկատմամբ, մի
վերաբերմունք, վորը դործնականո-
րեն փոխում է աշխարհը :

Ինչպես տեսնում ենք, բուրժուա-
կան հասարակությունը բոլորովին

կորցրել է արվեստի մեջ հնարելու
ընդունակութիւնը: Հիպոթեզի տրա-
մաբանութիւնը մնաց և խթանող
ազդեցութիւն է գործում միմիայն
փորձի վրա հիմնված գիտութիւննե-
րի բնագավառում: Բուրժուական ին-
գելիդոլալիզմի ուժմանտիզմը՝ իր հա-
կումով ղեպի Փանտաստիկան և
միստիկան, չի գրգռում յերեվակա-
յութիւնը, չի սրում միտքը: Նա
կտրված, վերացած լինելով իրա-
կանութիւնից, կառուցվում է վոչ
թե պատկերի համոզիկերութեան վրա,
այլ համարյա բացառապես «խոսքի
թովչութեան» վրա, ինչպես տեսնում
ենք Մարսել Պրուստի և նրա հետե-
վորդների մոտ: Բուրժուազիայի ու-
մանտիկները՝ սկսած Նովալլիսից,
Պյոտր Շլեմիլի տիպի մարդիկ են,
«Իր ստվերը կորցրած մարդու» տի-
պով, իսկ Շլեմիլին ստեղծել է Փը-
րանսիական վտարանդի Շամիսոն,
վորը գրում եր Գերմանիայում գեր-

մաներեն: Ժամանակակից Արեւմուս-
քի գրականագետը նույնպես կորց-
րել է իր ստվերը, պանդխտելով
իրականութիւնից ղեպի հուսահա-
տութեան նիհիլիզմը, ինչպես ցույց է
տալիս Լուի Սելենի «Ճանապարհոր-
դութիւն ղեպի գիշերվա ծայրը»
գիրքը: Այդ գրքի հերոս Բարդո-
մյուն կորցրել է իր հայրենիքը, ար-
համարհում է մարդկանց, իր մորն
անվանում է «քած», սիրուհիներին՝
«անղզամ», անտարբեր է բոլոր հան-
ցագործութիւնների հանդեպ և, վոչ
մի տվյալ չունենալով հեղափոխա-
կան պրոլետարիատին «հարելու»,
կատարելապես հասունացել է Փա-
շիզմն ընդունելու:

Հաստատված է Տուրգենևի ազդե-
ցութիւնը Սկանդինավյան թերակղզ-
ու գրականագետների վրա, ճանաչ-
ված է Լեւ Տոլստոյի ազդեցութիւ-
նը Կոմս Պոլենի, Ռենե Բագենի, Ես-
տոնյեյի, Տ. Գարդիի վրա՝ նրա

«Տես» վեպում, և Յեվրոպայի թիշարք այլ գրողների վրա: Առանձնապես ուժեղ է յեղել և ուժեղ է Դոստոյեվսկու ազդեցությունը, վորին ընդունում է Նիցշեն, վորի գաղափարները հիմք են կաղմել Փաշիգմի մոլեռանդ քարոզի ու պրակտիկայի համար: Դոստոյեվսկուն պատկանում է այնպիսի մարդու փառքը, վորը՝ հանձին «Գրություններ ընդհատակից» զրքի հերոսի, խոսքի վարպետության բացառիկ ցայտուն կատարելությամբ տվեց եզոցենտրիստի տիպը, սոցիալական դեգեներատի տիպը: Իր անձնական արհամիրքների ու տառապանքների համար, իր պատանեկական գայթակղությունների համար անհագորեն վրեժ լուծողի հաղթանակով Դոստոյեվսկին իր հերոսի կերպարանքով ցույց տվեց, թի ինչպիսի ստոր ճշոցի կարող է հասնել այն ինդիվիդուալիստը, վորը դուրս է յեկել 19-րդ—20-րդ դարի՝

կյանքից կտրված յերիտասարդների միջավայրից: Նրա այդ մարդը պարունակում է Ֆրիդրիխ Նիցշեյի և Մարկիդ Դեզ Եստենտի ամենաբնորոշ գծերը՝ Գյուլիսմանի «Ընդհակառակը» վեպի հերոսի, Բուրժեյի, «Աչակերտի» և Բորիս Սավինկովի՝ այդ անունով գրվածքի հեղինակի ու հերոսի գծերը, Ոսկար Ուալդի հերոսների ու Արցիբաչեվի «Սանինի» գծերը, և սոցիալապես ուրիշ շատ այլասերվածների գծերը, վորոնք ստեղծվել են կապիտալիստական պետության տմարդի պայմանների անարխիկ ազդեցությամբ:

Վերա Ն. Ֆիգների պատմվածքի համաձայն, Սավինկովը դատում էր ճիշտ այնպես, ինչպես դեկտեանտները:—

«Բարոյապիտություն չկա, կամ իրայն դեղեցկություն: Իսկ դեղեցկությունն անձնավորության ազատ զարգացումն է, անարդեւ ծառ

վալուճն այն ամենի, վորը թագ-
նըված է նրա հոգու մեջ»:

Մեզ լավ է հայտնի, թե ինչպիսի
նեխվածք է կուտակվել բուրժուական
անձնավորության հոգու մըրա:

Այն պետութեան մեջ, վորը հիմ-
նված է մարդկանց մեծամասնութեան
անիմաստ, ստորացուցիչ տառապանք-
ների վրա, ղեկավար և արդարացու-
ցիչ նշանակութիւն պետք է ունենար
և իրոք ունեցել է անձնավորութեան
խոսքի ու գործի անպատասխանատու
ինքնիշխանութեան քարոզը: Այնպի-
սի գաղափարներ, ինչպիսին է այն
գաղափարը, թե «մարդն իր բնու-
թյամբ բռնակալ է», թե նա «սիրում
է չարչարող լինել», «սաստիկ սի-
րում է տառապանքը» և թե նա իր
կյանքի իմաստը, իր բախտը տեսնում
է հատկապես իր կամքի ինքնիշխա-
նութեան մեջ, գործողութիւնների
անսահման ազատութեան մեջ, թե
միայն այդ ինքնիշխանութիւնն

նրա համար է «ամենաձեռնտու» ո-
գուտը և թե «թող ամբողջ աշխարհը
կործանվի, միայն թե յես թեյ խը-
մեմ», — ահա այսպիսի գաղափարներ
և՛ ներշնչում, և՛ ամբողջովին ար-
գարացնում եր կապիտալիզմը:

Դոստոյեվսկուն վերադրում են
ճշմարտութիւնը փնտռողի դեր: Յե-
թե նա փնտրել է, ապա գտել է այդ
ճշմարտութիւնը մարդու գաղափա-
րին կենդանական տարրի մեջ և զը-
տել է վոչ թե հերքելու, այլ արդա-
րացնելու համար: Այո, մարդու մեջ
կենդանական տարրն անմար է մինչև
այն ժամանակ, քանի դեռ բուրժուա-
կան հասարակութեան մեջ գոյու-
թիւն ունեն մարդու մեջ գաղափա-
րը հրահրող հսկայական քանակու-
թյամբ ազդեցութիւններ: Ընտանի
կատուն խաղում է իր բռնած մկան
հետ, վորովհետև այդ են պահան-
ջում մանր, արագադնաց կենդանի-
ներ վորսող այդ գաղանի մկանունք-

ները, այդ խաղը մարմնամարզությունն է: Իսկ այն ֆաշիստը, վորը բանվորի կզակին տված վոտքի հարվածով դուրս է գցում նրա գլուխը վողներից, դա արդեն դադարն է, այլ գազանից անհամեմատ ավելի մի վատ բան, դա վոչնչացման է յենթակա, խելադար մի կենդանի յե: Նույնպիսի նողկալի մի կենդանի, ինչպես այն սպիտակ սպան, վորը կարմիր բանակայինի կաշվից թոկեր և առտդեր է կտրում:

Դժվար է հասկանալ, թե հատկապես ի՞նչ էր փնտռում Դոստոյևսկին. սակայն իր կյանքի վերջում նա գտավ, վոր տաղանդավոր և ամենաազնիվ ոուս մարդը՝ Վիսարիոն Բելինսկին, «ամենանողկալի, բթամիտ և խայտառակ յերևույթ է ոուսական կյանքում», թե անհրաժեշտ է թուրքերից խլել Ստամբուլը, թե ճորտատիրական իրավունքը նպաստում է «կալվածատերերի ու գյուղացիների

իդեալական բարոյական հարաբերություններին», և վերջապես իր համար, վորպես «կրոնուսույց», ճանաչեց Կոնստանտին Պոբեդոնոցեվին 19-րդ դարի սկզբնական ոուսական կյանքի այդ ամենամոռայլ դեմքերից մեկին: Դոստոյևսկու հանճարեղությունն անվիճելի յե, նրա տաղանդն իր պատկերման ուժով թերևս հավասար է միայն Շեքսպիրին: Բայց վորպես անձնավորություն, վորպես «աշխարհի ու մարդկանց դատավոր», նրան շատ հեշտ է պատկերացնել միջնադարյան ինկվիզիտորի դերում:

Յես Դոստոյևսկու նայլքան շատ տեղ հատկացրի այն պատճառով, վոր առանց նրա գաղափարների ազդեցության, հնարավոր չէ հասկանալ այն կտրուկ շրջադարձը, վոր կատարեցին ոուսական զրականությունը և ինտելիգենցիայի մեծ մասը 1905-1906 թվականներից հետո, անցնելով սոցիալալիզմից և դեմոկրատիզմից

դեպի բուրժուական «կարգերի» պահպանումն ու պաշտպանութիւնը:

Դոստոյեւսկու դադափարներով սկսեցին հրապուրվել Պուշկինին վերաբերյալ նրա ճառից անմիջապես հետո, նարոդովոյեցներէ կուսակցութիւնը ջախջախվելուց հետո, վորոնք փորձում էին տապալել միապետութիւնը: Դեռ նախքան պրոլետարիատը, հասկանալով Լենինի պարզ և մեծ ճշմարտութիւնը, 1905 թվականին ցույց տվեց աշխարհին իր խիստ դեմքը, շրջահայաց Պյոտր Ստրուկեն սկսեց ինտելիգենցիային՝ փորպես պատահաբար իր անմեղութիւնը կորցրած աղջկա, համոզել, վոր նա որինական կերպով ամուսնանա տարիքավոր կապիտալիստի հետ:

Նա իր պրոֆեսիայով միջնորդ լինելով, գրքի մի ճիճու՝ բոլորովին զուրկ մտքի յուրատեսակութիւնից, 1901 թվին կոչ եր անում զնալ դեպի «հետ, դեպի Փիխտեն», դեպի խա-

նութպանների ու կալվածատերերի մարմնավորած ազգի կամքին յենթարկվելու դադափարը, իսկ 1907 թվականին նրա խմբադուլթյամբ և նրա մասնակցությամբ լույս տեսավ «Վեխի» ժողովածուն, վորի մեջ բաւացի հետեյալն և ասված.

«Մենք պետք է շնորհակալ լինենք իշխանությանը, վոր նոսպիններով պաշտպանում է մեզ ժողովրդի կատաղութիւնից»:

Այդ ստոր խոսքերն արտասանել և դեմոկրատիկ ինտելիգենցիան այն որբերին, յերբ կալվածատերերի դործակատար՝ մինխտոր Ստոլիպինն ամեն որ կախում եր բանվորներին ու գյուղացիներին տասնյակներով: Իսկ «Վեխի» ժողովածույի հիմնական միտքը կրկնում եր մոլի պահպանողական կոնստանտին Լեոնտյեւի 70-ական թվականներին արտահայտած հետեյալ մոլեռանդ միտքը՝ «Ռուսաստանը պետք է սառեցնել», այսինքն՝ վոստ-

նակոթ անել, հանգցնել նրանում սո-
ցիալական հեղափոխութեան կրակի
բոլոր կայծերը: «Վերի», «սահմա-
նադրական-դեմոկրատներին» ռենեզա-
տութեան այդ ակտին, — շատ հա-
վանութիւն տվեց հին ռենեզատ Լեվ
Տիխոմիրովը, անվանելով այդ ժողո-
վածուն «ռուսական հոգու զգաստա-
ցում և խղճի հարութիւն»:



1907 թվականից մինչև 1917 թվա-
կանի ժամանակամիջոցը հանդիսա-
ցավ անպատասխանատու մտքի լիա-
կտար բռնութեան, ռուսական դրա-
կանադետներին «ստեղծագործութեան
լիակատար ազատութեան» ժամանա-
կը: Այդ ազատութիւնն արտահայտ-
վեց արևմտյան բուրժուազիայի բո-
լոր պահպանողական դադափարների
քարոզով, դադափարներ, վորոնք
չըմանառութեան մեջ դրվեցին 18-րդ
դարի Փրանսիական հեղափոխութիւն-

նից հետո և կանոնաւոր կերպով բո-
ցավառվում էին 48-րդ և 71-րդ
թվականներից հետո: Հայտարար-
վեց, թե՛ «Բերգսոնի փիլիսոփայու-
թիւնը մի հսկայական առաջադիմու-
թիւն է նշանակում մարդկային մշտ-
քի պատմութեան մեջ», թե՛ Բերգսոնը
«լցրեց և խորացրեց Բեռլեյի տեսու-
թիւնը», թե՛ «Կանտի, Լեյբնիցի,
Դեկարտի, Հեգելի սիստեմները մեռ-
յալ սիստեմներ են և նրանց վրա,
հալիտենական գեղեցկութեամբ, արե-
վի նման փայլում են Պլատոնի ստեղ-
ծագործութիւնները», մի փիլիսո-
փայի, վորը հիմնել է մտքի բոլոր
մոլորութիւններից ամենակորստա-
բեր մոլորութիւնը, ռեալ իրակա-
նութիւնից կտրված այն մտքի, վո-
րը բազմակողմանի կերպով և ան-
ընդհատ զարգանում է սոցիալատանքի
ստեղծագործութեան պրոցեսում:

Դմ. Մերեթկովսկին, այն ժամա-
նակվա այդ ազդեցիկ դրողը, աղա-
ղակում էր.

ինչ կուզի՝ լինի՝, միևնույն է,
Վաղուց ամեն ինչ ձանձրացրել է
Յերեմի գիցուհուն՝ հավերժ մանող.
Ամեն ինչ հող եր և կլիմի հո՛ղ:

Սուլտուրը, հեռեկով Շոպեն-
հաուերին, բացահայտորեն կախում
ունենալով Բողիերից, և «անիծված-
ներից», զարմանալի պարզորոշու-
թյամբ պատկերեց «անձնավորության
գոյացության կոսմոսի անիմատու-
թյունը» և, թեպետ վոտանավորնե-
րում խղճալի կերպով հառաչում եր
այդ առթիվ, բայց ապրում եր վոր-
պես բարոր քաղքենի և 14 թվակա-
նին սպանում եր զերմանացիներին՝
ավերել Բեռլինը հենց վոր «ձյունը
հալչի հովիտներում»: Քարոզում ե-
լին «Երոսը քաղաքականության
մեջ», «միստիկ անարխիզմը», ամե-
նախորամանկ Վասիլիյ Ռոզանովն ե-
րոտիկա եր քարոզում, Լեոնիդ Անդրե-
յեվը կոչմարային պատմվածքներ և
պիեսներ եր գրում, Արցիրաշեվը ոռ-
մանի հերոս եր ընտրել մի հեշտա-

սեր, չալվար հագած ուղղահայաց
այծ և՛ ընդհանուր առմամբ, 1907—
1917 թվականների տասնամյակը լիո-
վին արժանի յե ուսուսկան ինտելի-
գենցիայի պատմության ամենախա-
տառակ և ամենամոթալի տասնամ-
յակը կոչվելու:

Վորովհետև մեր զեմոկրատիկ ին-
տելիգենցիան պատմության կողմից
ավելի քիչ եր մարզվել, քան արև-
մտյան ինտելիգենցիան, մեզ մոտ ա-
վելի արագ է կատարվում նրա «բա-
րոյական» քայքայման, մտավոք աղ-
քատացման պրոցեսը: Մակայն դա-
ընդհանուր պրոցես է բոլոր յերկրնե-
րի մանր բուրժուազիայի համար և
անխուսափելի յե ամեն մի ինտելի-
գենտի համար, վորն իր մեջ ուժ չի
գտնի վճռաբար լծվելու այն պրոյե-
տարիատի մասսային, վորը կոչված
է պատմության կողմից՝ փոխել աշ-
խարհը հանուն ազնիվ աշխատանքի
բոլոր մարդկանց ընդհանուր բա-
րիքի:

Պետք է ավելացնել, վոր ռուսական
գրականությունը, ինչպես և արև-
մտյանը, անցավ կարլաճատերերի
կողքով, մինչհեղափոխական եպոխա-
յում արդյունաբերությունը կաղմա-
կերպողների ու ֆինանսիստների կող-
քով, իսկ մեզ մոտ այդ մարդիկ շատ
ավելի յուրատեսակ և գունեղ են յե-
ղել, քան Արևմուտքում: Ռուսական
գրականության ուշադրության շրջա-
նից դուրս են մնացել հողատերերի
այնպիսի մղձավանջային տիպեր,
ինչպիսիք են, որինակ, հռչակավոր
Սարտիշևիսան, զենեքալ Իզմայլովը և
նրանց նման տասնյակ ու հարյուրա-
վոր տիպեր: Գոգոլի ծաղրանկար-
ներն ու շարժները «Մեռյալ հողի-
ներ» գրքում—դա արդեն այնքան բը-
նորոշ է կարլաճատիրական-Փետդա-
լական Ռուսաստանի համար՝ Կորո-
բոչկաները, Մանիլովները, Պետուխ-
ները և Սոբակեվիչները, Նոդդրեվիչ-
րի հետ, ինքնակալության քաղաքա-
կանության վրա աղղել են միմիայն

երենց գոյության պատիվ փաստով:
Յեվ, վորպես գյուղացիության
արյունաբերուհեր, շատ բնորոշ չեն:
Յեղել են արյունաբերության ուրիշ
վարպետներ ու գեղարվեստագետներ,
բարոյական սոսկալի դեմքով մարդիք:
Հեղատներն և նոստատակության
կատետներ: Նրանց չարազորմություն-
ները չեն նշել խոսքի գեղարվեստա-
գետները, նույնիսկ այնպիսիները,
ինչպիսիք են նրանցից մեծագույնե-
րը և գյուղացու վրա սիրահարված-
ները: Մեր և արևմտյան խոշոր բուր-
ժուազիայի տարբերության գծերը
չափազանց խիստ են, առատ, և բա-
ցատրվում են նրանով, վոր մեր պատ-
մականորեն յերիտասարդ բուրժուան
առավելապես դուրս է յեկել գյուղա-
ցիությունից, ավելի արագ և ավելի
հեշտ է հարստացել, քան Արևմուտ-
քի պատմականորեն չափազանց տա-
րիքավոր բուրժուան: Արևմուտքի ար-
ժան մրցությամբ չմարզված մեր ար-
գյունաբերողը, համարյա մինչև 20-րդ

դարը, պահպանել ե տարրորինակության հանդուգն արարքների գիծը. վերջինս առաջ ե յեկել յերևի նրանից, վոր նա ապշել ե այն հիմար հեշտությունից, վորով միլիոններ ե դիզել: Նրանցից մեկի՝ Պյոտր Գուբոնինի մասին պատմում ե տիրետական հայտնի բժիշկ Պ.Ա. Բաղմայսին իր «Իմաստությունը ուս ժողովրդի մեջ» գրքում, վոր հրատարակվել ե 1917 թվականին: Այդ զվարճալի բրոշյուրը, համոզելով յերիտասարդությունը «հրաժարվել ազատություն, հավասարություն, յեղբայրություն դատարկ խոսքերով նրան զայլադեցնող սատանայական դրություններից», հաղորդում ե քարտաշի վորդու ե յերկաթուղիներ կառուցող քարտաշի մասին:

«Ռուսաստանի ազատագրման ժամանակների վերին աստիճանի պատվավոր հին պաշտոնյաները, վորոնք դեռ մինչև այժմ ել չեն մոռացել Գուբոնինին, հետևյալն են պատմում.

—Գուբոնինը մտնելով մինիստրություն, յուղած մեծ կոշիկներով, կապյով, մի պարկ արծաթով, վողջունում եր չվեյցարին ե ցրիչներին, հանում եր պարկից արծաթը ե առատաձեռն պարզեվատրում, բոլորին ցածր դլուխ տալով, վոր նրանք չմոռանան իրենց Պյոտր Իոնովիչին: Ապա մտնում եր զանազան դեսպարտամենտները ե բաժինները, վորտեղ ամեն մի պաշտոնյայի համար թողնում եր կնքած մի ծրար՝ յուրաքանչյուրին ըստ արժանիքի, անվանելով բոլորին ըստ անունի ե նույնպես գլուխ խոնարհելով: Գերազանցության տիտղոս ունեցող անձնավորություններին վողջունում ե նրանց հետ համբուրվում եր, անվանելով նրանց ուս ժողովրդի բարերարներ, և նրան շատ շուտ թույլ եյին տալիս հենց նորին բարձր գերազանցության մոտ մտնելու: Պյոտր Իոնովիչը մինիստրությունից դուրս գալուց հետո, բոլորն ել ցըն-

ծում եյին: Դա իսկական տոն էր, վո-
րը կարող էր համեմատուիլ միայն ծը-
նընդյան և զատիկի որովհ հետ: Ամեն
մեկը կրկին հաշվում էր իր ստացածը
թափում էր, ուներ առույգ ուրախ
տեսք և մտածում էր, թե ինչպես
անցկացնի որովք մնացորդն ու գիշե-
րը, մինչև հաջորդ առափոտ: Շվեյ-
ցարի խցում հպարտանում էյին իրենց
միջափայլից դուրս յեկած Պյոտր
Իոնովիչով, անփառում էյին իրենց
խելոք ու բարի, հարց ու փորձ էյին
անում միմյանց, թե ո՛վ, փո՛ր-
քան և ստացել, բայց ամեն մեկը
թաղցնում էր այդ, չուզելով վարկա-
րեկել իր բարեբարին: Մանր պաշտոն-
յաները, զգացված լինելով, վոր է-
րենց չի մտացել ամենաբարի Պյոտր
Իոնովիչը, ցածր ձայնով փափսում
էյին իրար մեջ, թե ինչպես խելոք,
սիրելի և ազնիվ և նա: Բարձր պաշ-
տոնյաները մինչև նորին զերազանցու-
թյունը բարձրաձայն խոսում էյին,
թե ինչպիսի պայծառ պետական խելք

ունի նա և մեծ ոգուտ և բերում ժո-
ղովրդին ու պետությանը, հարկավոր
և նրան առաջ քաշել: Անհրաժեշտ և
հրավիրել նրան խորհրդակցության՝
յեղկաթուղային հարցերը մշակելիս,
վորովհետև նա միակ խելոք մարդն և
այդ դործերում: Յեվ, տրդարի, նը-
րան հրավիրում էյին ամենակարևոր
խորհրդակցությունների, վորտեղ
ներկա էյին լինում միմյանց զերա-
զանցության տխուր ունեցողներն ու
ինժեներները, և այդ խորհրդակցու-
թյուններում վճռական ձայնը Գուբո-
նի ձայնն էր»:

Այս պատմվածքն իրոնիայի յե նը-
ման, սակայն դա ամենաանկեղծ գո-
վաբանումն է այն կարգերի, վորոնց
պայմաններում բուրժուազիայի «ա-
պատություն, հափստարություն և
յեղբայրություն» մեծազդորդը լո-
յուզը դատարկ խոսք դուրս յեկավ:

Այն բոլորը, ինչ վոր ասվեց բուր-
ժուազիայի ստեղծադործական անդա-
բության մասին, վոր արտացոլվել և

գրականության մեջ, կարող ե չափից դուրս մույլ թվալ և կշտամբանք առաջացնել իմ հասցեյին տենդենցիոզ չափադանցման համար: Սակայն փաստերը փաստ են և յես դրանք տեսնում եմ այնպես, ինչպես վոր նրանք կան:

Անմտություն և նույնիսկ հանցագործություն ե թերազնահատել թըշնամու ուժերը: Մենք բոլորս ել շատ լավ գիտենք, թե վորքան ուժեղ ե նրա արդյունաբերական տեխնիկան, մանավանդ ռազմականը, վորը վաղ թե ուշ ուղղվելու յե մեր դեմ, վորը սակայն անխուսափելիորեն կառաջացնի համաշխարհային սոցիալական հեղափոխություն և կոչընչացնի կապիտալիզմը: Արևմուտքի ռազմական հեղինակավոր մասնագետները բարձրաձայն նախազգուշացնում են, թե պատերազմը կներդրավի պատերազմող յերկրների ամբողջ թիկունքը, ամբողջ ազգաբնակչությունը: Հավանական ե, վոր

Յեվրոպայի սովար մանր քաղքենիությունը, վորը դեռ բոլորովին չի մոռացել 1914—1918 թվականների պատերազմների սարսափները և յերկյուղով ե համակվել նոր, ավելի սոսկալի սպանդի ահեղ անխուսափելիության հանդեպ, վերջ ի վերջո գլխի կնկնի, թե հատկապես ո՞ւմ համար ե ձեռնտու վերահաս սոցիալական կատաստրոֆը, ո՞վ ե այն հանցագործը, վորն իր ստոր շահի համար պարբերաբար վոչնչացնում ե միլիոնավոր ժողովուրդ, վերջ ի վերջո գլխի կընկնի և կոգնի պրոլետարներին՝ ջախջախելու կապիտալիզմի գլուխը: Այդ կարելի յե յենթադրել, սակայն չի կարելի հույս ունենալ, վոր այդպես կլինի, վորովհետեւ դեռ կենդանի յե ճիզվաթն ու յերկչոտը՝ քաղքենիության առաջնորդ սոցիալդեմոկրատը:

Պետք ե խորը հույս ունենալ պրոլետարիատի հեղափոխական իրավագիտակցության աճման վրա, բայց

մեզ համար ավելի լավ կլինի, վոր
փստահ լինենք մեր ուժին և անընդ-
հատ զարգացնենք վերջինս: Զար-
գացնել պրոլետարիատի հեղափոխա-
կան ինքնագիտակցությունը, նրա
ստեղծած հայրենիքի սերը և հայրե-
նիքի պաշտպանությունը — դրակա-
նության ելական պարտականու-
թյուններից Ֆեկն է:



Յերբեմն, հին ժամանակներն աշ-
խատավորների բանավոր գեղարվես-
տական ստեղծագործությունը հան-
դիսանում էր նրանց փորձի միակ
կազմակերպիչը, գաղափարների
մաքմնավորումը պատկերների մեջ և
կոլեկտիվի աշխատանքային եներգիա-
յի կոլեկտիվի աշխատանքային եներ-
գիա առաջացնողը: Այդ պետք է հաս-
կանանք մենք: Մեր յերկրում նպա-
տակ է դրված համաշափ կուլտուրա-
կան դաստիարակություն տալ բոլոր
անհատներին, նրա անդամների հա-

մար համաշափ ծանոթացնել աշխա-
տանքի հաջողություններին ու նվա-
ճումներին, ձգտելով վերածել մարդ-
կանց աշխատանքը բնության ուժերի
կառավարման արվեստի: Մեզ ավելի
կամ պակաս չափով հայտնի յե
մարդկանց տնտեսական և դրանով
իսկ քաղաքական շերտավորման պրո-
ցեսը, այն պրոցեսը, վորով բռնա-
գրավվել է աշխատանքի մարդկանց
իրավունքը նրանց բանականության
աճման ազատության նկատմամբ:
Յերբ աշխարհաճանաչումը քրմերի
գործը դարձավ, նրանք կարող եյին
այդ աշխարհաճանաչումն ամբացնել
իրենց վրա, միմիայն մետաֆիզիկո-
րեն բացատրելով բնության տարե-
րային ուժերի յերեույթներն ու նը-
րանց դիմադրություններն աշխա-
տանքի մարդկանց նպատակներին և
եներգիայի: Աշխարհաճանաչման աշ-
խատանքից միլիոնավոր մարդկանց
բացառելու, հեռացնելու այդ հան-
ցագործ պրոցեսը, վորն սկսվել է

հին ժամանակներում և շարունակ-
վում է մինչև մեր օրերը, հանգեց
այն բանին, վոր ցեղի, ազգի, կրոնի
զաղափարներով անջատված հար-
յուր միլիոնավոր մարդիկ մնացել
են ամենախորը տգիտության, մտա-
վոր սոսկալի կուրուլթյան վիճա-
կում, ամեն տեսակ նախապաշա-
րումների, անտախապաշտություննե-
րի և կանխակալ կարծիքների խավա-
րում: Լենինյան կոմունիստների կու-
սակցությունը Սոցիալիստական
Խորհուրդների Միության բանվորա-
գյուղացիական իշխանությունը, վո-
չընչացնելով կապիտալիզմը ցարա-
կան Ռուսաստանի ամբողջ տարա-
ծության վրա, հանձնելով քաղաքա-
կան իշխանությունը բանվորների ու
գյուղացիների ձեռքը, կազմակերպե-
լով ազատ, անդասակարգ հասարա-
կություն՝ իրենց խիզախ, ի-
մաստուն, անդուլ աշխատանքի նը-
պատակ են դրել՝ ազատագրել աշ-
խատավոր մասսային կուլտուրայի

կապիտալիստական դարգացման հին,
իր դարն ապրած պատմության բազ-
մադարյան ճնշումից, մի կուլտուրա,
վորն այժմ բացահայտորեն դրսևի-
րեց իր բոլոր արատները և իր ստեղ-
ծագործական ամբողջ անգորությու-
նը: Հենց այդ մեծ նպատակի բար-
ձունքից Խորհուրդների Միության
ադնիվ գրականագետները պետք և
քննեն, գնահատեն ու կազմակերպեն
իրենց գործունեությունը:

Մենք պետք է յուրացնենք, վոր
հատկապես մասսաների աշխատանքն
է կուլտուրայի հիմնական կազմա-
կերպիչը և բոլոր զաղափարների
ստեղծողը՝ ինչպես այն զաղափար-
ների, վորոնք դարերի ընթացքում
նվաճատեցնում եյին աշխատանքի
նշանակությունը—մեր գիտելիքների
այդ աղբյուրի նշանակությունը,
այնպես ել Մարքսի-Լենինի-Ստալինի
այն զաղափարները, վորոնք մեր ժա-
մանակներում դատախարակում են բո-
լոր յերկրների պրոլետարների հեղա-

փոխական իրավագիտակցությունը և մեր յերկրում աշխատանքը հասցնում են այն ուժի բարձրության, վորը հանդիսանում է գիտության, արվեստի ստեղծագործության հիմքը: Մեր աշխատանքի հաջողության համար մեզ անհրաժեշտ է հասկանալ, զգալ այն փաստը, վոր մեր հայրենիքում կիսագրագետ բանվորների և պրիմիտիվ գյուղացիության սոցիալիստականորեն կազմակերպվող աշխատանքը կարճ ժամանակամիջոցում տա-
որ տարում, ստեղծեց վիթխարի ար-
ժեքներ և հիանալի կերպով գինվեց՝
թշնամու հարձակումից պաշտպան-
վելու համար:

Այդ փաստի ճիշտ գնահատումը մեզ
ցույց կտա, թե հեղափոխական ինչ-
պիսի ուժ ունի ամբողջ աշխարհի
պրոլետարիատին միացնող ուսմուն-
քը:

Մենք բոլորս և՛ զրականագետ-
ներս, գործարանների բանվորները,
կոլտնտեսականները, դեռ մինչև

այժմ ել վատ եյինք աշխատում և
չենք կարողանում դեռ ամբողջովին
յուրացնել այն ամենը, ինչ վոր
ստեղծել ենք և ինչ վոր ստեղծվել է
մեզ համար: Մեր աշխատավոր մաս-
սան դեռ մինչև այժմ ել վատ է հաս-
կանում, վոր նա աշխատում է միայն
իր համար: Այդ գիտակցությունն ա-
մենուրեք առկայծում է, բայց դեռ
չի բոցավառվել, վորպես հզոր ու
բերկրալից կրակ: Սակայն վոչինչ չի
կարող բոցավառվել նախքան տա-
քության վորոշ աստիճանին հասնե-
լը, և վոչվոք յերբեք չի կարողացել
այնքան հիանալի կերպով բարձրաց-
նել աշխատանքային յեռանդի ջերմա-
տիճանը, ինչպես կարողանում է ա-
նել վլադիմիր Լենինի հանձարով
կազմակերպված կուսակցությունը և
այդ կուսակցության՝ մեզ ժամանա-
կակից առաջնորդը:

Մեր գրքերում, վորպես գլխավոր
հերոս, մենք պետք է ընտրենք աշ-
խատանքը, այսինքն՝ աշխատանքի

պրոցեսներով կազմակերպող մար-
դուն, վորը մեզ մօտ զինվում ե ար-
դի տեխնիկայի ամբողջ կարողու-
թյամբ, այն մարդուն, վորն իր հեր-
թին կազմակերպում է աշխատանքը,
դարձնելով վերջինս ավելի հեշտ,
արդյունավետ, հասցնելով նրան ար-
վեստի աստիճանին: Մենք պետք ե
սովորենք ըմբռնել աշխատանքը
վորպես ստեղծագործություն: Ստեղ-
ծագործությունը մի հասկացողու-
թյուն ե, վոր մենք գրականագետ-
ներս չափազանց հաճախ ենք ոգտա-
գործում, հաղիվ թե այդ իրավունքն
ունենալով: Ստեղծագործությունը
հիշողության աշխատանքի լարման
այն աստիճանն ե, յերբ նրա աշխա-
տանքի արագությունը գիտելիքների
ու տպավորությունների պաշարից
քաղում ե ամենից ավելի ցայտուն ու
բնորոշ փաստերը, պատկերներն ու
մանրամասնությունները և մտցնում
ե դրանք ամենից ավելի ճշգրիտ,
պայծառ ու բոլորի համար հասկանա-

լի խոսքերի մեջ: Մեր յերիտասարդ
գրականությունը չի կարող պարծե-
նալ այդ հատկությամբ: Մեր գրակա-
նագետների տպավորությունների
պաշարը և գիտելիքների քանակը մեծ
չե, և այդ ընդարձակելու ու խո-
րացնելու մի առանձին հոգատարու-
թյուն չի զգացվում:

19-րդ դարի յեւրոպական և ռու-
սական գրականության հիմնական
թեման ե անձնավորությունը՝ իր
հակադրությամբ հասարակությանը,
պետությանը, բնությանը: Այն գըլ-
խավոր պատճառը, վորը դրդում եր
անձնավորությանը՝ կանգնեցնել ի-
րեն բուրժուական հասարակության
դեմհանդիման—հանդիսանում ե բա-
ցատական տպավորությունների առա-
տության յուրահատուկ, դասակար-
դային գաղափարներին և կենցաղի
տրադիցիաներին հակառող կազմա-
կերպումը: Անձնավորությունը լավ
եր զգում, վոր այդ տպավորություն-
ները ճնշում են նրան, դանդաղեցնում

են նրա աճման պրոցեսը, սակայն
թույլ եր հասկանում էր պատասխա-
նատվությունը բուրժուական հասա-
րակության հիմքերի գոեհկությամ,
ստորության, հանցադործության հա-
մար: Չոնառան Սվիֆտը մեկն է ամ-
բողջ Յեվրոպայում, սակայն Յեվրո-
պայի բուրժուազիան դտնում եր վոր
նրա սատիրան հարվածում է միայն
Սնգլիային: Իսկ ընդհանրապես ըմ-
բոստացող անձնավորությունը, քն-
նադատելով իր հասարակության կյան
քը, սակավ դեպքում է շատ վատ եր
գիտակցում իր պատասխանատվու-
թյունը հասարակության ամոթալի
պրակտիկայի համար: Յեվ յերը նա
քննադատում եր գոյություն ունեցող
կարգերը, վորպես հիմնական դրդա-
պատճառ, ավելի սակավ դեպքում եր
գործում սոցիալ-տնտեսական պատ-
ճառների նշանակության խորն ու
ճիշտ ըմբանումը, իսկ ավելի հաճախ՝
քննադատությունն առաջ եր դալիս
նրանից, վոր նա գգում եր իր գոյու-

թյան անհուսալի լինելը կապիտա-
լիզմի նեղ յերկաթե վանդակում կամ
իր կյանքի անհաջողության համար,
նրա ստորացուցիչ լինելու համար
վրեժխնդիր լինելու ձգտումից: Յեվ
կարելի յէ ասել, վոր յերը անձնավո-
րությունը դիմում եր բանվորական
մասսային, այդ անում եր վոչ թե
մասսայի շահերի համար, այլ այն
հույսով, վոր բանվոր դասակարգը,
կործանելով բուրժուական հասարա-
կությունը, կապահովի նրա համար
մաքի ազատությունը, գործողու-
թյունների ինքնակամությունը: Յես
կկրկնեմ՝ մինչհեղափոխական գրա-
կանության հիմնական ու գլխավոր
թեման է հանդիսանում այն մարդու
գրաման, վորին նեղ է թվում կյան-
քը, վորն իրեն ավելորդ է գգում հա-
սարակության մեջ, նրանում հարմար
տեղ է փնտրում իր համար, չի գրտ-
նում այդպիսի տեղ և—տանջվում է,
գոհվում՝ կամ հաշտվելով իրեն թըշ-
նամի հասարակության հետ և կամ

ընկնելով հարեցողության գիրկը,
հասնելով ինքնասպանության:

Մեզ մոտ, Սոցիալիստական Խորհուրդների Միության մեջ, ամբողջ մարդիկ չպետք է լինեն և չեն կարող լինել: Ամեն մի քաղաքացուն լայն ազատություն է տրված դարգացնելու իր ունակությունները, ձիրքերն ու տաղանդը: Անձնավորությունից պահանջվում է միայն մի բան՝ յեղիր աղնիվ, անդասակարգ հասարակություն ստեղծելու հերոսական աշխատանքում քո ցուցաբերած վերաբերմունքի մեջ:

Սոցիալիստական Խորհուրդների Միության մեջ բանվորա-գյուղացիական իշխանությունը նոր կուլտուրայի շինարարության աշխատանքին կոչել է ազգաբնակչության ամբողջ մասսային: Դրանից հետևում է, վոր սխալների, անկանոնությունների, աշխատանքի խոտանի պատասխանատվությունը, քաղքենիական գոհակության, ստորության, կեղ-

ծավորության ու անսկզբունքայնության բոլոր արտահայտությունների պատասխանատվությունն ընկնում է մեզ բոլորիս վրա և մեղանից յուրաքանչյուրի վրա: Նշանակում է քրննադատությունն իրոք պետք է ինքնաքննադատություն լինի, նշանակում է, մենք պետք է մշակենք սոցիալիստական բարոյագիտության սիստեմ, մեր աշխատանքի, մեր փոխադարձ հարաբերությունների մի ռեգուլյատոր:

Պատմելով այն փաստերը, վորոնք նշում են բանվորի, գործարանների մտավոր աճումը և դարավոր սեփականատերի կոլեկտիվիստ-կոլտնոտե սական դառնալը, մենք, գրականագետներս, հենց միայն սլատմում ենք և չատ վատ ենք պատկերում այդ կերպարանափոխության հմոցիոնալ պրոցեսը:

Մենք մինչևի այժմ ել վատ ենք տեսնում իրականությունը: Նույնիսկ յերկրի տեսարանը խոշոր չափով

փոխվել է, անհետացել է նրա աղքատիկ խայտաբղետութիւնը՝ վարսակի կապտավուն շերտը, իսկ նրա կողքին մի կտոր հերկված սև հոգ, տարեկանի վոսկեգուն ժապավենը, կանաչաւուն ցորենի ժապավենը, մոլախոտերով պատած հողի շեցտեր, իսկ ընդհանուր առմամբ՝ ցիրուցանութիւնը և կտրվածութիւնը խայտաբղետ դրոշմ։ Մեր որերին հողի հսկայական տարածութիւններ ներկված են հզոր, միապաղաղ դուշնով, գյուղում ու քաղաքում բարձրանում է մոշ թեյ յեկեղեցու դմբեր, այլ հասարակական նշանակութիւն ունեցող հսկայական շէնքեր։ Վիթխարի գործարանները փայլելում են առատ ապակով, իսկ փոքրիկ, հեթանոսական, բազմատեսակ, խաղալիքների նման հին յեկեղեցիները համոզիչ կերպով վկայում են մեր ժողովրդի տաղանդավորութիւնը, վերն արտահայտված է յեկեղեցական ճարտարապետութիւն մեջ։ Գրականութիւն մեջ չկա բնու-

թիւն այն նոր տեսարանը, վերը մեծ չափով փոխել է մեր յերկրի կերպարանը։

Մենք ապրում ենք այն եպոխտում, յերբ արմատապես կտրվում է հին կենցաղը, այն եպոխտում, յերբ մարդու մեջ զարթնում է նրա սեփական արժանապատուութիւնը պայծառութեամբ, այն եպոխտում, յերբ նա գիտակցում է ինքն իրեն, վորպէս աշխարհն իրապէս փոխող մի ուժ։ Շատերի համար ծիծաղելի յե, յերբ կարդում են, վոր մարդիկ իրենց Սվինուխին, Սորակին, Կուտեյնիկով, Պոպով, Սվիշչով և այլ ազգանունները փոխում են՝ Լենսկիյ, Նովիյ, Պարտիզանով, Դեզով, Ստոլյարով և այլ ազգանուններով։ Դա ծիծաղելի յե, վորովհետեւ այդ վկածաղելի յե, վոր մարդ հրաժարվում է այն, վոր մարդ հրաժարվում է կրել այն ազգանունը կամ մականունը, վորն ստորացնում է նրան, հիշեցնելով պապերի ու հայրերի ծանր ստրկական անցյալը։

Մեր գրականութիւնը այնքան ու-
 չաղելի չի վերաբերում արտաքուստ
 մանր, բայց ներքուստ չափազանց
 արժեքավոր այն ցուցանիշներին, վո-
 ռոնք ցույց են տալիս մարդկանց ինք-
 նագնահատման փոխվելը, ուշադիր
 չեն նոր խորհրդային քաղաքացու զար-
 դացման պրոցեսներին: Կարող ե պա-
 տահել, վոր Սվինուսինը Լենսկու
 ազգանունը վերցրել է վոչ թե Պուշ-
 կինից, այլ 1912 թվականին Լենայի
 վոսկեսանքերում բանվորների մաս-
 սայական սպանության կապակցու-
 թյամբ, իսկ Կուտեյնիկովը իրոք
 պարտիզան է յեղել, իսկ Սոբակինը,
 վորի ճորտ, ստրուկ պապին թերեւս
 փոխել են չան հետ—իրոք «նոր» է
 զգում իրեն: Հեղափոխութիւնից ա-
 ոաջ ազգանունը փոխելու համար
 հարկավոր եր խնդիր տալ թագավորի
 «բարձրագույն անվան» և, յերբ վոմն
 Պեվցովը խնդրել եր փոխել իր ազգա-
 նունը՝ ըստ իր մոր և տատի, դարձ-
 նել Ավգոտին, խնդրի վրա մակա-

գրել եյին հետեւյալը՝ «հոգեկան հի-
 վանդ»:

Իսկ վերջերս ինձ այսպիսի փաստ
 հաղորդեցին՝ գերմանական նավա-
 տորմի մի նավաստի, պատմական
 ազգանուն կրող մի մարդ, դեկաբրիս-
 տի սերունդից, Վոլկոնսկին Փաշխա-
 տի դարձել:

«Ինչո՞ւ»—հարցրել են նրան:

«Վորովհետեւ սպաներին արգելե-
 ցին մեզ ծեծել»—պատասխանել է
 նա: Ահա մի ցայտուն որինակ, վորը
 ցույց է տալիս, թե ինչպե՞ս ժառան-
 գական արիւտողրատը, «կապույտ ա-
 րյուն» ունեցող մարդը, կորցնում է
 սեփական արժանապատվության
 զգացմունքը:

Նոր մարդու աճումն առանձնապէս
 ցայտուն կերպով նկատելի յե յերե-
 խաների վրա, իսկ նրանք բոլորովին
 դուրս են մնացել գրականության ու
 չաղության շրջանից: Մեր գրողնե-
 րը, կարծես, իրենց արժանապատվու-
 թյունից ցածր են համարում գրել յե-

յեխաների մասին և յերեխաների համար:

Յես կարծում եմ, չեմ սխալվում, նկատելով, վոր հայրերը սկսել են ավելի ու ավելի հոգատարություն ու քնքուլթյուն ցուցաբերել յերեխաներին և, ըստ իս, դա բոլորովին բնական է, վորովհետեւ յերեխաները մարդկության ամբողջ կյանքում առաջին անգամ հանդիսանում են վոչ թէ ծնողների փողի, տների ու կահույքի ժառանգները, այլ իրոք հզոր մի արժեքի՝ սոցիալիստական պետության ճառանգները, վորն ստեղծվել է հայրերի և մայրերի աշխատանքով: Յերեխաները յերբեք դեռ կյանք չեն մտել, վորպես անցյալի այնքան զիտակից, խիստ դատաւորներ, և յես կատարելապես հավատում եմ այն փաստին, վորը պատմեցին ինձ, — 11 տարեկան թոքախտավոր մի աղջիկ, իր հոր ներկայութեամբ, մատով ցույց տալով նրան, ասել է՝ «Ահա նա յե մեղա-

վոր, վոր յես հիվանդ եմ, մինչև քառասուն տարեկան հասակը նա իր առողջությունը վատնել է ամեն տեսակ կեղտոտությունների վրա, իսկ հետո ամուսնացել է մորս հետ, նա դեռ քսանյոթը տարեկան է, նա ուռղջ է, իսկ սա՝ տեսնո՞ւմ եք, ինչպես խեղճ է, յես ել նրան եմ քաշել»:

Ծատ պատճառներ ունենք սպասելու, վոր յերեխաների այդպիսի դատաւորությունները հազվագյուտ չեն լինի:

Իրականությունը մեզ ավելի ու ավելի «հում նյութ» է տալիս գեղարվեստական ընդհանրացումների համար: Սակայն վոչ դրամա, վոչ էլ վեպը դեռ բավականաչափ չեն տալիս խորհրդային այն կնոջ բավականաչափ ցայտուն պատկերը, վորն ազատորեն և հիանալի կերպով դործում է սոցիալիստական կյանքի կառուցման առաջնությունը: Նույնիսկ նկատելի յե, վոր դրամատուրգներն

աշխատում են, վորքան կարելի յե, բիչ տալ կանանց դերեր: Դժվար ե բացատրել, թե ինչ ե դրա պատճառը: Մինչդեռ թեպետ մեզ մոտ կինը սոցիալապես իրավահավասար ե տղամարդուն ե թեպետ նա հաջողությամբ ապացուցում ե իր ձիրքերի բամաղանությունն ու իր աշխատունակության լայնությունը, այդ իրավահավասարությունը չատ հաճախ, չատ բանոծմ, արտաքին ու ձեւական ե: Տղամարդը դեռ մինչեւ այժմ ել չի մոռացել, կամ ժամանակից առաջ ե մոռացել, վոր տասնյակ դարերի ընթացքում կինը դաստիարակվել ե դպական հաճույքների համար ե վորպես մի ընտանի կենդանի, վորն ընդունակ ե «տնտեսուհու» դեր խաղալու: Պետք ե, վոր տղամարդիկ վճարելին պատմության այդ հին զազրելի պարտքը յերկրի ազդաբնակության կես մասին: Յեւ այստեղ դրականությունը պետք ե ախատի պատկերել կնոջ աշխատանքն

ու հողերանությունն ախպես, վոր նրան ցուցաբերվող վերաբերմունքը բարձրանա բոլորի կողմից ընդունված քաղքենիական վերաբերմունքից, վորը վերս ե ամփնած աքաղաղներից:

Ապա, յես անհրաժեշտ եմ համարում մատնանշել, վոր խորհրդային գրականությունը միմիայն ուսական լեզվի գրականություն չե, դա համամիութենական գրականություն ե: Վորովհետեւ յեղբայրական հանրապետությունների գրականությունները, տարբերվելով միայն լեզվով, ապրում ու աշխատում են նույն այն զաղափարի բարբեր ազդեցությամբ, վորը միացնում ե կապիտալիզմի կողմից անջատված աշխատավորական ամբողջ աշխարհը, — պարզ ե, վոր մենք իրավունք չունենք անտեսելու ազգային փոքրամասնությունների գրական ստեղծագործությունը միայն այն պատճառով, վոր մենք ավելի բազմաթիվ ենք: Արվեստ

տի արժեքը չափւում ե վոչ թե քանակով, այլ վորակով: Յեթե անցյալում մենք ունեցել ենք հսկա Պուշկինին, այդ դեռ չի նշանակում, թե հայերը, վրացիները, թաթարները, ուկրաինացիները և այլ ցեղերն ընդունակ չեն տալու գրականութեան, յերաժշտութեան, նկարչութեան, քանդակագործութեան մեծագույն վարպետներ: Չպետք է մոռանալ, վոր Սոցիալիստական Հանրապետութեանների Միութեան ամբողջ տարածութեան վրա արագորեն դարձանում և աշխատավոր ժողովրդի ամբողջ մասսայի վերածնման պրոցեսը՝ վերածնումը դեպի արդիւ մարդկային կյանքը, դեպի նոր, սոցիալիստական ստեղծագործումը: Մենք արդեն տեսնում ենք, վոր այդ պրոցեսը քանի զնում, այնքան ավելի հզոր թափով յերեւման և բերում 170 միլիոնից բաղկացած մասսայում թաքնւած ունակութեաններն ու տաղանդները:

Յես անհրաժեշտ եմ համարում, ընկերներ, ձեզ հաղորդելու մի թաթար գրականագետից իմ ստացած նամակը.

«Հոկտեմբերյան Մեծ Հեղափոխութեանը մեզ ճնշված, հետամնաց ժողովուրդներից դուրս յեկած գրողներիս, անսահման հնարավորութեաններ տվեց, վորոնց թվում նաև հնարավորութեան՝ ուստական գրականութեան մեջ մտնելու, ճիշտ և, դեռ վոչ այնքան կատարելագործված ըստեղծագործութեաններով: Մեր՝ աղքատիքի լեզվով գրողներին թիպն արդեն հասնում է տասնայկների և ուսյիսիկ հարյուրների: Այդ մի կողմից: Մյուս կողմից, այժմ ուսանողներն խորհրդային գրականութեանը կարդում են վոչ միայն ուս մասսաները, այլև մեր Խորհրդային Միութեան բոլոր ժողովուրդների աշխատավորները: Նրանով դատարարակվում են բոլոր ազգութեաններին պատկանող յերիտասարդ սերնդի և լիոնավորների»

րը : Այսպիսով, խորհրդային պրոլե-
տարական գեղարվեստական ուսե-
րեն գրականությունն այլևս դադա-
րել է բացառապես ուսերեն խոսող,
ուսերեն ծագում ունեցող մարդ-
կանց գրականություն լինելուց, այլ
ատրիճանաբար ինտերնացիոնալ բը-
նույթ է ստանում նաև իր ձևով :
Այդ կարևոր պատմական պրոցեսը
առաջին սլլանն է հանում բոլորովին
անակնկալ, նոր խնդիրներ ու նոր
պահանջներ :

Դժբախտաբար, այդ հասկանում են
վոչ բոլոր գրողները, քննադատներն
ու խմբագիրները : Ուստի այսպես
կոչված կենտրոնի փորձված գրական
հասարակությունը չարունակում
է նայել մեզ վրա վորպես «ազդագրա-
կան եքսպոնատի» վրա :

Վոչ բոլոր հրատարակչություննե-
րը հաճույքով են ընդունում մեր
գրվածքները՝ հրատարակելու հա-
մար, վորոնք, ձեռագիր, ընդունելիս,
չատ հաճախ հասկացնում են, վոր

մենք նրանց համար հանդիսանում
ենք «վերադիր ծախս» կամ «հարկա-
դիր ասորտիմենտ», վոր նրանք «զի-
տակցաբար զիջում են կուսակցու-
թյան ազգային քաղաքականության» :
Այդ «ազնվության ժեստերը» միան-
գամայն իրավացի կերպով վիրավո-
րում են մեր ինտերնացիոնալ միաս-
նության զգացմունքը, լիարժեք մար-
դու գիտակցությունը : Իսկ քննադա-
տությունը, ստեղծագործությունը
լույս տեսնելուց հետո, լավագույն
գեպքում մի յերկու «ջերմ խոսքեր»
կուղղի հեղինակի ու գրքի հասցեյին,
դարձյալ վոչ այնքան արժանիքների
համար, վորքան «ի հարգանս» լե-
նինյան-ստալինյան ազգային քաղա-
քականության : Այդ նույնպես չի
դաստիարակում մեզ, այլ ընդհակա-
ռակը՝ սակավ փորձված մի քանի
ընկերների վրա դեմոքրիլիզացիոն
ազդեցություն է գործում : Ապա, սո-
վորական 5000-անոց միանվագ տի-

բաժից հետո, վորն ամբողջովին ըս-
պատում են մեծ քաղաքներում եկզո-
տիկան ու հազվագյուտ բաներ սիրող
ները, մեզ արխիվ են հանձնում: Այդ
պիսի պրակտիկան, բացի այն վոր
վատ ազդեցություն է գործում մեզ
վրա՝ թե՛ բարոյապես և թե՛ նյութա-
պես, նաև փակում է մեր ճանապար-
հը դեպի մասսայական ընթերցողը և
տանում է մեզ անխուսափելիորեն
դեպի ազգային սահմանափակվածու-
թյուն: Իսկ մենք, բնականաբար,
կուղեյինք լսել մեր նվաճումների
մասին, յեթե այդպիսիք կան,
մեր բացերի ու սխալների
մասին, վորոնց թիվը մեզ մոտ ա-
վելի չե, քան ուրիշների մոտ, վոր-
պեսզի կարողանանք հետադարձ
վերացնել դրանք: Մենք կուղեյինք
մատչելի դառնալ մասսայական ըն-
թերցողին»:

Յերեմի այս նամակը պատրաստ են
ստորագրելու բոլոր դաշնակից հան-
րապետությունների ու ինքնավար

մարզերի գրականության ներկայա-
ցուցիչները: Մեր գրականության
պատմաբաններն ու քննադատները
պետք է ուշադրություն դարձնեն
այդ նամակին և սկսեն այնպիսի աշ-
խատանք, վորը մեր յերկրի մարդ-
կանց ներշնչի, թե նրանք՝ թեպետ
այլացել ու այլալեզու չեն, բայց և
այնպես բոլորը և նրանցից ամեն մե-
կը հանդիսանում է աշխարհիս առա-
ջին սոցիալիստական հայրենիքի քա-
ղաքացին: Մենք պետք է արդարացի
համարենք մեր քննադատությանն
ուղղված կշտամբանքները: Քննադա-
դատությունը, վորն ամենից շատ են
կարդում գրողները, մեր այդ քննա-
դատությունը, տաղանդավոր չե,
սխտլաստիկ է կիսագրագետ է ընթա-
ցիկ իրականության հանդեպ: Գրը-
քային-լրագրային գիտելիքների չըն-
չինությունն առանձնապես ցայտուն
կերպով յերեմիան է գալիս մեր որե-
րում, յերբ արագորեն փոխվում է
իրականությունը, վորն առատ է բազ-

մաղան դործերով : Միասնական ղեկա-
վար քննադատական փիլիսոփայա-
կան գաղափար չունենալով ու այդպի-
սին մշակած չլինելով , ողտադործելով
միջոտ միեւնույն ցլտատները Մարք-
սից , Ենգելսից ու Լենինից , քննադա-
տությունը , թեմաները , մարդկանց
բնութագրություններն ու փոխհա-
րաբերությունները գնահատելիս , հա-
մարյա յերբեք չի յեւնում այն փաստե-
րից , վորոնք տալիս ե կյանքի բուռն
րնթացքի անմիջական դիտումը : Մեր
յերկրում կատարվող աշխատանքում
կան այնպիսի շատ բաներ , վորոնք
չեյին կարող , ի հարկե , նախատեսել
Մարքսը , Ենգելսը : Գննադատությու-
նը հեղինակին ասում ե՝ «Այդ սխալ
ե , վորովհետեւ մեր ուսուցիչներն
այդ առթիւ աշտպես են ասում» : Սա-
կայն նա չի կարողանում ասել՝ «Այդ
ճիշտ չե , վորովհետեւ իրականության
փաստերը հակասում են հեղինակի
ցուցումներին» : Գննադատներն ի-
րենց ողտադործած բոլոր ոտար մըս-

քերից յերեւի բոլորովին մոռացել են
Ենգելսի ամենաարժեքավոր միտքը՝
«Մեր ուսմունքը գալանանք չե , այլ
դործողության ղեկավարություն» :
Գննադատությունը բաւականաչափ
դործունակ , ճկուն , կենդանի չե և
վերջապես քննադատությունը չի կա-
րողանում սովորեցնել հեղինակին
գրել պարզ , ցայտուն կերպով ու
խնայողաբար , վորովհետեւ ինքը գը-
րում ե ճոռոմ , աղոտ լեզվով , իսկ
վոր ավելի վատ ե՝ կամ անտարբեր ,
կամ չափից դուրս տաք : Վերջինս
այն դեպքում , յերբ նա հեղինակի
հետ կապված ե անձնական համակե-
րանքով , ինչպես և «առաջնորդամո-
լությամբ»՝ քաղքենիության այդ վա-
րակիչ հիմանդությամբ բռնված մի
բուռ մարդկանց շահերով :

«Առաջնորդամոլությունը» մեր ե-
պոխայի հիմանդությունն ե : Նա ա-
ռաջ ե յեկել մանր քաղքենիության
ավելի ցածր կենսունակությունից ,
այն զգացողությունից , թե անխու-

սափեւի յե նրա կորուստը կապիտա-
լիստի և պրօլետարի պայքարում, և
այն յերկյուղից, վոր զգում ե նա
կործանման հանդեպ, այն յերկյու-
ղից, վորն այն կողմ ե քշում քաղ-
քենուն, վորը նա վաղուց վարժվել
ե համարել Ֆիլիկապես ամենաուժե-
ղը՝ աշխատանք տվողի, ուրիշի աշ-
խատանքը չհագործողի, աշխարհը
կողոպտողի կողմը: Ներքուստ «ա-
ռաջնորդամոլությունը» արդյունք ե
այն հանգամանքի, վոր ինդիվիդուա-
լիզմն ապրել ե իր դարը, անգոր ու
աղքատ ե, արտաքուստ նա արտա-
հայտում ե այնպիսի նեխվող ու-
ռուցքների ձևով, ինչպիսիք են որի-
նակ՝ Եբերտը, Նոսկեն, Հիտլերը և
կապիտալիստական գործունեյու-
թյան նման հերոսները: Մեզ մոտ,
վորտեղ ստեղծվում ե սոցիալիստա-
կան իրականությունը, այդպիսի ու-
ռուցքներ հնարավոր չեն, ի հարկե:
Բայց մեզ մոտ, վորպես քաղքե-
նիության ժառանգություն, դեռ

մնացել են մի քանի բշտիկներ,
լոռնք ընդունակ չեն հասկանալու «ա-
ռաջնորդամոլության» և դեկավարու-
թյան եյական տարբերությունը, թե-
պետ կատարելապես պարզ ե այդ
տարբերությունը: Ղեկավարությու-
նը, բարձր գնահատելով մարդկանց
յեռանդը, ցույց ե տալիս ուժերի նը-
վազագույն մոխումով գործնական
լավագույն արդյունքի հասնելու ու-
ղին, իսկ «առաջնորդամոլությունը»
հանդիսանում ե քաղքենու ինդիվի-
դուալիստական ձգտումը՝ գլխի չա-
փով բարձրանալու ընկերներից, վո-
րը շատ հեշտությամբ ե հաջողում՝
մեխանիկական ճարպիկություն, դա-
տարկ գլուխ և դատարկ սիրտ ունե-
նալիս:

Քննադատությունը շատ մեծ տեղ
ե տալիս կիսագրագետ գրախոսնե-
րին, վորոնք միայն տարակուսանք և
վիրավորանք են առաջացնում հեղի-
նակների մոտ, բայց ընդունակ չեն
մի բան սովորեցնելու: Նա չի

նկատում նարողնիկական գրակա-
նության մի քանի գաղափարնե-
րը վերածնելու և կյանքի մեջ մտցնե-
լու փորձերը, և վերջապես — վոր
չատ կարևորն է, չի հետաքրքրվում
մարդային գրականության, և չենք
ասում միութենական գրականության
աճամբ: Պետք է նաև ասել, վոր
բննադատությունը չի շոշափում գը-
րականագետներին հրապարակային
այն հաղորդագրումները, թե «ինչ-
պես են գրում նրանք», իսկ այդ հա-
ղորդագրումները մեծ ուշադրու-
թյուն են պահանջում քննադատու-
թյունից:

Ինքնաքննադատությունն անհրա-
ժեշտ է, ընկերներ: Մենք աշխատում
ենք այն պրոլետառիատի առջև, վոր-
քնն ավելի ու ավելի գրագետ դառ-
նալով, անընդհատ ավելացնում է իր
պահանջները մեր արվեստի նկատ-
մամբ:

Գաղափարների կոմունիզմը չի զու-
գաղիպում մեր գործողությունների

ու փոխհարաբերություններին բնույ-
թին, փոխհարաբերություններ, վոր-
տեղ լուրջ դեր է խաղում քաղքենիու-
թյունը՝ արտահայտված նախանձով,
աբահությամբ, գոհճիկ գրպարտու-
թյուններով, փոխադարձ պարսպամե-
քով:

Քաղքենիության մասին մենք չատ-
բան ենք դրել և գրում ենք, սակայն
քաղքենիության մարմնավորումը մի
անձնավորության մեջ, մի պատկե-
րում, չի տրվել: Իսկ նրան անհրա-
ժեշտ է պատկերել հատկապես մի ան-
ձում և այնքան խոշոր, ինչպես
ստեղծված են համաշխարհային տի-
պերը՝ Փաուստոր, Համլետը և ուրիշ-
ները:

Հիշեցնեմ, վոր քաղքենիությունը
մակարույծների ստվար մի դասա-
կարգ է, վորն առանց մի բան ար-
տադրելու, ձգտում է ոգառել — կլա-
նել, վորքան կարելի չէ, շատ և կլա-
նում է: Մակարույծ լինելով գյու-
ղացիության և բանվոր դասակարգի

մարմնի վրա, ձգողություն ունենալով միշտ դեպի խոշոր բուրժուազիայի թաթերը, իսկ յերբեմն արտաքին պահանջների պատճառով անցնելով պրոլետարիատի կողմը և մտցնելով նրա միջավայրը անարխիզմ, եզոցենարիզմ և քաղքենուեն պատմականորեն հատուկ գոհակությունը, այն մտքի գոհակությունը, վորը սնվում է բացառապես կենցաղի փաստերով և վոչ աշխատանքի ներշնչումով, — քաղքենիությունը — ինչ չափով վոր նա մտածել է և մտածում է — միշտ քարոզել ու ամրացրել է նվազագույն դիմադրության գծով անհատի աճելու փիլիսոփայությունը, փնտռել է ավելի կամ պակաս կայուն ուժերի միջև: Քաղքենիության վերաբերմունքը պրոլետարիատին առանձնապես ցայտուն կերպով բնորոշվում է այն փաստով, վոր նույնիսկ կիսաաղքատ գյուղացին, մի բուռ հողի սեփականատուրը արհամարհում էր ձեռներեց զատ

վորե և սեփականություն չունեցող գործարանային բանվորին: Վոր պրոլետարն ունի նաև գլուխ, քաղքենին նկատում էր միայն այն ժամանակ, յերբ պրոլետարի ձեռները սկսում էին հեղափոխականորեն դործել գործարանից դուրս:

Վոչ բոլոր մոլախոտերը վնասակար կամ անուգուտ են, վորովհետև շատ մոլախոտերից բուժիչ թույներ են պատրաստում: Քաղքենիությունն արտադրում է միայն կործանիչ թույն: Յեթե քաղքենին իրեն չզգար վորպես կապիտալիզմի մեքենայի մի շնչին մասը, նա չէր ձգտի այնքան համառորեն ու այնքան արարդյուն կերպով ապացուցել իր նըշանակալի լինելը և իր մտքի, կամքի ապատությունը, ապացուցել իր կյանքի իրավունքը և 19-20 դարերի ընթացքում չէր ստեղծի այդքան շատ «ավելորդ մարդիկ», «զղջացող աղնրվականներ», «դժնդակ ժամանակ-

ների հերոսներ», «վոչ աղաւնի, վոչ ազուս» տիպի մարդիկ:

Խորհուրդներն Միութեան մեջ քաղ-քենիութեանը տեղահան և արված, դուրս և վոնդված իր բներից, հար-յուրավոր գալստական քաղաքներից, ցիրուցան և յեղել ամենուրեք և, ինչ-պես գիտենք՝ թափանցում և նույն-իսկ լենինի կուսակցութեան մեջ, վորտեղից նրան դուրս են մղում ա-մեն մի կուսակցական զաման ժամա-նակ: Այնուհանդերձ նա մնում և գործում և վորպես ամոթալի հիվան-դութեան առաջացնող մի միկրոբ:

Գրականութեան կուսակցական ղե-կավարումը պետք և խստիվ մաքրվի քաղքենիութեան բոլոր ազդեցու-թեաններէ: Գրականութեան մեջ կուսակցականները պարտավոր են հանդիսանալ վոչ միայն այն իդեոլո-գիայի ուսուցիչները, վորը կազմա-կերպում և բոլոր յերկրների պրոլե-տարիատի եներդիան՝ նրա մղելիք վերջին ազատամարտի համար, այլ

իր ամբողջ վարքագծով պետք և ներ-կայացնի բարոյական հեղինակավոր մի ուժ: Այդ ուժը զբաղանապետների միջավայրը պետք և մացնի նախ և առաջ այն գիտակցութեանը, վոր նը-րանք կոլեկտիվ կերպով պատասխա-նանուս յեն իրենց միջավայրում տե-ղի ունեցող բոլոր յերեսլթիերի հա-մար: Խորհրդային զբաղանութեանը, վորքան ևլ բազմազան լինեն նրա տա-ղանդները, վորքան ևլ աճի անընդ-հատ նոր շնորհալի գրողների թիվը, պետք և կազմակերպված լինի, վոր-պես միասնական կոլեկտիվ, մի ամ-բողջութեան, վորպես սոցիալիստա-կան կուլտուրայի մի հզոր գործիք:

Գրողների միութեանը ստեղծվում և վոչ թե նրա համար, վոր նա միայն ֆիզիկապես միացնի խոսքի արվես-տագետներին, այլ վորպեսզի պրո-ֆեսիոնալ միացումը հնարավորու-թեան տա նրանց ըմբռնելու իրենց կոլեկտիվ ուժը, առավելագույն պար-զութեամբ վորոշելու նրա ստեղծա-

գործութեան բազմազան ուղղութիւնները, նրա նպատակադրումները, ներդաշնակորեն միացնելու բոլոր նրա պատակներն այն միասնութեան մեջ, վորը զեկաւարտում է յերկրի աշխատանքային ստեղծագործական ամբողջ յեռանդր:

Մոտքը, իհարկէ, անհատական ըստեղծագործութիւնը սահմանափակելուն չի վերաբերում, այլ այն բանին, վոր մեծագույն հնարավորութիւններ տրվեն նրա հետագա հորդարեացման համար:

Պետք է ըմբռնել, վոր քննադատական ռեալիզմն առաջ է յեկել, վորպէս անհատական ստեղծագործութիւն այն «ալելուրդ մարդկանց», վորոնք, անընդունակ լինելով կյանքի պայքար մղելու, և իրենց համար տեղ չգտնելով նրա մեջ, ալիւլի կամ պակաս չափով վորոշակի գիտակցելով անձնական դոյութեան նպատակադրել լինելը, ալլ նպատակադրելութիւնը հասկանում եյին միմե-

այն վորպէս սոցիալական կյանքի բնորոշ յերեւոյթներ, վորպէս պատմական ամբողջ պրոցեսի անխմաստութիւն:

Բնավ չթխտելով քննադատական ռեալիզմի լայն հսկայական աշխատանքը, բարձր գնահատելով արվեստի ու նկարչութեան մեջ նրա ձեռք բերած բոլոր ձևական նվաճումները, մենք պետք է հասկանանք, վոր այդ ռեալիզմը մեզ անհրաժեշտ է միայն անցյալի մնացորդները լուսաբանելու համար, դրանց դեմ պայքարելու և զրանք խարանելու համար:

Սակայն ռեալիզմի այդ ձեւը չբնորոշուց և չի կարող ծառայել վորպէս սոցիալիստական անհատականութեան դատաւարակ, վորովհետեւ ամեն ինչ քննադատելով, նա վռնչելի հատաւարել, կամ ամենապատշաճ պէրում վերսկսել է պնդել այն, ինչ վոր թխտել է:

Ինչպէս տեսնում ենք մեր աշխատանքի հերոսները որինակով, վորոնք

Հանդիսանում են բանփորական մաս-
 ույի ծաղիկը, սոցիալիստական ան-
 հատականութիւնը կարող է վարդա-
 նայ միմիայն կուէկտիւ աշխատանքի
 պայմաններում, վորն իր առջեւ դը-
 րել է մեծազույն, իմաստուն մի նը-
 պատակ՝ ազատել ամբողջ աշխարհի
 աշխատավորներին մարդկանց խեղ-
 դող կապիտալիզմի իշխանութիւնից։
 Սոցիալիստական ռեալիզմը հաստա-
 տում է գոյութիւնը, վորպես մի
 գործողութիւն, վորի նպատակն է
 անընդհատ զարգացնել մարդու ամե-
 նաարժեքավոր անհատականութիւն-
 ները, վորպեսզի նա հաղթա-
 նակ տանի բնութիւն ուժերի վրա,
 հանուն իր առողջութիւն ու յերկա-
 րակեցութիւն, վորպեսզի նա մեծ
 բախտ ունենա ապրելու այն հողի
 վրա, վորն ուղում է մշակել նա իր
 պահանջների անընդհատ աճման հա-
 մաճայն ամբողջովին, վորպես մի բն-
 տանիք կազմող մարդկութիւն հիւ-
 նալի բնակավայր։



Այդքան շատ բան ասելով մեր գրա-
 կանութիւն թերութիւնների մասին,
 յես պարտաւոր եմ նշել նրա արժա-
 նիքներն ու նվաճումները։ Այստեղ
 յես ժամանակ ու տեղ չունեմ մատնա-
 նշելու մեր և արեւմտյան գրականու-
 թիւն խիստ տարբերութիւնը։ Դա
 մանրակրկիտ ու յերկարատե աշխա-
 տանք է, այդ հարցը մասնակի կեր-
 պով կլուսաբանի ընկ. Ռադեկն իր
 սուր զեկուցման մեջ։ Յես միայն կա-
 սեմ, վոր ամեն մի անաչառ գնահա-
 տողի համար միանգամայն պարզ է,
 վոր մեր գրականութիւնն արեւմու-
 յան գրականութիւնից գերազանցեց
 թեմաների, նորութիւնով, և հիշեց-
 նեմ, վոր մեր գրականագետներից շա-
 տերն Արեւմուտքում ավելի բարձր
 են գնահատւած, քան իրենց հայրե-
 նիքում։ Մեր գրականութիւնն նվա-
 ճումների մասին յես արդեն բարձրա-
 ձայն և մեծ բերկրանքով խոսել եմ

1930 թվականին «Գրականության Մասին» գրքում (եջ 52-54) տպված մի հոդվածում և այդ գրքի մյուս շատ հոդվածներում: Այդ ժամանակից ի վեր անցել է լարված աշխատանքի չորս տարի: Արդյոք այդ աշխատանքն ինձ իրավունք տալի՞ս է բարձրացնելու մեր գրականության նվաճումների գնահատումը: Այդ իրավունք ինձ տալիս է այն բարձր գնահատականը, վորը տվել է մեր հիմնական ընթերցողը՝ բանվորն ու կոլտնտեսականը, մի շարք գրքերի: Այդ գրքերը ձեզ հայտնի չեն, ուստի յես չեմ բերի նրանց անունները, այլ միայն կասեմ, վոր մեզ մոտ կա խոսքի արվեստագետների մի սովոր խմբակ, վորը մենք կարող ենք ընդունել վորպես առաջատար՝ գեղարվեստական գրականության զարգացման պրոցեսում:

Այդ խմբակը միացնում է ամենատաղանդավոր կուսակցական գրականագետներին անկուսակցականներին

հետ և վերջիններս դառնում են «խորհրդային», վոչ թե խոսքով, այլ գործով, ավելի ու ավելի խորը յուրացնելով կուսակցության ու բանվորագյուղացիական խորհրդային իշխանության հերոսական աշխատանքի համամարդկային իմաստը: Չպետք է մոռանալ, վոր ողջական բուրժուական գրականության համար համարյա հարյուր տարի յեր հարկավոր՝ հաշված 16-րդ դարի վերջերից, վորպեսզի նա տիրաբար կյանք մտնեի և վորոչ ազդեցություն գործեր նրա վրա: Խորհրդային հեղափոխական գրականության այդ ազդեցությունը հասավ 15 տարում:

Գեղարվեստական գրականությանը ներկայացվող պահանջների բարձրությունը, մի գրականության, վորն արագորեն նորացվում է իրականության մեջ և լենինի կուսակցության կուլտուրական հեղափոխական աշխատանքով, — այդ պահանջների բարձրությունը բացատրվում է կուսակ-

ցության կողմից գեղարվեստական
խոսքի արվեստին վերագրվող նշանա-
կության բարձր գնահատումով: Աշ-
խարհում չի յեղել և չկա մի պետու-
թյուն, վորտեղ գիտությունն ու գը-
րականությունը վայելեն այնպիսի
ընկերական ունություն, այնպիսի հո-
գատարություն՝ արվեստի ու գիտու-
թյան աշխատողների պրոֆեսիոնալ
փորակավորումը բարձրցնելու հա-
մար: Այդ ոգնության մասին, այդ աշ-
խատանքի մասին վկայում են մեզ
վոչ միայն ՎիեՄ-ի և Գրական
ԲՈՒՀ-ի կազմակերպումը:

Պրոլետարական պետությունը
պետք է դաստիարակի հուլտուրայի
հազարավոր հիանալի «վարպետներ»
և «հոգիների ինժեներներ»: Այդ ան-
հրաժեշտ է նրա համար, վոր հնարա-
վոր լինի բանվոր ժողովրդի ամ-
բողջ մասսային վերադարձնել աշխար-
հում ամենուրեք նրանից խլված իրա-
վունքը՝ դարգացնելու բանականու-

թյունը, տաղանդն ու ընդունակու-
թյունը:

Այդ հանգամանքը վոչ միայն տրա-
դիցիոն, այլև ռեալիստական գրակա-
նության մեջ մեզ դնում է «աշխար-
հի ու մարդկանց դատավորներին»,
«կյանքի քննադատներին» գիրքի մեջ,
սակայն մեզ իրավունք է տալիս ան-
միջականորեն մասնակցելու նոր կյան-
քի չինարարությանը, «աշխարհի փո-
փոխման» պրոցեսին: Իրավունք ու-
նենալն ամեն մի գրականագետին
պետք է ներշնչի այն գիտակցու-
թյունը, վոր նա պատասխանատու յե
ամբողջ գրականության և այն բոլոր
յերեվույթների համար, վորոնք
չպետք է լինեն նրա մեջ:

Որոհրդային գրականագետների
Միությունը միացնում է 1500 միա-
վոր, և մասսաների նկատմամբ մենք
ստանում ենք մի գրականագետ հա-
րյուր հազար ընթերցողներին: Դա
չատ չէ, վորովհետև Սկանդինա-
վյան թերակղզու բնակիչները ներկա

դարի սկզբներին ունեյին մի գրականագետ 230 բնակչին: Սոցիալիստական Հանրապետությունների Միության ազգաբնակչությունն անընդհատ, համարյա ամեն օր, ցուցադրում է իր տաղանդավորությունը, սակայն չպետք է կարծել, վոր մենք չուսույժ կունենանք 1500 տաղանդավոր գրող: Յերագեներ Հիսունի մասին: Չխաբվելու համար նշենք հինգ հանձարեղ և չորս չափ տաղանդավոր գրող: Յես կարծում եմ, վոր սկզբում այդ թիվը բավական է: Դրանից մնացածներն այնպիսի մարդիկ են, վորոնք դեռ մինչև այժմ ել բավականաչափ ուշադիր չեն վերաբերվում իրականությանը, վատ են կադմակերպում իրենց նյութը, անփութ են մշակում վերջինս: Այդ մնացորդին պետք է ավելացնել Միության մի քանի հարյուր թեկնածուներին, ապա հարյուրավոր «սկզանակ» գրողներին՝ բոլոր հանրապետություններում ու մարզերում: Նրան-

ցից հարյուրավորները գրում են, տասնյակներն արդեն տպագրում են իրենց յերկերը: 1933 և 1934 թվականներին զանազան քաղաքներում՝ սկսած Պարբերականից և Կոմսոմոյսից մինչև Ռոստով, Ստալինգրադ, Տաշքենդ, Վորոնեժ, Կաբարդինո-Բալկարիա, Թիֆլիս և այլն, լույս տեսավ մոտ 30 ժողովածու ու արմանախ՝ վորոնք լի յեն տեղական սկզանակ գրականագետների ստեղծագործություններով:

Գնահատել այդ աշխատանքը՝ քննադատության պարտականությունն է, վորը մինչև այժմ ել չի նկատում այդ, թեպետ ժամանակ է նկատելու:

Այդ աշխատանքը, ինչպես ել լինի նա, այնուամենայնիվ վկայում է ժողովրդի մասսայում տեղի ունեցող կուլտուրական պրոցեսների խորությունը: Կարդալով այդ զրքույկները, զգում եմ, վոր վոտանավորների, սլատմվածքների ու պիեսների հեղինակները բանթղթակիցներ և գյուղ-

Թղթակիցներ են: Յես կարծում եմ,
վոր մենք ունենք մի քանի տասնյակ
հազար յերիտասարդներ, վորոնք
ձգտում են աշխատել գրականության
ասպարիզում: Հարկավ, ապագա գրա-
կան ԲՈՒՀ-ը ի վիճակի չի լինի կլա-
նելու այդ բանակի մի տասներորդ
մասն անգամ:

Այժմ յես հարց կտամ՝ ինչո՞ւ հա-
մար ե կաղմակերպված գրականագետ-
ների համագումարը և ի՞նչ նպատակ-
ներ ե դրել նա իր առջև: Յեթե
միայն գրականության աշխատողնե-
րի պրոֆեսիոնալ բարորության նպա-
տակը՝ ապա հազիվ թե կարիք կար
այդպիսի վիթխարի գործի ձեռնար-
կելու: Յես կարծում եմ, վոր Միու-
թյունը պետք ե իր առջև նպատակ
դնի վոչ միայն գրականագետների
պրոֆեսիոնալ շահերը: Միություն-
ը վորոչ չափով պետք ե ստանձնի
սկսնակ գրողների թանակի դեկավա-
րումը, պետք ե կաղմակերպի նրան,
բաշխի նրա ուժերը աշխատանքի վա-
124

նագան բնագավառներում, սովորեցնի
աշխատել թե անցյալ և թե ներկա
նյութի վրա:

Մեր յերկրում աշխատանք ե կա-
տարվում «գործարանների պատմու-
թյունը» կաղմելու համար: Դուրս
յեկավ, վոր շատ դժվար ե բարձր-
րակ գրականագետներ ներգրավել
այդ աշխատանքին: Առայժմ այդ աս-
պարիզում աշխատում ե միմիայն բա-
նաստեղծ Շկապսկայան և Մարիա
Լեվբերգը, իսկ մյուսները վոչ միայն
ձեռք չեն տալիս հում նյութին, այլև
ժամանակ չեն դառնում մշակվածը
խմբագրելու համար:

Մենք չդիտենք մեզ անցյալ պատ-
մությունը: Ծրագրվում ե մասամբ
արդեն սկսել գրելու տոհմային իշ-
խանական քաղաքների պատմությու-
նը, նրանց հիմնադրումից մինչև մեր
որերը: Այդ աշխատանքը պետք ե,
ոչերկներով ու պատմվածքներով,
յուսաբանի ֆեոդալական Ռուսաստա-
նի կյանքը և Մոսկվայի իշխանների

ու թագաւորների գաղութային քաղա-
քականութիւնը, առևտրի ու ար-
դյունաբերութեան զարդացումը,
պետք է պատկերի գյուղացիութեան
շահագործումն իշխանի, կուսակալի,
վաճառականի, մանր քաղքենու ու յե-
կեղեցու կողմից և այդ բոլորը պսա-
կի կոլտնտեսութիւններէ կազմա-
կերպմամբ և գյուղացիութեան իսկա-
կան ու լիակատար ազատագրումով՝
«հողի իշխանութիւնից», սեփակա-
նութեան ճնշումից:

Մենք պետք է գիտենանք դաշնա-
կից հանրապետութիւնների անցյալի
պատմութիւնը: Այդ և ուրիշ շատ
կոլեկտիվ աշխատանքներին կարելի
յէ ներգրավել հարյուրավոր սկսնակ
գրողներ. այդ աշխատանքը նրանց ա-
մենալայն հնարավորութիւն կտա
ինքնակրթութեամբ պարապելու և
հում նյութի վրա կատարվող կոլեկ-
տիվ աշխատանքով ու փոխադարձ
քննադատութեամբ, իրենց վորակա-
ւորումը բարձրացնելու:

Մեղ անհրաժեշտ է գիտենալ այն
ամենը, ինչ վոր յեղել է անցյալում
բայց վոչ այնպես, ինչպես արդեն
պատմվել է դրա մասին, այլ այն-
պես, ինչպես լուսարանվում է այդ
բոլորը Մարքսի, Լենինի ու Ստալինի
ուսմունքով, ինչպես այդ իրականաց-
նում է գործարաններում ու գաշտե-
րում կատարվող աշխատանքը, վորը
կազմակերպում է, վորը ղեկավա-
րում է պատմութեան նոր ուժը՝ Սո-
ցիալիստական Հանրապետութիւն-
ների Միութեան պրոլետարիատի
կամքն ու բանականութիւնը:

Ահա թե վորն է, իմ կարծիքով,
գրականագետների միութեան խնդի-
րը: Մեր համագումարը վոչ միայն
մի հաշվետվութիւն պետք է լինի
ընթերցողների առջև, վոչ միայն
մեր տաղանդների ցուցահանդեսը,
այլ նա պետք է ստանձնի գրականու-
թեան կազմակերպումը, յերիտա-
սարդ գրականագետներին այնպիսի

աշխատանքով դաստիարակելու գոր-
ծը, վորը համամիութենական նշա-
նակութիւն ունի մեծ հայրենիքի
անցյալն ու ներկան բազմակողմանի
կերպով ճանաչելու համար:

ԸՆԿ. ՄԱՔՍԻՄ ԳՈՐԿՈՒ ՅԵԶՐԱՓԱԿՄԱՆ ՃԱՌԸ
ԽՈՐՀԻԳԱՅԻՆ ԳՐՈՂՆԵՐԻ ՇԱՄԱԳՈՒՄԱՐՈՒՄ

Այսպիսով՝ Միութեան Սոցիալիս-
տական Հանրապետութիւններին և
մարդերի գրողների անդրանիկ ընդ-
հանուր համագումարն ավարտեց իր
աշխատանքը: Այդ աշխատանքը
դուրս յեկավ այնչափ մեծ և բազ-
մատեսակ, վոր յես այժմ, յեզրա-
փակման խոսքիս մեջ, ի վիճակի
յեմ միայն արտաքին կերպով դժա-
գրել նրա խոր իմաստը, կարող եմ
միայն ամենաեղականը նշել այն բո-
լորից, ինչ վոր հայտաբերեց այդ
աշխատանքը:

Համագումարից առաջ և նրա
սկզբում գրողներից մի քանիսր և
նույնիսկ, կարծեմ, շատերը, չէին
րմբռնում համագումարի կազմա-
կերպման իմաստը. — ինչի՞ց յե հա-

մազուումարը, — հարցնում էյին այդ մարդիկ, — պիտի զրուցենք, ցրվենք և ամեն ինչ ելի պիտի մնա նույն վիճակի մեջ:

Դրանք շատ տարօրինակ մարդիկ են և համազումարում շատ իրավացի այդ մարդկանց անտարբերների ա- նունը տվին: Նրանց աչքերը տես- նում են, վոր մեր իրականության մեջ այս կամ այն բանը դեռ մնում է «իր նախկին վիճակում», սակայն նրանց անտարբերությանը մատչելի չե այն գիտակցությունը, վոր դա մնում է իր նախկին վիճակում մի- այն այն պատճառով, վոր պրոլե- տարիատին, — յերկրի այդ խակալան տիրոջ, ժամանակ է պակասում վերջնականապես խորտակելու, քա- րուքանդ անելու այդ մնացորդները: Այդ մարդիկ լիովին բավարարված են այն բանով, ինչ վոր արդեն ար- ված է, ինչ վոր նպաստել է իրենց առաջ քաշվել, հարմար դիրքեր գե- րավել և ամրացրել է իրենց հատուկ ինդիվիդուալիստական անտարբե-

րությունը: Նրանք չեն հասկանում, վոր մենք ամենքս շատ փոքրիկ մարդիկ ենք համեմատած այն մեծի հետ, վոր կատարվում է աշխար- հում. չեն հասկանում, վոր մենք ապրում և աշխատում ենք աշխատա- վոր մարդկության վերջին տրագե- դիայի առաջին դործողության սկզբում: Նրանք արդեն սովորել են ապրել առանց զգալու իրենց գո- յության վեհ իմաստը և մտահոգ- ված են միայն նրանով, վոր պահ- պանեն իրենց փոքրիկ և վատ տաշ- ված տաղանդների նպեմ փայլը, ի- բենց ազոտ պայծառափայլությու- նը: Նրանց համար անհասկանալի չե, վոր անձնական գոյության ի- մաստը կայանում է նրանում, վոր պեսդի մենք խորացնենք և ընդլայ- նենք աշխատավոր մարդկության բազմամիլիոն զանգվածների գոյու- թյան իմաստը: Սակայն ահա այդ միլիոնավոր զանգվածներն ուղար- կել են համազումար իրենց ներկա- յացուցիչներին՝ արտադրության

բաղմատեսակ ճյուղերի բանվորնե-
րին, կոլխոզնիկներին, պիոներնե-
րին: Միուժյան Սոցիալիստական
Խորհուրդների գրողների առաջ
կանգնել ե ամբողջ յերկիրը և ա-
ռաջադրում ե նրանց՝ նրանց ձիր-
քերին, նրանց աշխատանքին՝ բարձ-
րագույն պահանջներ: Այդ մարդիկ
հանդես են գալիս, իբրև Խորհուրդ-
ների յերկրի փառապանծ ներկան և
ապագան:

«Ընդհատելով մեր զրույցները,
«Հտեսնված գործերի փայլով շացնելով,
«Նրանք բերում եյին իրենց հաղթանակները,
«Հաց, ինքնավիւռ, մետաղ—և իրենց անձը.
«Իրենց անձը նրանք բերում եյին, իբրեւ
 թեմա,
«Իբրեւ իրենց աշխատանքը, սերը, կյանքը.
«Յեւ յամեն մեկը նրանցից հնչեց իբրեւ

«Վերսկանալ ամեն մեկին մեջ վերստում եր
բուղեվիլովը» :

Վիկտոր Գուսյեվի լուսանավորի
այս հում, չտապ կազմված տողերը

Ճիշտ են նշում անցքերի իմաստը։
մի անգամ ևս հաղթանակներեն վո-
րոտաց բռնաբարության վերաբերյալ,
—բռնաբարության, վո՞ր արմատներեն կերպարա-
նափոխում ե աշխարհը և նախա-
դուլակում ե գալիք աշխարհը անցքե-
րը ամբողջ աշխարհում։ Ինչի՞ մեջ
եմ տեսնում յես բռնաբարության հաղթա-
նակը գործիքների համադրումարում։
Ներանում, վո՞ր գործիքների մեջ, նը-
րանք, վո՞րոնք անկուսակցական
«տատանվող» եյին համարվում, ըն-
դունեցին անկեղծությամբ, վո՞րի
լիակատար լինելու մասին յես չեմ
համարձակվում կասկածել—ընդու-
նեցին բռնաբարության իրեն միակ, մար-
տական ղեկավար գաղափար ստեղ-
ծագործության մեջ, ընդհանրապես
կենդանագրի մեջ։ Յես շատ բարձր
եմ գնահատում այդ հաղթանակը,
վո՞րովհետեւ յես գրականագետ եմ և
հենց իմ անձի վրա գիտեմ, թե վո՞ր
քան կամայական են զրականագետի
միտքն ու զգացումը,—գրականա-
գետ, վո՞ր ջանում ե գտնել ստեղծա-

գործելու աղատութիւնը պատմութիւն խոտագույն ցուցմունքներից դուրս, նրա հիմնական կաղմակերպիչ գաղափարից դուրս: Շեղումներն այն մաթեմատիկական ուղիղ գծից, վոր մշակել է աշխատավոր մարդկութիւն արյունոտ պատմութիւնը և պայծառորեն լուսավորված է այն ուսմունքով, վորը հաստատում է, թե աշխարհը կարող է կերպարանափոխվել միայն պրոլետարիատի ուժով և միայն հեղափոխական հարվածի միջոցով և ապա բանվորներին ու գյուղացիներին սոցիալիստական հիմունքներով կաղմակերպված աշխատանքի ոգնութիւնով, — այդ շեղումները մաթեմատիկական ուղիղ գծից բացատրվում են նրանով, վոր մեր զգացումները, մեր եմոցիաներն ավելի հին են, քան մեր ինտելեկտը, նրանով, վոր մեր եմոցիաների մեջ շատ բան կա, վոր ժառանգված է, և այդ ժառանգվածը թշնամաբար հակասում է բանականութիւն ցուցմունքներին:

Մենք ծնվել ենք դասակարգային հասարակութիւն մեջ, վորտեղ յուրաքանչյուրը պիտի պաշտպանի իրեն ամենքից. և շատերը մտնում են ասղադասակարգային հասարակութիւն գիրկը, իբրև մարդիկ, վորոնցից դուրս է քշված փոխադարձ հավատը միմյանց հանդեպ, վորոնց մեջ՝ կյանքում լավագույն տեղ ըստանալու համար մղվող դարավոր պայքարի շնորհիվ՝ սպանված է հարգանքի և սիրո զգացումը դեպի աշխատավոր մարդկութիւնը, դեպի բոլոր արժեքների ստեղծողը:

Մեզ պակասում է անեկղծութիւն, վոր անհրաժեշտ է ինքնաքննադատութիւն համար. մենք ցուցաբերում ենք մեր չափազանց մանր քաղքենական չարութիւնը, յերբ քննադատում ենք իրար: Մեզ դեռևս թվում է, թե մենք քննադատում ենք մրցակցին, վոր հակում ունի մեր բերանից մեր կտոր հացը խլելու, և վոչ թե աշխատանքի ընկերովը, — աշխատանք, վորը քանի դը-

նում այնքան մեծ և խորը նշանա-
կությունն է ստանում, իբրև աշխար-
հի լավագույն հեղափոխական ուժե-
րի գրգռիչը, խթանը: Մենք՝ գրա-
կանագետներս, ինքնին ավելի անհա-
տական բնույթ կրող հեղարվեստի
բնագավառում աշխատողներս,—սը-
խավում ենք, համարելով մեր ու-
նեցած փորձը, իբրև մեր միանձնյա
սեփականությունը, մինչդեռ այդ
փորձը վոչ այլ ինչ է, յեթե վոչ ի-
րականության ներշնչումը և անցյա-
լում՝ նրա սաստիկ ծանր պարզեւը:
Անցյալում, ընկերներ, քանի վոր
մենք ամենքս արդեն տեսել և տե-
նում ենք, վոր այն նոր իրականու-
թյունը, վոր ստեղծում է բոլջեիկ-
ների կուսակցությունը մարմնացնե-
լով նրա մեջ զանգվածների բանա-
կանությունն ու կամքը,—այդ նոր
իրականությունը առաջարկում է
մեզ մի գեղեցիկ պարզև՝ բազմա-
միլիոն բանվոր ժողովրդի մտավոր
ծաղկման չտեսնված պարզեւը: Յես
կհիշեցնեմ վսեմալուդ Իվանովի յե-

րեւելի ճառը, այդ ճառը պիտի մնա
մեր հիշողության մեջ, իբրև մի
նմուշ հեղարվեստագետի անկեղծ
ինքնաքննադատության, հեղարվես-
տագետ, վոր խորհում է քաղաքա-
կանորեն: Նույնչափ ուշադրության
արժանի յեն Յու. Ոլեշայի, Լ. Սեյ-
ֆուլիկայի և մի քանի այլ գրող-
ների ճառերը: Յերկու տարի առաջ
Յոսիֆ Ստալինը, մտահոգված գրա-
կանության բարձրացման խնդրով,
ասել եր կոմունիստ գրողներին՝
սովորեցեք գրել անկուսակցական-
ներեց:

Չխոսելով այն մասին, թե սովոր-
ե՞լ են արդյոք կոմունիստները ան-
կուսակցական հեղարվեստագետնե-
րից վորեւե բան, սակայն պիտի նը-
շեմ, վոր անկուսակցականները վատ
չեն սովորել մտածել պրոլետարիա-
տից (ծափահարություններ):

Մի անգամ Լեոնիդ Անդրեյեվը
հոռետեսության մոլեղնահարման
պահին նկատեց՝

— Կոնգրեսները գրողից բաշտավոր

ե. նա գիտե, վոր քաղցը ավենիքներ սիրում են յերեխաներն ու որիորդները: Իսկ գրողը վատ մարդ է, վորը լավ գործ է կատարում, առանց գիտենալու, թե ո՞ւմ համար է այդ, և կասկածելով, թե այդ գործը առհասարակ պիտանի յե: Հենց այդ է պատճառը, վոր գրողները մեծ մասը ցանկություն չունի ուրախացնել վորեւէ մեկին և ձգտում է վիրավորել ամենքին»:

Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության գրականագետները տեսնում են՝ ո՞ւմ համար են աշխատում: Ընթերցողն ինքն է գալիս նրանց մոտ. ընթերցողը նրանց «մարդկային հոգիների ճարտարապետ» է անվանում և պահանջում է, վորպեսզի նրանք պարզ խոսքերով, պարզ և իսկական պատկերներով կազմակերպեն իր զգացումները, ապրումները, մտքերը, իր հերոսական աշխատանքը: Այսպիսի ամուր, անմիջապես ընդհուպ մոտեցում գրողին ընթեր-

ցողի կողմից յերեւեք և վոչ մի տեղ չի յեղել, և հենց այս փաստի մեջն է կայանում այն դժվարությունը, վոր մենք պիտի հաղթահարենք, բայց և այդ փաստի մեջն է մեր բաղդավորությունը, վոր մենք դեռ չենք սովորել գնահատել: Ինչպես նաև մեր յեղբայրակից հանրապետությունների մշակութիւնները, կուլտուրաները, վորոնք ձևով ազգային են, մնում են և պիտի լինեն ըստ երության սոցիալիստական, այնպես և մեր ստեղծագործությունը պիտի մնա ձևով անհատական և իր հիմնական, ղեկավար գաղափարը՝ իմաստով սոցիալիստական-լենինյան, այդ իմաստն է ազատագրել մարդկանց անցյալի վերապրումներից, շրջակարդային պատմության ներշնչումներից, — պատմություն, վոր աղավաղում է միտքն ու զգացումը, շրատիարակում է աշխատավորին, իբրև ստրուկի, մտավորականին, իբրև յերկդիմի կամ անտարբեր ժարդու, իբրև անիշխանականի կամ

ռենեգատի, սկեսպտիկի և քննադատի և կամ իբրև մարդու, վոր հաշտեցնում է անհաշտելին: Վերջիվերջո համադրումարը իրավունք է տալիս հուսալու, վոր այսուհետև «անկուսակցական գրող» ասված հասկացողությունը կմնա միայն իբրև ձևական հասկացողություն, իսկ ներքուստ մեղնից յուրաքանչյուրը կզդա իրեն լենինյան կուսակցության իսկական անդամը, — կուսակցության, վոր այնքան հիանալի և վաղորդ ապացուցեց իր հավատը դեպի անկուսակցական գրականագետների պատիվն ու աշխատանքը, թույլատրելով այս համամիութենական համադրումարը:

Այս համադրումարում մենք տվինք բաղամամիլիոն ընթերցողին և կառավարությանը մեծամեծ մուրհակներ և, հասկանալի չէ, այժմ մենք պարտավոր ենք մարել այդ մուհրակները լավորակ և աղնիվ աշխատանքով: Մենք կանենք այդ, յեթե չենք մոռանա այն, ինչ վոր թելադրել են

մեզ մեր ընթերցողներն իրենց յելույթներում — և դրանց թվում նաև մեր յերեսխաները, — յեթե չենք մոռանա, թե վորչափ ահագին է մեր գրականության նշանակությունը մեր յերկրում, թե վորչափ բարձր են այն պահանջները, վոր առաջադրվում են մեզ: Մենք այդ չենք մոռանա, յեթե անմիջապես կոչնչացնենք մեր մեջ խմբակցության բոլոր մնացորդները, — խմբակցություն, վոր ծիծաղելի և զգվելի կերպով հիշեցնում է Մոսկվայի հին բոյարներին պայքարը առաջնատեղության շուրջը, նրանց ձգտումը բարձր տեղ գրավել բոյարների դոմայում (խորհրդարանում) և վորքան կարելի չէ մոտիկ նստել ցարին նրա խնձույքների ժամանակ:

Մենք պետք է լավ հիշենք ընկ. Սեյֆուլինալի ինտսցի խոսքերը թե «մեզ չափազանց չուտ և չափազանց մեծ պատրաստակամությամբ գրող դարձրին»: Յեվ չպետք է մոռանալ ընկ. Նախորյակովի նշումը, վոր

28—34 Թվականների ընթացքում մենք տվել ենք 75 տոկոս այնպիսի գրքեր, վորոնք իրավունք չունեն յերկրորդ անգամ հրատարակվելու, այսինքն շատ վատ գրքեր: «Դուք հասկանո՞ւմ եք, թե վորքան ավելորդ ծախս ենք արել, վոչ միայն նյութական, այլև մտավոր ծախս ի հաշիվ մեր ժողովրդի, ի հաշիվ սոցիալիզմը ստեղծող մասսաների, վորոնք կարգում եյին դորշ, վատ, իսկ յերբեմն և խալտուրայի բնույթ կրող գրքեր: Այդ վոչ միայն գրողներին կոլեկտիվի սխալն է, այլ նաև հրատարակչական գործի կոպիտ սխալներից մեկը»: Ընկ. Նակորյակովի նախագասության վերջը յես գտնում եմ չափազանց մեղմ և քաղաքավարի:

Այն բոլոր խոսքերով, վոր յես ասացի, յես դիմում եյի ամբողջ համագումարի պրականագետներին մեռերեմն, նաև յեղբայրակից հանրապետությունների ներկայացուցիչներին: Յես վոչ մի հիմք կամ ցան-

կություն չունեմ սուանձնապես խոսել նրանց մասին, վորովհետև նրանցից յուրաքանչյուրը աշխատում է վոչ միայն իր ժողովրդի, այլև առհասարակ Սոցիալիստական Հանրապետությունների և ավտոնոմ մարզերի միության բոլոր ժողովուրդներին համար: Պատմությունը նրանց վրա յեւ է դնում նույն պարտականությունները, ինչ և ուսաների վրա: Ժամանակի սղության պատճառով յես քիչ եմ կարգում այն գրքերից, վոր գրել են դաշնակից հանրապետությունների գրականագետները, սակայն և այն քիչը, վոր կարդացել եմ յես, ինձ հաստատ համոզում է ներշնչում, վոր շուտով մենք կստանանք նրանցից այնպիսի գրքեր, վորոնք աչքի կընկնեն իրենց նյութի թարմությամբ, և պատկերացման ուժով: Թույլ տվեք հիշեցնել ձեզ, վոր ժողովրդի քանակը չի անդրադարձնում տաղանդի վորակի վրա: Փոքրիկ Նովկգիան ստեղծել է

ահադին զեմքեր՝ Համսունին, իր-
սեմին: Հրեաների մոտ նորերս վախ-
ճանվեց զրեթե հանճարեղ բանաս-
տեղծ Բյալիկը. ունեյին նրանք բա-
ցառապես տաղանդավոր յերգիծա-
բան և հումորիստ Շոլով Ալեյխեմ:
Լատչները ստեղծել են հզոր բանաս-
տեղծ Շեյնբրին, Ֆինլյանդիան՝
Եյնս-Լեյնոյին: Չկա մի այնպիսի փոք
յերկիր, վորը տված չլինի խոսքի
ամենամեծ զեղարվեստագետներ: Յես
հիշատակեցի այստեղ միայն խոշո-
րագույն գրողներին և այն ել՝ վոչ
բոլորին. և յես հիշատակեցի այն
գրողներին, վորոնք ծնվել են կապի-
տալիստական հասարակության պայ-
մաներում: Մեզ յեղբայրակից Ժողո-
վուրդների հանրապետություններում
գրողները ծնվում են պրոլետարիա-
տից, իսկ մեր յերկրի որինալի վրա
մենք տեսնում ենք, թե վորպիսի
չնորհալի զավակներ և ստեղծել պրո-
լետարիատը կարճ ժամանակաշրջա-

նում և թե ինչպես անընդհատ նա
ստեղծում և աղպլիսներ: Սակայն
յես ձեզ դիմում եմ մտերմական խոր-
հրդով, վորը կարելի յե հասկանալ
նաև իբրև խնդիրք ուղղված Կով-
կասի և Միջին Ասիայի աղյուների ներ-
կայացուցիչներին: Ինձ վրա — և
յես դիտեմ, վոչ մենակ ինձ վրա —
ցնցիչ տարափորություն թողեց աշուղ
Սուլեյման Ստայլսկին: Յես տեսնում
եյի, ինչպե՞ս այդ ծերունին, անգրա-
գետ, բայց խմաստուն, նախագահ-
թյան մեջ նստած չնջում եր իր վո-
տանավորները հորինելիս, և ապա
նա, XX-րդ դարի Հոմերոսը զար-
մանալի կերպով կարգաց իր հորինա-
ծը (ծափահարություններ):

Խնամքով պահպանեցք այն մարդ
կանց, վորոնք ընդունակ են ստեղծել
աղոնդիայի աղպլիսի մարդարիտներ,
վորպիսիք ստեղծում և Սուլեյմանը:
Վրկնում եմ՝ խոսքի արվեստի սկիզ-
բը Փոլկորն և (Ժողովրդական բա-
նահյուսությունն և): Հավաքեցեք

ձեր Փռլիորը, սովորեցեք նրա վրա, մշակեցեք այն: Փռլիորը չափազանց չափ նյութ կտա թե՛ ձեզ, թե՛ մեզ, Միութեան բանաստեղծներին և արձակագիրներին: Վորքան լավ կճանաչենք անցյալը, այնքան հեշտ, խորը կերպով և ուրախությամբ կը հասկանանք մեր ստեղծվող ներկայի մեծամեծ նշանակութիւնը:

Համադումարի նիստերում ճառերը և նիստերի սրահից դուրս մեր ունեցած զրույցները հարստաբերեցին մեր գղացումների և ցանկութիւնների նույնութիւնը, մեր նպատակադրութեան միասնութիւնը և հայտաբերեցին մեր աններելի տակավաչափ ծանոթութիւնը յեղբայրակից հանրապետութիւնների գեղարվեստի և առհասարակ կուլտուրայի հետ, յեթե մենք չենք ուզում, վոր համադումարում բռնկված կրակը հանգչի, մենք պիտի դիմենք բոլոր միջոցների, վորպէսզի այդ կրակը ավելի ևս պայծառ բորբոքի: Անհրաժեշտ է

սկսել յեղբայրակից հանրապետութիւնների կուլտուրաներին ծանոթանալու աշխատանքը, փոխադարձորեն և ամենալայն չափով:

Իբրև ակիզը, լավ կլինէր կազմակերպել Մոսկւայում «Համամիութեանական քաւրոն, վորը ցույց տար բեմի վրա, դրամայում և կոմեդիայում, ազգային հանրապետութիւնների վյանքն ու կենցաղն իրենց սրտով հանդիսանալու և հերոսական ներկայում (ծափահարութիւններ):

Հետո՝ անհրաժեշտ է հրատարակել ուսերեն յեզմով ազգային հանրապետութիւնների և մարզերի ընթացիկ պոեզիայի և) արձակ գրականութեան ժողովածուներ, լավ քարգնումութեամբ (ծափահարութիւններ): Պետք է թարգմանել և մանկական գրականութիւնը: Ազգային հանրապետութիւնների գրականագետներն ու գիտնականները պետք է գլխին իրենց յերկիրների ու պետութիւնների պատմութիւնները, վո-

բոնք փոխադարձաբար պիտի ծանոթացնեն — բոլոր հանրապետութիւնների ազգութիւնները իրար հետ։ Խորհրդային Սոցիալիստական Հանրապետութիւնների Միութեան այդ պատմութիւնները կհանդիսանան փոխադարձ հասկացողութեան և ներքին իդէոլոգիական շարկաւելի քաջապաշտօնի միջոցը յոթ հանրապետութիւնների բոլոր բնակիչների համար։

Այդ փոխադարձ հասկացողութիւնը, ուժերի այդ միացումը անհրաժեշտ է մոչ միայն Հանրապետութիւնների Միութեան բոլոր մարդկանց համար. այդ հարկաւոր է, իբրև դաս և որինակ յերկրագնդի ամբողջ աշխատաւոր ժողովրդի համար, վորի դեմ նրա հինաւորաց թըշնամին՝ կապիտալիզմը՝ կազմակերպվում է մի նոր, ֆաշիստական դիմակի տակ։ Մեր Միութեան հանրապետութիւնների մեջ յեղած իրողատեւական կապերը և գործնական փոխադարձ կախումները բուսարանե-

լու համար, լայն և գործնական միջոց կարող է ծառայել մի կոլեկտիվ աշխատանք՝ ստեղծելու մի դիրք՝ «Յերկու հնգամյակների գարծերն ու մարտիկը» վերնագրով։ Այդ դիրքը պիտի ցույց տա Խորհրդային Սոցիալիստական Հանրապետութիւններին միութեան բանավորական ուժին պատմվածքների և ուրվանկարների (офери) ձեռք իր աշխատանքի արդյունքները և աշխատանքի կուլտուրատարակչական ազդեցութեան փաստերը, — ազդեցութիւն, վոր անում է աշխատանքը մարդկանց վրա, տեւականաւորական քաղքենական (մեշահական) ինդիւիդուալիզմին և եղ սահմաններից ազատազրկելու վրա, հաւաքական աշխատանքի պայմաններում նոր սոցիալիստական անհատականութիւն դաստիարակելու վրա. պիտի ցույց տա այն պարույրը, այն սպիրալը՝ վորով մենք առաջ ենք բնթանում և աստիճանաբար վեր ենք յելնում։ Այդ աշխատանքին

մասնակցելը կատարելապես անհրա-
ժեշտ է բոլոր յեղբայրակից հանրա-
պիտությունների բոլոր մարդերի
գրականագետների համար։ Մենք
գտնվում ենք զարգացման դեռ այն
չրջանի մեջ, յերբ մենք ստիպված ենք
համոզել մեզ, թե մենք կուլտուրա-
պես աճում ենք։

Այն ամենից, ինչ վոր խոսվել է
համագումարում, ամենաեյականը
և կարևորն այն է, վոր յերխտասարդ-
գրողներից շատերը առաջին անգամ
է, վոր զգացին իրենց նշանակու-
թյունը և պատասխանատվությունը
յերկրի առաջ և հասկացան, վոր դեռ
բավականաչափ պատրաստ չեն աչ-
խատանքի համար։

Գրքեր ստեղծելու հավաքական աչ-
խատանքը — գրքեր, վորոնք պիտի
լուսաբանեն հսկայական աշխարհքը
և մարդկանց փոփոխող աշխատան-
քի պրոցեսները, — մեզ կծառայեն
դեղեցիկ միջոց ինքնադաստիարակ-
ման, ինքնամրացման համար։ Նը-

կատի առնելով լուրջ, փելիսոսիա-
յական քննադատության բացակա-
յությունը, — ինքնաքննադատու-
թյուն, վոր այնչափ տխրալի կեր-
պով ապացուցեց համագումարում
սրտֆեսիոնալ քննադատների համ-
րության փաստով, — մենք ինքներս
պիտի ձեռնարկենք ինքնաքննադատու-
թյան, փոչ խոսքով, այլ գործով,
անվիջսպես նյութերի մշակման աչ-
խատանքի ընթացքում։

Գրականագետների հավաքական աչ-
խատանքի մեթոդին ը. Երենբուրգը
կասկածամտաբար մերաբերվեց, յեր-
կյուղ կրելով, թե աշխատելու այդ-
ձևը կարող է մնասնկար կերպով
սահմանափակել աշխատող միավորի
անհատական լոգոսոլոգիստները։
Ը. Վսեվոլոդ Իվանով և Լիդիա Սեյ-
փուլիևան իրենց առարկություննե-
րով փարատեցին, ինձ թվում է, նրա
յերկյուղը։

Ը. Երենբուրգին թվում է, վոր
հավաքական աշխատանքի մեթոդը

բրիգադային աշխատանքի ձևն է : Այդ մեթոդները իրար մեջ վոչ մի ալ նմանություն չունեն, բացի Ֆիզիքականից . յերկու գեպքումն ել աշխատում են խմբակներով, կոլեկտիվով : Սակայն բրիգադը աշխատում է յերկաթ-բետոնի, փայտի մե տաղի վրա և այլն, միշտ վորոշ միատեսակ նյութի վրա, վորին պիտի բալ նախապես վորոշված ձևը : Բրիգադում անհատը կարող է իրեն արտահայտել միայն իր աշխատանքի լարման ուժով :

Սոցիալական յերեուցթիւների վերաբերյալ նյութերի «վրա կոլեկտիվ աշխատանքը, կյանքի պրոցեսների պատկերացման, արտաքույման աշխատանքը, — ուր մասնավորապես մտնում են նաև հարվածային բրիգադների գործողութիւնները, — դա մի աշխատանք է, վոր ընդգրկում է անսահմանորեն բազմատեսակ փաստեր . և յուրաքանչյուր անհատ-միավոր, յուրաքանչյուր գրող իրավունք

ունի ընտրելու իր համար այս կամ այն շարք փաստերը, համաձայն իր հակման, իր շահերին և ընդունակութիւններին : Գրականագետների կոլեկտիվ աշխատանքը կյանքի յերեւելութիւնների վրա, վորոնք վերաբերում են անցյալին կամ ներկային, ամենակայտառ կերպով լուսավորելու այն ուղիները, վոր տանում են դեպի ապագան, վորոշ նմանութիւն ունի լարարատորիաների աշխատանքին, — լարարատորիաներ, վորոնք զիտական-փորձնական կերպով հետադրուում են որդանական կյանքի այս կամ այն յերեւելութիւնները : Հայտնի յե, վոր յուրաքանչյուր մեթոդի հիմքում դրված է փոքր՝ հետադրութիւնը, ուսումնասիրութիւնը և այդ մեթոդը իր հերթին ցույց է տալիս ուսումնասիրութիւն հետադա ուղիները :

Յեւ վստահանում եմ կարծել, վոր հենց հավաքական աշխատանքի մեթոդն է, վոր պիտի ոգնի մեզ լավա-

դու յն կերպով հասկանալու, թե ի՞նչ պիտի լինի սոցիալիստական ռեա-
լիզմը:

Ընկերներ, մեր յերկրում գործո-
ղության տրամաբանությունը ասվելի
առաջ է վաղում, քան հասկացողու-
թյունների տրամաբանությունը, ա-
հա թե ինչ մենք պիտի զգանք:

Յես համոզված եմ, վոր հավաքա-
կան աղեղծագործության մեթոդը
կարող է տալ լիովին ինքնուրույն,
չտեսնված հետաքրքրական գրքեր,
չէր վստահանում եմ առաջադիւն այդ
պիսի աշխատանք նաև մեր հյուրե-
րին՝ յեվրոպական գրականության ա
մենալավ վարպետներին (ծափաւա-
րություններ):

Չե՞ն փորձի արդյոք նրանք տալ
մի գիրք, վորը պատկերացնի բուր-
ժուական աշխարհի մեկ ուր: Յես
նկատի ունեմ, վորեւե մեկ ուր՝ լինի
դա սեպտեմբերի 25-ը, հոկտեմբերի
7-ը կամ դեկտեմբերի 15-ը: Պետք է
վերցնել սովորական ուր աշխատեալ,

ինչպես արտացոլել է այն համաշխար-
հային մամուլը իր եջերի վրա: Պետք
է ցույց տալ ժամանակակից կյանքի
խաղտաբղետ քառքը Փարիզում և
Գրենոբլում, Լոնդոնում, Շանհա-
յում, Սան-Ֆրանցիսկոյում, Ժընե-
վում, Հոմոնում, Դուբլինում և այ-
լն և այլն, քաղաքի մեջ, դյուղում,
ջրի և ցամաքի վրա: Պետք է տալ
հարուստների տոնախմբությունները
և աղքատների անձնասպանություն-
ները՝ ակադեմիաները, դիտական ըն-
կերությունների նիստերի և լրագրե-
րի խորնիկայում արտացոլած փառ-
տերը վայրենի անգրագիտության
սնահավատությունները, վոճիրների,
փաստեր զտված կուլտուրայի նորաց
ված բարքերից, բանվորների դու-
ժադուլներ, անեկղոտներ և առօրյա
դրամաներ փարթամ կյանքի լիտի
աղաղակները, սրիկաների սխրագոր-
ծությունները, քաղաքական պարա-
զուխների կեղծիքը՝ հարկավոր է,
կրկնում եմ, տալ սովորական առո-

րյա որն իր յերեվույթներէ ամբողջ
 անմիտ և ֆանտաստիկ խայտաբղե-
 տությամբ: Դա ամէլի մեծ չափով
 մկրատներէ աշխատանք կլինի, քան
 վրչի աշխատանք: Խոսք չկա, ան-
 խաւտալիւն յեն մեկնաբանություն-
 ներ, առկայն, ինձ թվում է, նրանք
 պիտի լինեն նույնչափ կարճ, վո-
 քան և փայլուն: Սակայն փաստերը
 պիտի լուսաբանուին փաստերով, և
 որովա այդ ցնցոտիներէ, այդ լաթերի
 վրա գրականագետի մեկնաբանու-
 թյունը պիտի փայլի, ինչպէս կայծ,
 վոր կրակում է միտքը: Իսկ ընդ-
 հանրապէս պետք է ցույց տալ պատ-
 մության «գեղարվեստական» ստեղ-
 ծագործությունը վորեւէ մեկ որովա
 ընթացքով: Վոչ վոր յերբեք չի
 արել այդ, սակայն պետք է անել:
 Յե՛վ յեթե այդպիսի աշխատանքին
 ձեռնարկի, մեր հյուրերի խմբակը,
 նրանք անշուշտ կնծայեն աշխարհին
 չտեսնված, սովորականից դուրս հե-
 աքրքրական, չսցուցիչ կայտառ և

խորթմաստ խրատական մի բան (ծա-
 փահարություններ):

Փաշլուգին կազմակերպիչ դադա-
 փար է ծառայում ցեղային տե-
 սությունը, տեսություն, վորն ի
 վեր է բարձրացնում գերմանական,
 ռումանական, լատինական կամ անդ-
 լոսաքսոն ցեղը, իբրեւ միակ ուժ,
 վոր ընդունակ է շարունակել կուլ-
 տուրայի հետագա զարգացումը,—
 կուլտուրա, վոր «գտարյուն» է և
 ցեղային հիմնված, ինչպէս այդ
 հայտնի յե, ամիսնա և տրամուր ա-
 վելի ցինիկ կեդեքման վրա, վորին
 յենթարկվում է մարդկության ահա-
 դին մեծամասնությունը չնչին փոք-
 րամասնության կողմից: Այդ՝ քա-
 նակով չնչին՝ փոքրամասնությունը
 չնչին է նաև իր մտաւորական ու-
 ժով, վորը նա վատնում է նորանոր
 միջոցներ հնարելու վրա, վորպեսզի
 շահագործի աշխատավորներին և վեր
 քիչներին պատկանող բնության դան-
 ձերը: Կապիտալիզմի բոլոր տաղանդ-

ներից, վորոնք իր ժամանակին քա-
ղաքակրթության և նշույթական կուլ-
տուրայի կազմակերպչի դերն են կա-
տարել, ժամանակակից կապիտալիզ-
մը պահպանել և միայն միատրեքական
համարը, վոր նա իրավունք ունի
իշխելու պրոլետարիատի և դեյուդա-
ցիության վրա: Սակայն կապիտա-
լիստների այդ միատրեքայի դեմ պատ-
մությունը առաջ և քաշել իրական
փաստ՝ հեղափոխական պրոլետարիա-
տի ուժը, վորը կազմակերպվում և
անխորտակելի և անմարելի, պատ-
մականորեն հիմնավորված ահեղ ճըշ
մարտությամբ, — առաջ և քաշել
միասնական ճակատի» փաստը Փրան-
սիայում և Ֆրիդկապես ասելի ևս
չոչափելի փաստը՝ խորհրդային սո-
ցիալիստական Հանրապետություննե-
րի պրոլետարիատի Միությունը:
Այս փաստերի ուժի առաջ Փաշիգմի
թունավոր, սակայն թեթև և նոսր
մշուշը անխուսափելիորեն և շուտով
պիտի փարսոսվի: Այդ մշուշը, ինչ-

պես մենք տեսնում ենք, թունավո-
րում և դայթակղեցնում և միայն ան-
սկզբունք, անտարբեր մարդկանց,
միտոնց համար «ամեն ինչ և», մի-
յեմնուն և նույնիսկ, թե ում սպա-
նեն: Այդ մարդիկ հանդիսանում են
բււրթուական հասարակության այ-
լասեուման արգասիքը և կապիտալիզ-
մի վարձկանները նրա ամենատոոր,
ամենազաղրելի և արյունոտ դործե-
րի համար:

Կապիտալիզմի Ֆետդալների հիմ-
նական ուժն և հանդիսանում դենքը,
վոր նրա համար պատրաստում և
բանվորական դասակարգը՝ հրացան-
ներ, դեղացիներ, թնդանոթներ,
թունավոր դազեր և այն բոլորը, ինչ
վոր կարիքի դեպքում կարող և ուղղ-
վել և ուղղվում և կապիտալիստների
կողմից բանվորների դեմ: Սակայն
հեռու չէ ժամանակը, յերբ բանվոր-
ների հեղափոխական իրավադիտակ-
ցությունը կխորտակի կապիտալիստ-
ների միատրեքական:

Մակայն նրանք պատրաստում են մը նոր համաշխարհային սպանդանոց, կազմակերպում են ամբողջ աշխարհի պրոլետարների մասսայական բնաջնջումը ազգային — կապիտալիստական ռազմա դաշտերի վրա, վորոնց նպատակն է՝ չափ ստանալ ստրկացնել մանր ազգությունները, դարձնել նրանց Աֆրիկայի ստրուկներ, կիսաքաղց կենդանիներ, վորոնք պարտավոր են տաժանակիր կերպով աշխատել և գնել վատ, փրկած ապրանքներ նրա համար միայն, վորպեսզի արդյունաբերության արժանեքը կուտակեն չաղ-չաղ վոսկին՝ աշխատավորության այդ անեծքը, — վոսկի վորից ամենաչնչին մասն են վճարում կապիտալիստները բանվորներին, նրա համար, վոր նրանք՝ բանվորները՝ իրենք իրենց համար կռում կոփում են շղթաներ, իրենք իրենց դեմ արտադրում են զենք։

Ահա թե դատակարգերի ինչ սուր հարաբերությունների դիմաց եր աշ-

խատում մեր համամիութենական համագումարը, ահա թե ինչպիսի սասանմունքի նախորդակին է, վոր պիտի շարունակենք մեր աշխատանքը մենք՝ խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության գրականագետներս։ Այս աշխատանքի մեջ չեն կարող լինել և չպետք է տեղի ունենան անձնական դատարկ խնդիրներ։ Հեղափոխական ինտերնացիոնալիզմը բուրժուական նացիոնալիզմի, ցեղայնականության, Փաշիզմի դեմ՝ ահա թե ինչումն է մեր ուրերի իմաստը։ Ինչ կարող ենք մենք անել։ Մենք արդեն մի վորոշ գործ կատարեցինք։ Վատ չե ընթանում մեր աշխատանքը արմատական, հակաֆաշիստական մտավորականության բոլոր ուժերը միացնելու ուղղությամբ. և մենք կյանքի յենք կանչում պրոլետարական, հեղափոխական գրականությունը աշխարհի բոլոր ծայրերում։ Մեր մեջ ներկայեն այնտեղ Յեվրոպացի գրեթե բո-

լնր գրականություններէ շնորհապա-
ցուցիչները: Այն մագնիսը, վոր գրա-
վել ե նրանց մեր կողմը, վոչ միայն
կուսակցութեան խմատուն աշխա-
տանքն ե, — կուսակցութեան, վորը
հանդիսանում ե յերկրի բանականու-
թյունը ե վոչ միայն հանրապետու-
թյունների պրոլետարիատի հերոսա-
կան եներգիան այլե մեր սեփական
աշխատանքը: Մի վորոչ աստիճանով
ամեն մի գրականագետ հանդիսանում
ե՝ իր ընթերցողների առաջնորդը, —
յես կարծում եմ, վոր այդ կարելի յե
ասել: Բոմեն Բոլանը, — Անդրե Ժի-
լը ամենաորինական իրավունք ու-
նեն «հոգիների ճարտարապետ» ան-
վանելու իրենց: Ժամ Բիշար Բլեկը,
Անդրե Մայլրոն, Պլիվյեն, Արագո-
նը, Տոլլերը, Բեխերը, Նեկսեն — չեմ
թվի բոլորին, բայց այդ բոլորը բա-
ցառապես տաղանդավոր մարդկանց
պայծառ անուններ են ե այդ ամենքը
իրենց յերկրների բուրժուազիայի ա-
մենախիստ դատավորներն են. այդ

ամենքը մարդիկ են, վոր գիտեն ա-
տել, բայց գիտեն ե սիրել (ծափա-
հարություններ): Մենք չկարողա-
ցանք հրավիրել դեռևս շատերին,
վորոնք ամբողջ ուժով նույնպես
ոժտմած են մարդկային այդ գեղե-
ցիկ ճիւղով՝ սիրելու ե առելու.

Մենք չկարողացանք հրավիրել նր-
բանդ ե այդ կողմից մեծ մեղք ե ընել
նում մեզ վրա նրանց վերաբերմամբ:
Սակայն յես համատաքած եմ, վոր
խորհրդային գրողների յեռկրորդ հա-
մագումարո կգարդարովի Առևմուտքի
Արևելքի, Չինաստանի ե Հնդկաստա-
նի ե այլ յերկրների բազմաթիւ տա-
նյակ գրականագետներով ե տարա-
կույս չկա, վոր մենք դռնվում ենք
այն ուրիշ նախորդակին, յերբ 3
ինտերնացիոնալի շուրջը պիտի միա-
նան գեղարվեստի, գիտութեան ե
տեխնիկայի բոլոր լավագույն ե ադ-
նրվագույն ներկայացուցիչները (ծա-
փահարություններ): Մեր ոտարագդի
չյուրերի ե մեր մեջ ծագեց մի փոք-

րիկ և հատկապէս ինձ համար վոչ
բոլորովին պարզ-տարածաթիւթյուն՝
սպառազանց արդային հասարակու-
թյան մեջ անհատի տնեկեայիք դիր-
քի դնահատման մասին: Այդ տարա-
ձայնության ծագման պատահական
բնույթը և նույնիսկ այդ հարցի վո-
րէջ չափով անտեղի լինելը նշվեց
րնկ. Կոլցովի կողմից ոգոստոսի 25-ի
յերեկոյան նիստում և պարզաբան-
վեց ընկ. Կարլ Ռադեկի վայելու-
յեղրանկացման խոսքի մեջ:

Այս հարցը դերադանցապէս ակա-
դեմիական, փիլիսոփայական բնույթ
ե կրում և հարկավ չեք կարող լավ
լուսաբանվել մեկ-յերկու նիստում
կամ մի զրույցի մեջ: Ընկ. Կոլցովը
ճիշտ նկատեց, վոր այս հարցը վե-
րաբերվում է այն խնդիրներին շար-
քին, վորոնք դործնականորեն մշտ-
ված են: Գործի ելությունը նրանու-
մըն է, վոր Յեվրոպայում և ամենու-
րեք աշխարհում գրողը, վորի համար
թանգ են կուլտուրայի բազմադար-

յան նվաճումները և վորը տեսնում
է ինչպէս կապիտալիստական բուր-
ժուազիայի աչքում կուլտուրայի այդ
նվաճումները կորցնում են իրենց
զինը և մի «գեղեցիկ» որ յուրաքան-
չյուր ազնիւ գրականագետի գիրքը
կարող է հրապարակորեն այրման
յենթարկվել, — Յեվրոպայում գրողը
որ ավուր ավելի ու ավելի յե գգում
ուրժուազիայի ճնշման ցավը, յեր-
կյուղ է կրում, թե մի գուցե վեր-
բաժնւի միջնադարյան բարբարոսու-
թյունը, վորը համանականորեն կա-
րող է չքաչվել նույնիսկ ինկվիզիցիա
վերականգնել այն գրողներին գեմ,
վորոնց մտածողությունը (հերետի-
կոսական կճանաչվի:

Յեվրոպայում բուրժուազիան և
կառավարությունը որեցոր ավելի ու
ավելի թշնամաբար է վերաբերվում
չեպի ազնիւ գրողը: Մեզ մոտ մենք
բուրժուազիա չունենք, իսկ մեր կա-
ռավարությունը՝ մեր ուսուցիչներն
են և մեր ընկերները, — բառիս բուն

լմաստով մեր ընկերները: Մեր ապ-
րած մոմենտի պայմանները յերբեմն
դժգուժ են մեզ բողոքել ընդդիմդուա-
լիստական մտքի կամայականության
դեմ, սակայն յերկիրն և կառավա-
րությունը խորապես չահագրգռված
են վերապահի անհատականությունը
ազատորեն աճի, և դրա համար տրա-
մադրում են բոլոր միջոցները, վոր
չափով այդ հնարավոր է մեր յերկ-
րի պայմաններում, — յերկիր, վորը
ստիպված ահագին քանակությամբ
միջոցներ է ծախսում ինքնապաշտ-
պանության վրա նոր բարբարոսի
դեմ՝ Յեվրոպական բուրժուազիայի
դեմ, վորը զինված է ատամներից
մինչև կրունկները:



Մեր համագումարը աշխատեց ան-
կեղծ հափշտակությամբ մեր զեղար-
վիստով, ընդ վորում այդ հատկու-
թյունը հասնում էր ամենաբարձր նո-
տաների, և մի նշանաբանով՝ բարձ-
րացնել աշխատանքի վորակը: Պետք

է արդյոք բացատրել, վոր, վորքան
ավելի կատարյալ է գործիքն, այն-
քան նա լավ է ապահովում հաղթա-
նակը: Գիրքը սոցիալիստական կուր-
սուրայի գլխավորագույն և հզորա-
ղույն գործիքն է: Բարձր վորակի
զիրքն է, վոր պահանջում է պրոլե-
տարիատը՝ մեր հիմնական, բազմա-
միլիոն ընթերցողը: Բարձր վորակի
գրքերն են, վոր անհրաժեշտ են մեր
հարյուրավոր սկսնակ գրողներին,
վորոնք գրական ասպարեզ են մըտ-
նում պրոլետարիատի միջավայրից,
մեր յերկրի բոլոր հանրապետություն
ների և մարզերի գործարաններից և
կոլտոգներից: Այդ յերիտասարդու-
թյանը մենք պարտավոր ենք ուշի ու
շով, անընդհատ և սիրով ոգնել նրա
ընտրած ծանր ուղու վրա, սակայն
ինչպես ճիշտ նկատեց Սեյֆուլինան,
անհրաժեշտ է շտապել «նրանց տեղ-
նուտեղը գրող դարձնել» և պետք է
հիշել ընդ. Նակորյակովի ասածը,
թե չարժի անողուտ և վնասակար

կերպով վատնել ժողովրդական մի-
ջոցները վատորակ դրքեր «բրակ»
արտադրելու վրա: Այդ բանի հա-
մար ե, վոր մենք պատասխան պի-
տի տանք կոլեկտիվորեն:

Մեր դրամատուրգիայի վորակը
բարձրացնելու անհրաժեշտության
մասին շատ տաք և համոզիչ ֆերպով
խոսեցին մեր բոլոր դրամատուրգնե-
րը: Յեա հավատացած եմ, վոր «Հա-
մամիրութենական թատրոնի» և «կլա-
սիկների թատրոնի» կազմակերպումը
մեծ չափով կոգնի մեզ յուրացնել
հնադարյան և միջնադարյան դրամա-
տուրգների բարձր տեխնիկան, իսկ
յեղբայրակից հանրապետությունների
դրամատուրգիան կնշխարի թեմատի-
կայի սահմանները, ցույց կտա նո-
րանոր, յուրահատուկ կոլլեկտիվներ:

Ընկ. Բուխարինի գեկուցման մեջ
կա մի կետ, վոր կարոտ ե առար-
կության: Մայակովսկու բանաստեղ-
ծության մասին խոսելիս, Ն. Ի.
Բուխարինը չմատնանշեց նրա իմ

կարծիքով փնտալար՝ «Հիպերբոլիդ-
մը» չափազանց ամուլթյունը, վոր
հատուկ ե այս ազգեցիկ և ինքնու-
րույն բանաստեղծին: Իբրև որինակ
այդ ազգեցույթյան յես վերցնում եմ
շատ շնորհալի բանաստեղծ Պրոկոֆյե
Վի վոտանավորը. կարծյոք նա յե
խմբագրել Մալչանովի «Գյուղացի-
ներ» վեպը, վորի մասին խոսվել ե
«Գրական զվարճանքներ»-ի մեջ և
վորի մեջ կուլտականման մուտիկը դո-
վաբանվել եր, իբրև մեր ժամանա-
կակից Միկուլա Սեյլյանինովի: Պրո-
կոֆյեյի վոտանավորի մեջ սլատկե-
րացնում ե մի վոմն Պայել Գրոմո-
վին, տեղն ու տեղը Միկուլայի նը-
ման, իբրև «մեծ հերոս»: Պայել
Գրամովը մի ապշեցուցիչ հրեշ ե՝

«Համալսարհային յերդ ե յերդ-
վում նրա մասին».

Թե ինչպես արշավում եր նա, ա-
վերելով սրով և հրով.

Ու սերը ասես դոներ լինեյին. նրա
համբավը վորոտում եր Դոնի յերկ-
րում,

Յեւ վարչականքի փոշուց մթազըն-
վում եր լուսինը:

Բերանը ասես մի նկուղ եր. նա
ընթանում եր, ամեն ինչ վերապրած.

Այդպես դայլն (անգամ) չի անց-
նում և լուսանը չի վազում:

Այտասկրները ասես մի-մի տալիս-
տալի եյիմ և բերանը մի դագաղ.

Նա ընթանում եր իբր կատարյալ
տեք տիրական անտառի ճանապարհ-
ներով և արահետներով:

Մի ալ վոտանավորի մեջ Պրոկոֆ-
յեւը պատկերացնում է մի այսպիսի
կարմրի՝

«Անդրանիկ վորդին իրեն հավասարը չունի.
Վոսմերը՝ մի-մի գերան, կուրծքը մի սար.

Նա մենակ կանգնած է, իբրև լավ-
լիս, խճոված հայաթում:

Բեյսերը՝ սանձափուկի նման (յեր-
կար),

Միրուքը՝ ինչպես մի տափան:

... Յոթ յուր աղջկերանց սիրում
է միաժամանակ»...

Ի դեպ «լավրա»՝ դա հարուստ,
մարդաշատ վանք է, գրեթե փոքրիկ
քաղաք, ինչպես որինակ՝ Կիյեվի և
Տրոյիցե-Սերգեյեվա Լավրաները:

Ահա թե ուր է հասցնում Մայա-
կովսկու հիպերբոլիզմը:

Պրոկոֆյեվի հիպերբոլիզմը բար-
դանում է, կարծյոք, Կլյույեվի հի-
պերբոլիզմով, վոր հանդես է յե-
կել, իբրեւ յերգիչ գյուղացիության
միատիքական եյության և «հողի» ա-
վելի ևս միատիքական «Իշխանու-
թյան»: Պրոկոֆյեվի ձիրքն յես չեմ
ժխտում. նրա ձգտումը դեպի եպիքա
կան պատկերավորությունը նույ-
նիսկ գովելի յե: Սակայն եպիկայի
այդ ձգտումը պահանջում է եպոսին
ծանոթանալը, և այդ ձգտման ուղու
վրա բնավ չի կարելի դրել այսպիսի
վոտանավորներ, ինչպես, որինակ,
Հետեյալը՝ (բառացի արձակ թարգ-
մանություն):

«Դաշտերով թռչում եր փառքը
(համբավը):

Գրոմոբոյը տիրապետում էր (իր)
ճակատագրին:

Յեթե փոթորիկները գնում էյին
դեպի աջը,

Գրոմոբոյը գնում էր դեպի ճախը:
Փոթորիկները նորից սկսում էյին
չնչել ցասումով, բոլոր լայնություն-
ների սոսկալի սառնամանիքով, (?)
յեթե փոթորիկները գնում էյին դե-
պի աջը, Գրոմոբոյն՝ ընդհակառա-
կը»:

Յես կարծում եմ, վոր դա արդեն
եպիկա չէ: Դա նման է հինավուրց
վոտանավորի ընդորինակման, — վո-
տանավոր, վոր հավակնություն ու-
ներ ծիծաղ չարժեկու՝

«Ապրում էյին Կիյեվում յերկու մտերի
ընկերներ,

Զարմանալի մարդիկ.

Առաջինը ծնվել էր հարավում,

Իսկ յերկրորդ՝ ընդհակառակը:

Առաջինը սաստիկ շատակեր,

Իսկ յերկրորդը՝ ապուշ:

Առաջինը վախճանվեց փորկապությունից,
Իսկ յերկրորդն՝ ընդհակառակը»:

Մեր խորհրդային պոեզիան իր գո-
յության կարճ շրջանում ձեռք է բե-
րել նշանավոր հաջողություններ,
բայց, ինչպես և արձակ գրականու-
թյունը, նա պարունակում է իր մեջ
բավականի մեծ չափով անհամ-ան-
համ ծաղիկներ (пустомбет), ծղոտ
ու հարդ:

Այն պայքարում, վոր մենք մղում
ենք արձակ գրականության բարձր
վորակի համար, մենք պիտի պայքա-
րենք թեմատիկայի թարմացման և
խորացման համար և բանաստեղծա-
կան լեզվի մաքրության և հնչեղու-
թյան համար: Պատմությունը մեզ ա-
ռաջ է քաշել իբրև նոր կուտուրայի
չինարարների, և այդ պարտավորեց-
ում է մեզ ավելի ևս ձգտել ընթա-
նալ առաջ և ի վեր, վորպեսզի աշ-
խատավորության ամբողջ աշխարհը
տեսնի մեզ և լսի մեր ձայները:

Աշխարհը մեծ յերախտագիտու-

թյամբ և չատ լալ կլսեր բանաստեղծների ձայները, յեթե նրանք յերաժշտագետներին հետ միասին փորձեյին հորինել յերգեր, — նոր յերգեր, վոր աշխարհը չունի, բայց, վոր պիտի ունենա: Բնավ ճիշտ է ասյն կարծիքը, թե հին ուսու, ուկրայնական, վրացական յերգերի յեղանակները միշտ վշտալի և թախծալի յեն: Յերեմի, թաթարներն ել, հայերն ել ամեն պարերգեր, կատակային, մարշային, խմբապարային, աշխատանքային և ուրիշների յերգեր. առկայն յես խոսում եմ միայն այն յերգերի մասին, վոր յես գիտեմ: Հին ուսական, վրացական, ուկրայնական յերգերն ունեն յերաժշտականության անսահման բազմատեսակութուն, և մեր բանաստեղծները պետք ե, վոր ծանոթանային յերգերի այդպիսի ժողովածուների հետ, ինչպես, որինակ, Շեյնի «Վելիկորոս» ժողովածուն, ինչպես Դրագոմիրովի և կամ այլ այդ տեսակի ժողովածուները:

Յես հավատացած եմ, վոր այդպիսի ծանոթութուն վողելության աղբյուր կծառայեր բանաստեղծներին և յերաժիշտներին, և վոր աշխատավոր ժողովուրդը կստանար գեղեցիկ նորա նոր յերգեր՝ մի ընծա, վորին վաղուց արժանի յե նա: Պետք ե նկատի առնել, վոր հին յեղանակը, նույնիսկ մի քիչ փոխված, բայց ըցված նոր խոսքերով, կստեղծի յերգ՝, վոր արաք և հեղտությամբ կյուրացվի: Հարկավոր ե միայն հասկանալ ուրիշ մի նշանակութունը. «Դուրինուչկա»-ի յեղանակը կարելի յե յերկարաձգել մի բոսնիյի տարածությամբ, բայց կարելի յե յերգել նաև պարերգի ուրիշով: Մեր յերիտասարդ բանաստեղծները չպետք ե խորչեն ժողովրդական յերգեր հորինելուց:

Դեպի առաջ և դեպի վեր՝ դա յե ուղին մեր ամենքիս համար, ընկերներ! դա յե այն միակ ուղին, վոր արժանի յե մեր յերկրի և մեր դարաշրջանի մարդկանց: Ի՞նչ ե նշանա-

կում «դեպի վեր» : Դա նշանակում է՝ բարձր կանգնել մանր-մունր անձնական հաշիվներից, բարձր կանգնել ինքնասիրությունից, առաջին տեղի համար պայքարելուց, ուրիշների վերաբերմամբ հրամանատարություն անելու ցանկությունից, — բարձր այնքոլորից, ինչ վոր ժառանգել ենք մենք անցյալի գոհակությունից և տխմարությունից : Մենք ներդրավ-ված ենք մի ահագին գործի մեջ, մի համաշխարհային նշանակություն ունեցող գործի մեջ և պետք է անձամբ արժանի լինենք մասնակցել այդ գործին : Մենք վորք ենք դրել մի դարաշրջան, վոր լի յե ամենամեծ տրագիկով և մենք պետք է պատ-րաստվենք, պետք է սովորենք պայ-ծառակերպելու այդ տրագիկով աշխարհի կատարյալ ձևերով, ինչպես այդ գիտելին պատկերաց-նել հնադարյան վորքերգագիրնե-րը : Մի բոպե անգամ չպետք է մո-ռանանք, վոր մեր մասին մտածում

է, վոր մեզ ականջ է դնում աշխա-տավոր ժողովրդի ամբողջ աշխարհը, վոր մենք աշխատում ենք աշխարհի ընթերցողի և հանդիսատեսի առաջ, վորպիսին դեռ գոյություն չի ու-նեցել մարդկության ամբողջ պատ-մության ընթացքում : Յես կոչ եմ անում Ձեզ, ընկերներ սովորել, — սովորել մտածել, աշխատել, և սո-վորել հարգել և զնահատել իրար, ինչպես զնահատում են իրար մար-տիկները պատերազմի դաշտերում և չվատնել ուժերը իրար հետ դատարկ բաների համար պարքարերու վրա, այն ժամանակ, յերբ պատմությու-նը կանչել է ձեզ անխնա պայքարի հին աշխարհի դեմ :

Համագումարում յեկույթ ունե-ցան ճապոնացի հիգիլատոն, չինու-հի հուլայն-չին և չինացի Եմի Չա-ուն : Այդ ընկերները մի տեսակ ձեռք պարզեցին իրար ի նշան հեղափոխա-կան պրոլետարիատի նպատակի միասնության, թե այն յերկրում,

վորի բուրժուազիան վարակվել է Յեվրոպայից խելացնոր իմպերիալիզմի սուր և մահացու տենդով, և թե մյուս յերկրում, վորի բուրժուազիան վոչ միայն մատնում է իր ժողովուրդը իմպերիալիզմի կեղեքողներին, այլ և ինքը բնաջնջում է նրան ի հաճույք ոտարազդինները իմպերիալիզմին. ճիշտ այնպես, ինչպես ուսկարվածատերերը և գործարանատերերը անում եյին այդ 18-22 թ.թ. ոգտվելով Յեվրոպայի, Ամերիկայի, Ճապոնիայի խանութպանների լպիրչ ոգնությամբ:

Համագումարը բավականաչափ պայծառությամբ չնչեց Արեվելքի յերկու յերկրների հեղափոխական պրոլետարիատի ներկայացուցիչների յեւույթները: Այդ կարող է բացատրվել միայն չափազանց մեծ հոգնածությամբ, վոր առաջացել է յերկու շաբաթվա աշխատանքից: Այդ աշխատանքը պահանջեց ուշադրության ահագին լարումը, վորը ի վեր-

ջա և հոգնեցրեց ուշադրությունը:

Ավարտելով իր աշխատանքը, գրողները համամիութենական համագումարը միաձայն հայտնում է իր անկեղծ շնորհակալությունը կառավարությանը, վոր թույլատրել է համագումարը և լայն ոգնություն է ցույցաբերել նրա աշխատանքին:

Գրողների համամիութենական համագումարը նշում է, վոր գրականագետների ներքին, իդեոլոգիական միացման հաջողությունները, վորոնք վառ կերպով և խոշոր չափով հայտաբերվեցին համագումարի նիստերում, հանդիսանում են լենինի-Ստալինի կուսակցության կենտրոնի 23-4 1932 թ. վորոշման արդյունքը, — վորտչում, վորով դատարարտվում են գրականագետների իմբակցությունները այնպիսի շարժառիթներով, վորոնք վոչ մի կապ չունեն մեր խորհրդային գրականության մեծամեծ խնդիրների հետ, և վորը սակայն չի մերժում միությունը:

ներ բազմատեսակ ստեղծագործական
աշխատանքից բղխող տեխնիկական
խնդիրների համար:

Գրողների համագումարը խորա-
պես ուրախացած և հպարտ է իրեն
զգում այն ուշադրութեամբ, վոր
նրան ցույց տվին ընթերցողների բազ-
մաթիվ պատվիրականությունները:
Պորհրդային սոցիալիստական Հան-
րապետությունների Միության դրող-
ները չեն մոռանա ընթերցողների ա-
ռաջադրած բարձր պահանջները և
ազնվորեն կջանան բավարարել այդ
պահանջները:

Գրականագետների մեծ մասը, վոր-
քան կարելի յե դատել նրանց ճառե-
րի կառուցվածքից, քաջ հասկացել
է, թե վորքան մեծ է մեր հայրենի-
քում գրականության նշանակու-
թյունը իր ամբողջութեամբ, հասկա-
ցել է, ինչ պարտականություններ
են դնում նրանց վրա ընթերցողների
կողմից համագումարի ամբողջ ըն-
թացքում անընդհատ հայտաբերված

խիստ, առկայն սրտագին վերաբեր-
մունքի ցույցերը գրականագետների
հանդեպ: Մենք իրավունք ունենք հա-
վատալու, վոր այդ սերն առաջացել
է մեր մատաղ գրականության ար-
ժանիքներից, նրա աշխատանքից, ըն-
թերցողն իրավունք է տվել մեզ պար-
ծենալու ընթերցողի և լեռնի կու-
տակության մեր հանդեպ ունեցած
վերաբերմունքով, առկայն մենք չպի-
տի չափազանցներ մեր աշխատանքի
նշանակությունը, — աշխատանք-վոր
դեռ շատ հեռու յե կատարյալ լի-
նելուց:

Ինքնադաստիարակվել ինքնաքննա-
դատության միջոցով, անընդհատ
սլաքարել դրքի վորակի համար,
պլանավորել աշխատանքը, — վոր
չուտով այդ հնարավոր է մեր արհես-
տում, — հասկանալ գրականությու-
նը, իրերի պրոցես, վոր ստեղծա-
գործվում է հայաբանություն և փո-
խադարձ պատասխանատվություն
դնում մեզ վրա մեր աշխատանքի

Համար,— պատասխանատուութիւնն
ընթերցողի առաջ,— ահա այն հե-
տեվութիւնները, վոր մենք պիտի
անենք ընթերցողի ցույցից համագու-
մարի ընթացքում:

Այս հետեվութիւնները պարտա-
վորեցնում են մեզ անմիջապէս ձեռ-
նարկել գործնական աշխատանքի կազ-
մակերպելու համամիութենական
գերականութիւնը, իբրեւ մի ամբող-
ջութիւն: Մենք պետք է՝

Մշակենք համագումարում տեղի
ունեցած յեղույթների ահագին և վե-
րին աստիճանի արժեքավոր նյութը,
վորպէսզի նա ծառայի մեզ իբրեւ
ժամանակավոր— յես ընդգծում եմ
ժամանակավոր խոսքը— իբրեւ ժա-
մանակավոր ձեռնարկ մեր հետագա
աշխատանքում. մենք պետք է ամեն
միջոցներով ամրացնենք և ընդլայ-
նենք համագումարում առաջա-
ցած կապը յեղբայրակից հանրապե-
տութիւնների գերականութիւնների
հետ:

Համագումարում Յեվրոպայի հե-
ղափոխական գերականութեան ներկա-
յացուցիչների առաջ հայտաբերվեց,
ի գերախտութիւն և ամօթ մեր գրա-
կանութեան, վոր մենք գիտենք
և կամ գրեթէ չգիտենք Յեվրոպա-
կան լեզուները: Նկատի ունենալով,
վոր մեր կապերը Յեվրոպայի գրող-
ների հետ անխուսափելիորեն պիտի
ընդարձակվեն, մենք պետք է
մտցնենք մեր աշխատանքի մեջ յեվ-
րոպական լեզուների ուսումնասիրու-
թիւնը: Այդ անհրաժեշտ է նաև այն
պատճառով, վոր հնարավորութիւն
կրանա մեր առջեւ բնագրով կարգալ
կենդանագրի մեծագույն յերկերը:

Վոչ պակաս կարեւոր է մեզ հա-
մար գիտենալ հայերի, վրացիների,
թաթարների, թյուրքերի և այլ ազգե-
րի լեզուները:

Մեզ անհրաժեշտ է մշակել մի ընդ-
հանուր ծրագիր սկանակ գրողների
հետ զբաղմունքներ կատարելու մա-
սին, ծրագիր, վորը դուրս վաներ

այդ աշխատանքից սուբյեկտիվիզմը, վոր չափազանց վնասակար է յերևոյաւորներէ համար: Դրա համար հարկավոր է միացնել («Աճում») և «Գրական Ուսում» հանդեսները մեկ ընդհանուր գրական մանկավարժական ամսագրի մեջ և գաղարեցնել, առանձին գրողների գրադմունքները սկսնակների հետ, քանի վոր այդ գրադմունքները գրեթէ արդյունք չեն տալիս:

Աշխատանք չատ կա. այդ ամենը միանգամայն անհրաժեշտ աշխատանք է:

Մեր յերկրում անհանդուրժելի յէ, վորպեսզի գրականութիւնը զարգանա ինքնահոսով. մենք պարտավոր ենք պատրաստել մեզ վոխանորդներ, մենք ինքներս պիտի ընդարձակենք խօսքի մշակների քանակը:

Հետո մենք պիտի խնդրենք կառավարութեանը քննութեան առնել Մոսկվայում «Համամիութենական թատրոն» կազմակերպելու անհրա-

ժեշտ հարցը, վորտեղ Խորհրդային Սոցիալիստական Հանրապետութիւններէ Միութեան բոլոր ազգերի դեմքաւորները հնարավորութիւն կը տանան ծանոթացնել մեզ, ուսնելիս, իրենց դրամատիքական գեղարվեստի հետ և այդ միջոցով իրենց յերկրի կուլտուրական կյանքի ներկայի և անցյալի հետ: Այդ թատրոնի հիմնական, մշտական գերասանական խումբը պիտի լինի ուս խումբը, վորը պիտի խաղա ազերբայճանցիներէ, հայերի, վրացիներէ, բելոռուսներէ, թաթարներէ և միջին Ասիայի, Կովկասի, Սիբիրի բոլոր այլ ազգութիւնների պիեսները ուսներն լեզվով ուրինակելի թարգմանութիւններով: Յեղբայրակից գրականութիւնների արագ աճումը մեզ պարտավորեցնում է ուշի ուշով հետեւել այդ գրականութիւնների աճմանը և կարող է մեծ չափով նպաստել ուս դրամատուրգիայի աճմանը:

Քննութեան առնել Մոսկվայում
«Կլասիկների թատրոնը» կազմակեր-
պելու խնդիրը, վորտեղ պիտի խա-
ղացվեն բացառապէս կլասիկական
րեպերտուարի պիւյեսները: Այդ պի-
յեսները, ծանոթացնելով հանդիսա-
տեսին և գրականագետներին հնա-
դարյան հուշների, միջնադարյան
խաղանացիների և անգլիացիների
դրամատիքական ստեղծագործու-
թյան նմուշների հետ, կբարձրացնեն
հանդիսատեսի պահանջը թատրոնի
վերաբերմամբ և գրականագետների-
նը իրենց վերաբերմամբ:

Մենք պետք է ուշադրութեամբ դարձ
նենք մարզերի գրականութեան վրա,
մասնավանդ Արեւելեյան և Արեւմտյան
Սիբիրի գրականութեան վրա, առ-
նելով վերջինը մեր ուշադրութեան
չըջանի մեջ, ապագրել կենտրոնի
հանդեսներում, հաշվի առնել այդ
դրականութեան նշանակութեանը,
իբրեւ գործոն, վոր կազմակերպում
է կուլտուրան:

Թույլ տալ Գրողների Միութեանը
արձան կանգնեցնել Հերոս-պիոներ
Պավել Մորոզովին, վորին ազգական-
ները սպանել էին նրա համար, վոր
վերջինս հասկանալով իր արյունա-
կիցների վնասակար գործունեյու-
թեանը, աշխատավոր ժողովրդի շա-
հերը բարձր էր դասել ազգականու-
թեանից:

Թույլատրել հրատարակել յեղբայ-
րակից ազգային հանրապետութեան-
ների ընթացիկ գեղարվեստական
գրականութեաններին նվիրված հան-
դեսներ (արմանախներ տարենը վոչ
պակաս չորսից և այդ հանդեսներն
անվանել «Միութեան» և կամ «Յեղ-
բայութեան» տալով նրանց յենթա-
վերնագիր՝

«Սորհրդային Սոցիալիստական
Հանրապետութեանների Միութեան
արդի Գեղարվեստական գրականու-
թեան ժողովածուն»:

Թանկագին ընկերներ.—

Մեր առջեւ կանգնած է մի ահագին

և բազմատեսակ աշխատանք հողուտ
մեր հայրենիքի, վորը մենք ստեղ-
ծում ենք, իբրեւ հայրենիք բոլոր
յերկիրների պրոլետարիատի:

Դեպի աշխատանք ընկերներ!

Կռու շարժքով կազմ ու պատ-
լաստ և կրակոտ՝ դեպի աշխա-
տանք:

Կեցցե խոսքի մշակների և մարտիկ-
ների մտերմական, ամուր միությու-
նը. կեցցե գրողների համամիութե-
նական կարմիր բանակը:

Յեւ ապա՝ կեցցե համամիութենա-
կան պրոլետարիատը, մեր ընքեր-
ցողը, ընքերցող-մտերիմ ընկերը,
վորին այնպիսի անսկզբ-յամբ սպա-
սելիս են յեղել 19 դարու Ռուսաս-
տանի ազնիվ գրողները և վորը այժմ
յերեւան ե յեկել, սիրով շրջապա-
սում ե մեզ և սովորեցնում ե աշխա-
տել:

Կեցցե Լենինի կուսակցությունը,
վոր հանդիսանում ե պրոլետարիատի

առաջնորդը. կեցցե կուսակցու-
թյան առաջնորդ Յոսիֆ ՍՏԱԼԻՆԸ:
(Բոլոն յերկար չընդատվող ծափա-
հարույթյուններ, վերածվող ուժա-
ցիայի: Սմենքը վեր են կենում յեր-
դում «Ինտերնացիոնալ»-ը):







ԳԻՆԸ 1 ՈՌԻԲ.

М. ГОРЬКИЙ
О СОВЕТСКОЙ ЛИТЕРАТУРЕ
Гиз ССР Армении, Эривань

ՀՀ Ազգային գրադարան



NL0166153

